



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3118

84
766

2137

206510

S. H.
L. U. C.

1863

XVI շ հ.

ՀԱՅՈՅ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ


ԿՈՎԿԵՍԵՅԻՍԵԿԱՆ—ՄԵՐԳԵՐԵՆԵԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

Նուէր Յովհաննէս Էւ Կարապէտ Խալա-
թեաններից՝ ի յիշատակ իրենց Եղբօր՝ պրօֆ.
Գրիգոր Խալաթեանի:

494 - 3/1578

2011

3118



84-2

2-66

uy

ԹԱՏՐԱԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԻԳԹՕՐ ՅԻԿՕԻ


ԹԱՐԳՄԱՆԵԼՑ **



Le drame est un miroir où se refléchet la nature.
Le théâtre est un point d'optique, où tout
doit et peut s'y reflécher sous la baguette
magique ds l'art et de l'harmonie.

V. HUGO.

1002
5094
9



ԶՄԻՌՆԻՆ

ՏՊԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՏԵՏԵԵՆՆ

1963

THE UNIVERSITY OF CHICAGO

PHYSICS DEPARTMENT

REPORT

The theory of the ...
The theory of the ...

PHYSICS DEPARTMENT
UNIVERSITY OF CHICAGO
1952

ՆՈՒՔԻ

ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

ԱՌ ՅԱՐԳՈՅ

ԹԱԳԻՈՐ ԱՂԱ ՅԱԿՈԲԵԱՆ

№ 2003

Ա Ն Ճ Է Լ Օ

Թ Ա Տ Ր Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն

Վ Ի Գ Թ Օ Ր Հ Ի Ի Կ Օ Ի

Ա Ռ Ա Ջ Ի Ն Օ Ր

Բ Ա Ն Ա Լ Ի Ն



Գիշերային հանգեսի մի համար չուսուորեալ մեկ դարեակց : Աջ - դին երամիշտով եւ շոյսոց շեցուն դաշտա մի , դարեակցին վերայ գանջով եւ կամարակաղ ճեմագաւիթով ի գեանայարկ , ուր հանգիսի մարդկան անց - ու օ դարձց կ'երեւի : Իրան քով մեկ քարէ նստարան : Չախ - դին ուրիշ նստարան մի որուն վերայ ի քուն մարդ մի կ'երեւի : Ի վերջ արարուածին կը շուսնայ :

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ .

Լ Ա Ռ Ի Ս Պ , հանդիւսի շանք հաճախարով .
Ա Ն Ճ Է Լ Օ Մ Ա Լ Ի Բ Ի Է Ր Ի , արտախալան պարէ -
գոյով ու սակիտ ուրարով . Հ Օ Մ Օ Տ Է Տ ,
ի + ու ն , աւճեւն գոցուած Բ ուրդէ Բ ուի
երկայն շրջաշէտարով , Վարդիւր Կարէր ,
+ ու ն աւ Վիկ կիւնար :

Լ Ա Ռ Ի Ս Պ . — Ա յ ո , հոս տէրը դուք
էք , աէր իմ , պերճափայլ Բ օտէս -
թան էք . կենաց ու մահու իշխանու
թիւն , ամեն կարողութիւն ու ազատու
թիւն ունիք : Վ Ե Ն Ե Տ Ի Կ Է Ն իրկուած

հոս , ու ուր որ կը տեսնուիք , կարճ
ծես թէ նոյն համապետութեան գէմ -
քըն ու մեծ վայելչութիւնն է որ կ'ե
րեւի : Արք փողոցէ մի կ'անցնիք , աէր
իմ , պատուհանները կը գոցուին ,
անցւորները կը պահուին , ու ամեն
տուներուն ներսի - դին կը դողայ :
Ա յ ո , այս այսպէս է , բայց ինչ
րեսչիա ալ դացած եմ : Հ ու ն ամենկ
չէ : Վ Ե Ն Ե Տ Ի Կ Է Ն Բատուաի հետ ինչպէս
որ կը վարուի , Պրեսչիաի հետ ալ
նոյնպէս չկրնար վարուիլ . Պրեսչիա
կը պաշտպանէ ինքզինքը : Այլ Ե -

նեաիկի բազուկը կը զարնէ, Պրես-
չիա կը խածնէ զայն, Բատուա կը
լիզէ: Ու այս ամօթ բան մ'է: Արդ
ուրեմն, թէպէտ հոս ամեն բանի տէր
էք, ու իմն ալ ըլնել կը կարծէք,
մտիկ ըրէք ինձ, տէր իմ, ես ճշմա-
րիտը պիտի խօսիմ ձեզ: Բայց տէ-
րութեան գործերու վերայ չէ ըսելի-
քըս, մի վախէք, այլ ձերիններուն
վերայ: Աւրեմն այո, կըսեմ թէ տա-
րօրինակ մարդ մ'էք դուք, ու բան
մի չեմ կրնար հասկնալ ձեզմէ. ինձ
սիրահարեալ էք ու ձեր ամուսնոյն
համար ալ կը նախանձիք:

ԱՆՃԻԼՕ. — Չեղ համար ալ կը
նախանձիմ, տիկին:

ԼԱ ԹԻՍՊ. — Ա՛, Տէր Աստուած,
հարկաւորութիւն չկայ այդ բանը ը-
սելու ինձ: Ու իրաւունք ալ չունիք
նախանձելու, ինչու որ ես ձերը չեմ:
Իրաւ հոս ես ձեր ամենակար սիրու-
հւոյն տեղը կ'անցնիմ, բայց դուք ա-
ղէկ գիտէք որ չեմ:

ԱՆՃԻԼՕ. — Այս հանդէսը շատ ջը-
ղեղէ, տիկին:

ԼԱ ԹԻՍՊ. — Ի՛, ինչ ընեմ, թատ-
րոնի խեղճ գերասանուհի մի ըլնելով
հրաման ունիմ իշխաններու հանդէս-
ներ տալ, ու այս գիշեր ալ կը ջանամ
իմ տէրն զբօսցնել. բայց կը նայիմ
որ այսօր այս բանին մէջ ալ չեմ
կրնար յաջողիլ: Չեր դէմքն իմ գի-
մակին սեւութենէն աւելի մութ է:
Որչափ ջահեր ու ճրագներ չեմ խնա-
յեր, այնչափ ստուերը ճակատնուդ
վերայ կը մնայ: Իմ երաժշտութիւնն
ալ քիչ մի չզուարթացնէր ձեզ, դո-

նէ: — Ի՛, խնդացէք քիչ մի տես-
նեմ:

ԱՆՃԻԼՕ. — Այո, կը խնդամ: —
Չըսիք ինձ որ այն երիտասարդը, որ
ձեզ հետ Բատուա եկաւ, ձեր եղ-
բայրն է:

ԼԱ ԹԻՍՊ. — Այո: Եւրքէ՛:

ԱՆՃԻԼՕ. — Գեո հիմակ իւր հետ
կը խօսէիք: Բայց անոր հետ եղող
այն միւս երիտասարդը ո՞վ էր:

ԼԱ ԹԻՍՊ. — Իւր բարեկամը: Վի-
չենցեան մի որ Անաֆէսթօ Վալէօֆա
կը կոչուի:

ԱՆՃԻԼՕ. — Ու ձեր եղբորն անու-
նըն ինչ է:

ԼԱ ԹԻՍՊ. — Ռօտօլֆօ, տէր իմ,
Ռօտօլֆօ: Արդէն հարիւր անգամ
մեկնած եմ ձեզ այս բանը: Վաղաչեմ
ասկէ աւելի անուշ բան մի չունիք ը-
սելու:

ԱՆՃԻԼՕ. — Կերեցէք, թիսպ, ալ
ուրիշ հարցումներ չեմ ըներ: Բայց
գիտէք որ երէկ Ռօտօնտան շատ ջը-
նորհալի կերպով խաղացիք, որ այս
քաղաքս շատ երջանիկ է ձեզ իւր մէջ
ունենալուն, և թէ բոլոր Իդալիան
որ կը զարմանայ ձեզ, թիսպ, կը նա-
խանձի այս Բատուացիներէն, զոր
դուք այնքան կը մեղքնաք: Ա՛, բոլոր
այն ամբօխը, որ կը ծափահարէ ձեզ
անհանգիստ կընէ իս: Կախանձէս կը
ճայթիմ երբ ձեզ այնչափ աչերու
համար աղւոր կը տեսնեմ: — Ա՛!
Թիսպ, ո՞վ էր այն մարդը որուն այս
գիշեր դրան մէջ կը խօսէիք:

ԼԱ ԹԻՍՊ. — Կերեցէք, թիսպ, ալ
ուրիշ հարցումներ չեմ ըներ: — Շատ

աղէկ կը պահէք ձեր խօսքը : — Այն մարդը , տէր իմ , Վերջիլիօ Թասքան էր :

ԱՆՃԵԼՕ . — Իմ տեղակալը :

ԼԱԹԻՍՊ . — Չեր նուիրակը :

ԱՆՃԵԼՕ . — Բայց ինչ կ'ուզէիք անորմէ :

ԼԱԹԻՍՊ . — Հիմայ թէ որ Հաճիմ ըսել ինչ կընէք :

ԱՆՃԵԼՕ . — Թիսպ

ԼԱԹԻՍՊ . — Բայց ոչ , իմ սիրտն չար չէ , ահա այս է պատմութիւնը : Գիտէք միթէ ես ո՞վ եմ . ոչինչ , ժողովրդեան մէկ աղջիկ , դերասանուհի մի , բան մի որ այսօր կը շոյէք ու վաղը կը կոտորէք , հետը խաղալով : Աստի ուրեմն , որչափ որ պղտիկ բան մ'եմ , ես ալ մայր մի ունեցայ : Գիտէք միթէ ինչ բան է մայր մի ունենալը . դուք ունեցած էք բնաւ մայր մի . դիտէք միթէ ինչ բան է մանուկ ըլնելը : Խեղճ մանուկ մի , տկար , մերկ , թշուառ , անօթի , մինակ , ու զգաս որ քովդ , շուրջդ , վերագ , քալող երբ կը քալես , կեցող երբ կը կենաս , ժպտող երբ կը լաս , կին մի կայ . . . — ոչ , դեռ չգիտցուիր անոր կին մի ըլնելը , — հրեշտակ մի կայ , որ քեզ կը դիտէ , որ քեզ խօսիլ կը սովորեցնէ , որ քեզ խնդալ կը սովորեցնէ , որ քեզ սիրել կը սովորեցնէ , որ քու մատներն իւր ձեռներուն մէջ կը տաքցնէ , մարմինդ իւր ծունկերուն մէջ , հոգիդ իւր սրբտին մէջ , որ իւր կաթը կը տայ քեզ երբ պղտիկ ես , իւր հացը երբ կը մեծնաս , իւր կեանքը միշտ որուն

դուն Մայր իմ , կ'ըսես , և որ քեզ Արդեակ իմ , կ'ըսէ , անանկ անուշ կերպով մի որ այս երկու բառերն զԱստուած կը զուարճացնեն : — Աստի ուրեմն , ահա ասանկ մայր մի ունէի ես : Խեղճ կին մի առանց ամուսնոյ , որ Պրեսչիա հասարակաց հրապարակներուն մէջ երգեր կ'երգէր . Աս ալ իւր հետ կը պտըտէի : Այս կերպով քանի մի սաակ կը նետէին մեզ : Ասանկ կըսկսի ահա իմ կեանքը : Մայրս սովորաբար Աթթա Մեւթա արձանին տակ կը կենար . Օր մի կ'երևի թէ առանց հասկնալու երգած երգին մէջ Անետիկի տէրութեան դէմ թշնամանական բառեր կար , որդուն վերայ մեր շուրջը կեցող գեսպանի մի մարդիկը կը խնդային . 'Այոյն միջոցին ասենակալ մի կանցնէր անկէ , տեսաւ , լսեց ու ետեէն եկող պաշտօնակալին ըսաւ , Ի կախաղան այս կին ! Անետիկի տէրութեան մէջ ասանկ բան մի շուտ կը կատարուի : Մայրս բռնուեցաւ նոյն հետայն : Այվեր կինը բան մի չէր ըսեր , ըսէր նէ ալ ինչ օգուտ . իսկ կեց ու աչքէն արցունքի հատ մի ձակտիս վերայ անկաւ , բռնեց իւր վզէն կախուած խաչելութիւնը ու կեցաւ որ կապուի : Օ ! այն խաչելութիւնը դեռ աչքիս առջևն է : Փայլուն փղնձէ շինուած էր այն , ու իմ անունն ալ , Թիսպ , խոշոր կերպով գաշոյնի մի ծայրովը գրուած էր անոր վարի դին . Աս այն ատեն տասն վեց տարու էի , ու այն մարդերուն մայրս կապելնին կը դիտէի լեղուս բռնուած ,

ձայնս քաշուած , չկրնալով լալ , անշարժ , պաղած , կէս-մեռ , երազի մէջ եղածի պէս : Բոլոր ամբոխն ալ ձայն չէր հանէր : Սակայն ատենակալին հետ պղտիկ աղջիկ մ'ալ կար , որուն ձեռնէն էր բռնած , այն աղջիկը յանկարծ 'ի դուր շարժեցաւ :
 () ! Ինչ մէկ անուշիկ աղջիկ էր ան , տէր իմ : Խեղճը ատենակալին ոտները անկաւ , այնքան լացաւ , այնքան լացաւ , անանկ պաղատող արցունքով ու անանկ անուշ աչերով որ մօրս համար ներումն առաւ : Այո , տէր իմ , երբ մայրս ազատեցաւ , բռնեց իւր խաչելութիւնը ու այն աղւոր աղջկան առաւ ըսելով . — Տիկին , պահեցէք այս խաչելութիւնը , այս ձեզ երջանկութիւն կը բերէ : Անկէ 'ի վեր մայրս մեռած է , սուրբ կին ! Ես հարուստ եղայ , ու կուզեմ նոյն աղջիկը տեսնել , այն հրեշտակը որ մայրս ազատեց : Ա՛վ դիտէ , հիմայ կին եղած է ան ու հետեաբար թշուառ : Գուցէ ինքն ալ հիմակ ինձ հարկաւորութիւն ունի : Այն ամեն քաղաքները ուր կերթամ , նուիրակը , ոստիկանութեան պաշտօնապետը կը կանչեմ ու կը հարցնեմ : Ու անոր որ նոյն կինը գտնէ տասն հազար ոսկի պիտի տամ : Ահա ինչու համար քիչ մ'առաջ Ալիքիլիօ Թասքա ձեր նուիրակին հետ կը խօսէի : Գո՛հ էք հիմայ :

ԱՆՃԷԼՕ . — Տասն հազար ոսկի ! Բայց նոյն կնոջ ինչ կրնաք տալ թէ որ գտնէք :

ԼԱԹԻՍՊ . — Իմ կեանքը թէ որ ուզէ :

ԱՆՃԷԼՕ . — Բայց ինչպէս պիտի ճանչէք զինքը :

ԼԱԹԻՍՊ . — Մօրս խաչելութենէն :
 ԱՆՃԷԼՕ . — Պահ ! հիմայ կորուսած է զայն :

ԼԱԹԻՍՊ . — () չէ ! Այս կերպով վաստկուած բան մի չկորսուիր :

ԱՆՃԷԼՕ . — (Հօժօտեյը փսնելով) — Տիկին , տիկին ! հոն մարդ մի կայ ! զիտէք որ մարդ մի կայ հոն :

ԼԱԹԻՍՊ . — (Բրտիւ բռնալով .) Ի՞նչ տէր Աստուած ! այո զիտեմ որ մարդ մի կայ հոն , որ դեռ կը քնանայ խորունկ քունով : Հա տեսնեմ ձեզ , կըրնայիք մի սըւորմէ ալ վախել : Իմ խեղճ Հօմօտէյն է ան , տէր իմ :

ԱՆՃԷԼՕ . — Հօմօտէյ ! ինչ բան է այն , Հօմօտէյ :

ԼԱԹԻՍՊ . — Այն , Հօմօտէյ , մարդ մի է , տէր իմ , ինչպէս այս , Աթիպալ , կին մի է , Հօմօտէյը , տէր իմ , կիթառ ջալող մ'է , զոր Աէն — Մարքի Գահերէցը , իմ բարեկամներէն մին , ուղղած է ինձ նամակով մի , զոր թէ որ ուզեմ կը ցուցնեմ ձեզ , անպիտան նախանձոտ , ու այն նամակին հետ ընծայ մ'ալ կայ :

ԱՆՃԷԼՕ . — Ինչպէս :

ԼԱԹԻՍՊ . — () , ճշմարիտ վենետացի ընծայ մի : Տուփ մի որ պարզապէս երկու սրուակ կը պարունակէ , մէկը սև մէկը ճերմակ : Ճերմակին մէջ պինտ զօրաւոր նարքօթիք մի կայ որ տասն երկու ժամ մահու նման քունով մի կը քնացընէ . սեին մէջ ալ թոյն կայ , այն սոսկալի թոյնէն զոր Մալասքիան Բարին կերցուց հա-

լուէի դեղճատի մի մէջ, ինչպէս գիտէք : Պ. Գահերէցը կը դրէ ինձ որ այն առիթ մի պատահած ատեն կրնայ ծառայել : Ասկէ դատ պատուելի Գահերէցը կիմացնէ որ այն նամակին ու ընծային բերող խեղճ մարդը ապուշ է : Տասն հինգ օր կ'ըլնի օր հոս է ան, ու տեսած ըլնել պէտք էիք զի՛նքը մինչև հիմայ, խոհանոցը փորը կը կշտացնէ, գտած անկիւնը կը քնանայ, կը ջալէ, կ'երդէ, ըստ պատելով որ Ա իշենցա վերադառնայ : Հիմայ Ա յենետիկէն եկած է : Բարէ մայրս ալ այսպէս կը թափառէր : Աւզածին չափ քովս պիտի սլահեմ զինքը : Այս գիշեր քիչ մի ատեն ընկերութիւնը զբօսցուց, բայց մեր հանդէսէն չախորժեր ու կը քնանայ : Ահա այսպէս պարզ բան մ'է այս :

ԱՆՃԵԼՕ. — Այս մարդուն համար պատասխանատու էք դուք :

ԼԱԹԻՍՊ. — Ենայինք, խնդալ կուզէք, ինչ աղւոր առիթ գտաք այսպէս ահաբէկ ըլնելու, կիթառ ջալող մի, ապուշ մի, մարդ մի որ կը քնանայ : Ասա ! տէր Բօտէսթա, կաղաչեմ ինչ ունիք : Չեր կեանքն ասոր - անոր վերայ հարցումներ ընելով կ'անցնէք : Ամեն բանէ կը կասկածիք : Ասա խա՛նձ է այս թէ վախ :

ԱՆՃԵԼՕ. — Թէ մէկն ու թէ մէկալը :

ԼԱԹԻՍՊ. — Ասխանձը կը հասկընամ : Ինքզինքնիդ երկու կին հսկելու ստիպեալ կը կարծէք : Բայց վախ, դուք տէրը, դուք որ ամենուն վախ կը տաք, ընդհակառակն :

ԱՆՃԵԼՕ. — Գողալուս առաջին պատճառ ահա այդ է : — (Թիսուի Եփեմալով ու ցած յայնով.) Մտիկ ըրէք, Թիսու : Այո, աղէկ ըսիք, այո, հոս ամեն բան կրնամ ընել ես, տէր, բռնաւոր ու իշխան եմ այս քաղաքին, ես այն Բօտէսթան եմ զոր Ա յենետիկ Բատուաի վերայ կը գնէ, այսինքն վաղրին ճիրանը դառնուկին վերայ : Այո, ամենակար եմ, բայց որչափ որ ինքնիշխան եմ, իմ վերայ ալ, կը լըսէք, Թիսու, մեծ, սոսկալի ու գիշերադէմ բան մի կայ, ու այս բանն Ա յենետիկն է : Աւզիտէք միթէ Ա յենետիկ ըսուածը ինչ բան է, խեղճ Թիսու, Ա յենետիկ, հիմայ կըսեմ ինչ է, կառավարութեան էնքիզիսիօնըն, Տասանց ժողովն է, Օ ! Տասանց ժողովը, ցած խօսի՛նք, Թիսու, դուցէ հոս ծակէ մի մեզ մտիկ կընէ : Այնպէս մարդեր զոր մեզմէ և ոչ մէկը կը ճանչէ, բայց որ ամեննիս կը ճանչեն, անանկ մարդեր, որ վայր մի տեսանելի չեն, բայց որ ամեն մահաբեմերու վերայ տեսանելի կըլնին, անանկ մարդեր որոնց ձեռներուն մէջն են ամեն գլուխները, ձերը, իմը, Տօթինը, բայց ոչ դատաւորի վերարկու, ոչ ուրար, ոչ պսակ ունին, բան մի չունին որ աչքի զարնէ, բան մի որով կարենաս ըսել : Ասալ անոնցմէ է : Ատո - շատ իրենց զգեստին տակ գաղտնի նշան մի. բայց ամեն վայր դորձակալներ, ամեն վայր արբանեակներ, ամեն վայր դահիճներ, անանկ մարդեր որ ժողովրդեան ուրիշ կերպարան չեն ցուցնէր, այլ

միայն Աէն - Մարքի գաւիթներուն տակայն տխուր սղինձէ բերանները (1), բերանք մահաբեր, զոր ժողովուրդը համր կը կարծէ, և որ շատ բարձր և շատ սոսկալի կերպով կը խօսին սակայն, ինչու որ ամեն անցնողի կը սեն։ Մասնեցէք. - Անգամ մի մատնուեցար, կը բռնուիս, անգամ մի բռնուեցար, ալ ամեն բան ընցած է։ Անեւտիկ ամեն բան, դաղտնի, ծածուկ, աստիճանով թեամբ կը կատարւի։ Աը գատապարտուիս, կը ստաննուիս, բան մի չանսնուիր, բան մի չլսուիր, ձայն մի չելներ, մէկը չըտեսներ, գատապարտեալը ակնակապ մի ունի, դահիճը գիմակ մի։ Մահաբեմի վերայ ինչ կը խօսէի հիմայ, կը վրիպէի։ Անեւտիկ մահաբեմի վերայ չմեռնիր մէկը, այլ կ'անհետանայ։ Յանկարծ ընտանիքի մի մէջ մէկը կը սպակոխ։ Ինչ եղաւ ան։ Գնտակները, հորերը, Օսթանո ջըրանցը գիտեն։ Երբեմն գիշերը ջուրին մէջ բանի մի անկներուն ձայնը կ'առնես։ Այն ատեն նայէ որ շուտ

անցնիս։ Սակայն պարհանդէսներ, խնճոյներ, լուսաւորութիւններ, երաժշտութիւն, կոնտոլներ, թատրոններ, հինգ ամիս բարեկենդան, ահա Անեւտիկ։ Գուք, թիսպ, աղւոր դերասանուհիս, ասոնք միայն գիտէք, իսկ ես, ատենակալ, մեկալներն ալ գիտեմ։ Մտիկ ըրէք դեռ։ Ամեն պալատի մէջ, տօժին պալատին մէջ, իմոյն մէջ, մէջը բնակողէն ծածուկ մէկ գաղտնի նրբանց կայ, որ ամեն սրահներուն, ամեն սենեակներուն, ամեն մահճակալներուն անդադար մատնիչն է։ մութ ճամբայ մի, որուն ոչ դուն ալ ուրիշները գիտեն դուռը, և որոնց շուրջ սողալն կիմանաս առանց գիտելու թէ ո՞ւր են։ գաղտնի խրամ մի, որուն մէջ անդադար մարդիկ կերթան կըզան ու բան մի կը կատարեն։ Ու այն անձնական վըրէժներն ալ որ ասոնց հետ կը խառնուին ու այս մութին մէջ ճամբայ կը գտնեն։ Շատ անգամ գիշերը կելնեմ կը նստիմ ու պատին մէջ ոտքի ձայներ կը լսեմ։ Ահա ինչ ճընշման տակ կ'ապրիմ, թիսպ։ Ես Ռատուաի վերայ եմ, բայց այս բաներն ալ իմ վերայ են։ Հրաման ունիմ սոսկալի ըլնելու։ Բոնաւոր ըլնելու պայմանաւ է որ իշխան եղած եմ։ Մէկու համար, որուն կուղէ ըլնի, ներումն մի ուզէք ինձմէ, ինձմէ որ բան մի չեմ կրնար զլանալ ձեզ, կը կորսընցունէք իս։ Պատժելու համար ամեն բան ներում է ինձ, ներելու համար ոչինչ։ Այո, այս սյուսէս է։ Բատուաի բոնաւոր, Անեւտիկի դե-

1. Անեւտիկ. Աէն. Մարքի գաւիթներուն տակ երկու սղինձեայ տալու ձեր կային բերաններն բաց։ Թէ որ մէկը ուրիշ անձ մի մատնել ուզէր, նոյնին անունը թու գթի մի վերայ կը դրէր ու տալու ձերուն բերանին մէջ կը նետէր զայն։ Այս կերպ մատնութեամբ կատարուի թեան բռնուելով, նշանաւած անձը, սոսկալի տանջանօք, որոնց հնօրման մէջ Անեւտիկ կը դերասաններ զբօղը աշխարհ, կը տանջուէր։

րի: Օ! շատ աղէկ կը հսկեն վերաս,
 մի վախէք: Ա! այն Տասանց ժողովը.
 Մինակ դործաւոր մի շտեմարանի մի
 մէջ փակեցէք ու այն դործաւորին փա-
 կան մի շինել տուէք. փականը լմըն-
 նալէն առաջ ահոր բանալին Տասանց
 ժողովին գրպանին մէջն է. Տիկին,
 տիկին! ինձ ծառայող պաշտօնեայն
 կը լրտեսէ իս, բարե տուող բարե-
 կամս կը լրտեսէ իս, իս խոստովան-
 ցընող քահանայն կը լրտեսէ իս,
 ինձ, կը սիրեմ քեզ, ըսող կինը,
 այո, թիսպ, կը լրտեսէ իս:

Լ.Ա. ԹԻՍՊ. — Ա! տէր իմ:

ԱՆՃԵԼՕ. — Գուք գեռ չ'ըսած էք
 ինձ որ իս կը սիրէք, խօսքս ձեզ հա-
 մար չէ, թիսպ: Այո, կրկին կըսեմ,
 ամեն ինձ հայողը Տասանց ժողովին
 մէկ աչն է, ամեն ինձ դպողը Տասանց
 ժողովին մէկ ձեռն է, ձեռն ահա ելի
 որ առաջ երկար ստեն կը շօշափէ,
 ու ետքը յանկարծակի կը բռնէ: Օ!
 պերճափայլ Բօտէսթա մ'եմ, անանկ
 չէ: Սակայն կրնայ ըլնել որ վաղն
 յանկարծ սենեակիս մէջ նուիրակ մի
 երեւի, ու ինձ իւր ետեէն եր-
 թալ հրամայէ, և այն որչափ թշուա-
 ռական նուիրակ մ'ըլնի՝ պարտիմ հե-
 տելիլ անոր. ո՛ւր. սատրերկրեայ վայր
 մի, ուրիչ ան մինակ պիտ'ելնէ: Տի-
 կին, Վենետիկէ ըլնելը մազէ մի
 կախուած ըլնել է: Օ! տխուր ու սոս-
 կալի վիճակ մի է վիճակս, տիկին,
 այսպէս միշտ ծռած ըլնել այն բոր-
 բոքեալ հնոցին վերայ, որուն Բատուա
 անուն կըտան, երեսս միշտ դիմակով
 մի ծածկած, իմ բռնաւորական պաշ-

տօնս կատարելու դատուալ, պատա-
 հարներէ, դդուշու թիւններէ, դար-
 հուրանքէ շրջապատեալ, միշտ պայ-
 թումէ մի վախելով, ու երկնչելով
 անդադար իմ դործով իսկ կարկամ
 մեռանելէ, ինչպէս քիմիաբան մի իւր
 թոյնով: — Մեղքեք իս և մի հարցը-
 նէք ինչո՞ւ կը դողամ, տիկին:

Լ.Ա. ԹԻՍՊ. — Ա, տէր Աստուած,
 ինչ սոսկալի վիճակ է եղեր ձեր վի-
 ճակը:

ԱՆՃԵԼՕ. — Այո, ես այն դործին
 իմ որով ժողովուրդ մի ուրիշ մէկ
 ժողովուրդ կը կտտէ: Այս տեսակ
 դործիները շուտ կը մաշին ու ստեպ
 կը կոտորին, թիսպ: Ա! թշուա՛ռ եմ.
 Ինձ համար աշխարհիս վերայ մէկ ա-
 նուշ բան կայ միայն, ու այն ալ
 դուք էք: Սակայն աղէկ կըզամ որ
 չէք սիրեր իս: Գոնէ ուրիշ մէկն ալ
 չէք սիրեր, անանկ չէ:

Լ.Ա. ԹԻՍՊ. — Ըէ, տէր իմ, չէ,
 հանդարտ եղիք:

ԱՆՃԵԼՕ. — Բայց այդ չէն կը նա-
 յիմ որ աղէկ չէք ըսեր:

Լ.Ա. ԹԻՍՊ. — Իրաւ որ կըցած իս պէս
 կըսեմ:

ԱՆՃԵԼՕ. — Ա! իմս մ'ըլնիք կը
 հաւանիմ, բայց ուրիշի մ'ալ մ'ըլ-
 նիք, թիսպ, չըլնի իմանամ որ ու-
 ըիշ մէկը...

Լ.Ա. ԹԻՍՊ. — Թէ որ ինձ այդպէս
 նայելով ինքզինքնիդ աղւոր կը կար-
 ծէք:

ԱՆՃԵԼՕ. — Ա! թիսպ, ե՞րբ պիտի
 սիրէք իս:

ԼԱ ԹԻՍՊ . — Երբ հոս ամեն մարդ սիրէ ձեզ :

ԱՆՃԻԼՕ . — Բարէ : Հող չէ , միայն թէ Բատուա մնացէք : Ես չեմ ուզեր որ Բատուաէն մեկնիք , կը լսէք : (Ի՞նչ որ դուք երթաք իմ կեանքն ալ պիտի երթայ : — Տէր Ատուած , մէկը դէպ ի մեզ կը գայ : Արդէն երկար ատեն է որ իրարու հետ խօսելնիս կրնան տեսնել . այս բանը կրնայ Վենետիկի կասկածներ տալ : Արթամ ես ալ : (Ա՛նձա՛ն ըստ Հոգեւոր Գրքի) Այս մարդուն համար սրատասխանատու էք դուք :

ԼԱ ԹԻՍՊ . — Այո՛ , իբր ի քուն մանկան մի համար :

ԱՆՃԻԼՕ . — Եկողը ձեր եղբայրն է : Չեղ անոր հետ կը թողում :

(Կ'երևայ)

ՏԵՍԱՐԱՆ Բ .

ԼԱ ԹԻՍՊ , ՌՕՏՕԼՖՕ (սեւեր հագած , ալ լեշեր , սեւ գեղարու մէ գեղարէն վերայ .)

ՀՕՄՕՏԷՅ (մշտ է +սն)

ԼԱ ԹԻՍՊ . — Ա՛ ! Ռօտօլֆօն է . Ա՛ ! Ռօտօլֆօ , դուն ես : Եկուր , ես քեզ կը սիրեմ : (Ա՛նձե՛կօնէն հարցած կողմէ դարձնալ .) Ընէ , բռնաւոր անմիտ , եղբայրս չէ , այլ սիրահարս է : — Եկուր , Ռօտօլֆօ , արի զինուորս , աղնիւ տարագիրս , վեհանձն ընկերս , ինձ նայէ աղէկ մի : Աղ որ ես , կը սիրեմ քեզ :

ՌՕՏՕԼՖՕ . — (Թխալ , . . .)

ԼԱ ԹԻՍՊ . — Ինչո՞ւ Բատուա գալ

ուզեցիր , կը տեսնես հիմակ , ահա թափարթին մէջ բռնուեցանք : Ա՛լ հիմա չենք կրնար մեկնիլ ասկէ . Քու վեճակով ուր որ երթանք ստիպեալ ես իմ եղբորն տեղ անցնելու : Այս Բօտէսթան քու խեղճ (Թխալին զարնըւերէ , այսպէս բռնած է մեզ ու չուզեր թողուլ : Բայց ես միշտ դողի մէջ եմ որ ով ըլնելիք չիմանայ : Օ՛ ! ինչ տանջանք : Սակայն հողս չէ , ինձմէ բան մի պիտի չկրնայ բրցունել այս բռնաւորը : Այս բանին վերայ ասպահով ես , անանկ չէ՞ , Ռօտօլֆօ : Բայց ես կ'ուզեմ որ անհանդիստ ըլնիս դուն՝ ես կ'ուզեմ որ նախանձիս անորմէ ամեն բանէ անաջ :

ՌՕՏՕԼՖՕ . — Աղնիւ ու սքանչելի կին մ'էք , (Թխալ :

ԼԱ ԹԻՍՊ . — Օ՛ ! ես կը նախանձիմ քեզ համար , կը հասկնամ , նախանձոտ եմ : Սա Ա՛նձե՛կօ Մալիբիէրին , սա Վենետացին , որ նախանձոտութեան վերայ կը խօսեր ինձ , որ նախանձոտ ըլնել կերեակայէ , սա մարդը ե ուրիշ շատ բաներ ալ կը խառնէ անոր հետ : Ա՛ ! երբ նախանձոտ կըլնի մէկը , տէր իմ , Վենետիկ աչքին չերեիր , Տասանց ժողով աչքին չերեիր , նուիրակներ , ըտեսներ , Օսթանօ ջրանցը , աչքին չեն երեիր . միայն մէկ բան կուեննայ իւր անջին , իւր նախանձը : Ես , Ռօտօլֆօ , քու ուրիշ կիներու հետ խօսիլը տեսնել չեմ կրնար , անոնց հետ խօսիլի միայն մեծ ցաւ կը տայ սրտիս : Ի՞նչ իրաւունք ունին անոնք քու խօսքերուն : Օ՛ ! հակառակսրդ մի Ռօտօլֆօ

Փօ, չըլնի որ հակառակորդ մի տաս
 ինձ, զի կը մնոցնեմ զան: Տես, կը
 սիրեմ քեզ, բոլոր կեանքիս մէջ մի-
 նակ սիրած մարդս դուն ես: Իմ
 կեանքը երկար ատեն արտում էր.
 Հիմայ կը փայլի: Դուն իմ ըյսն ես
 Քու սէրը արևի պէս իմ վերայ
 ծագեցաւ: Ուրիշ մարդեր իս ստու-
 ցած էին: ()! Ինչո՞ւ տասն տարի ա-
 ռաջ չհանդիպեցայ քեզ, ինձ անանկ
 կերևի որ մարմնոյս այն ամեն մասերը
 որ հիմայ պաղէն մեռած են, կենդանի
 պիտի ըլնէին դեռ: Ի՛նչ ուրախու-
 թիւն վայրկեան մի քեզ հետ մինակ
 ըլնել ու կարենալ խօսակցիլ: Ի՛նչ
 յիմարութիւն ըրինք Քատուա գալով:
 Ասանկ միշտ զգուշութեամբ ապրելու
 ստիպեալ ենք հիմակ: Ա! Ռոտովֆօ,
 այո, սիրահարս ես. եղբայրս մի! Վա-
 յէ, ուրախութենէս խենդ կը դառնամ
 երբ քեզ հետ սանկ հանդիսա կը խօ-
 սիմ: կը տեսնես որ խելք չկայ գլու-
 խըս: Դուն ալ կը սիրես ին:

ՌՕՏՕԼՖՕ. — Ո՞վ կրնայ չսիրել
 ձեզ, թիսպ:

ԼԱ ԹԻՍՊ. — Թէ որ ուրիշ անդամ
 ձեզ կըսես, գիտնաս որ կը սրդողիմ:
 Ա! տէր Աստուած, երթալ քիչ մի
 կոչնակահաներուս ալ երևիլ պէտք եմ:
 Բ՛նէ նայիմ, քանի մի ատենէ ի վեր
 կերպարանդ արտում կը տեսնեմ: Բայց
 արտում չես, անանկ չէ:

ՌՕՏՕԼՖՕ. — Ոչ, թիսպ:

ԼԱ ԹԻՍՊ. — Հիւանդ չե՞ս:

ՌՕՏՕԼՖՕ. — Ոչ:

ԼԱ ԹԻՍՊ. — Սախանձոտ չե՞ս:

ՌՕՏՕԼՖՕ. — Ոչ:

ԼԱ ԹԻՍՊ. — Այո, ես կուզեմ որ
 նախանձոտ ըլնիս. եթէ ոչ պիտի
 քսեմ որ իս չես սիրեր: Ե՛նայինք,
 արամութիւն պէտք չէ: Ա սա! բայց
 իմ սիրտը միշտ գողի մէջ է, դուն
 ալ անհանդիսա չես: Հոս մէկը չը-
 դիտեր իմ եղբայրը չըլնելդ:

ՌՕՏՕԼՖՕ. — Ոչ մէկը Անաֆէս-
 թօնն զատ:

ԼԱ ԹԻՍՊ. — Քու բարեկամը: ()!
 անկէ ապահով եմ: (Անաֆէսի Կ-
 լեօֆ-ը հարնէ.) Ահա, ճիշտ ինքը:
 Քանի մը վայրկեան քեզ իրեն պիտի
 յանձնեմ: (Ինքու) Պարոն Անա-
 ֆէսթօ, նայեցէք կաղաչեմ, որ կնոջ
 մի հետ չխօսի:

ԱՆԱՔԷՍԹՕ. — Անհոգ եղիք, տի-
 կին:

Լ. — Թիսպ կ'երբայ

ՏԵՍԵՆԱՆ Ք

ՌՕՏՕԼՖՕ, ԱՆԱՔԷՍԹՕ ՎԱԼԵՕՓԱ
 ՀՕՄՕՏԷՑ (Է 4-2)

ԱՆԱՔԷՍԹՕ. — (Թիսպին երբուր քե-
 րէլ.) ()! սքանչելի: — Ռոտովֆօ,
 երջանիկ ես, կը սիրէ քեզ:

ՌՕՏՕԼՖՕ. — Անաֆէսթօ, երջանիկ
 չեմ, ես չեմ սիրեր զինքը:

ԱՆԱՔԷՍԹՕ. — Ինչպէս, ինչ ը-
 սիր:

ՌՕՏՕԼՖՕ. — (Հօժօրէյը արնէլով)
 Սա հոն քնացող մարդը ո՞վ է:

ԱՆԱՔԷՍԹՕ. — Ոչինչ, այն խելճ
 երածիշտն է զոր գիտես:

ՌՕՏՕԼՖՕ. — Ա! այո, այն ապու-
 չը:

ԱՆԱՓԷՍԹՕ . — Եւ թիսսոյր չես սիրեր , կարելի՞ բան է այս . ինչ ըսիր հիմայ ինձ :

ՌՕՏՕԼՓՕ . — Ե ! բան մ'էր ըսի . Սոցիր դուն զայն :

ԱՆԱՓԷՍԹՕ . — Եւ թիսսոյր , սրաշտելի կի՞ն !

ՌՕՏՕԼՓՕ . — Իրաւ սրաշտելի՛ , թայց ես չեմ սիրեր զինքը :

ԱՆԱՓԷՍԹՕ . — Ինչպէս :

ՌՕՏՕԼՓՕ . — Մի հարցներ :

ԱՆԱՓԷՍԹՕ . — Ես , քու բարեկամը :

ԼԱԹԻՍՊ . — (Գալու՞մս զի՞նք է Ռօտօլֆօն զաշտելի ժայիտով) Եկայ միայն բառ մի ըսելու համար . կը սիրեմ քեզ : Հիմակ ալ կ'երթամ :

(Էլեւել ի՞նչե՛ս)

ԱՆԱՓԷՍԹՕ . — (Եւր երբեք չի՞րե՛լ .) Վայվեր թիսսոյ :

ՌՕՏՕԼՓՕ . — Կեանքիս անդունդը զաղտնիք մի կայ զոր ես միայն զիտեմ :

ԱՆԱՓԷՍԹՕ . — Օր մի քու բարեկամին կը յայտնես զայն , անանկ չէ : Եյս օր շատ տրտում կերեիս , Ռօտօլֆօ :

ՌՕՏՕԼՓՕ . — Եյս . Քիչ մի միանակ թող իս :

Անափեւթօ ի՛նչե՛ս : Ռօտօլֆօ դրան քով քարէ նստարանին վերայ իւր նստի՞մս գլուխով յեռնեցուն ձեռնառնէ : Երբ Անափեւթօ իւր ձեռնէ , Հօժօքէյ աւրել իւր բանայ , ի՛նչէ՛ , ասոյ յամբարայն ի՛նչե՛ս Ռօտօլֆօյին . որ դէռ մտածուիլէանց մէջ լաղաւոր է , երբն իւր ինչի՛նք :

ՏԵՍԱՐԱՆ Դ .

ՌՕՏՕԼՓՕ , ՀՕՄՕՏԷՑ :

(Հօժօքէյ յեռնել Ռօտօլֆօյին ուսին վերայ իւր շէնք : Ռօտօլֆօ իւր շաւնայ ու շարժանօք շէն իւր շէնք .)

ՀՕՄՕՏԷՑ . — Չեր անունը Ռօտօլֆօ չէ , այլ Եծծէլինօ տա Ռօմանա : Գուք հին ու Ռատուաի մէջ տիրող ընտանիքէ մ'էք , որ երկու հարիւր տարիէ ի վեր աքսորեալ է Ռատուաէն : Սուտ անունով մի հիմայ քաղքէ քաղաք կը թափառիք , երբեմն Վեներտիկի տէրութեան մէջ իսկ մտնել համարձակելով : Եծծն տարի կայ , ի Վեներտիկ , այն ատեն քսան տարուէիք դուք , օր մի մէկ եկեղեցւոյ մէջ սինտ աղւոր օրիորդ մի տեսաք . Մէն - Ժօրժ - Ել - Կրան եկեղեցւոյն մէջ : Գուք անոր ետեէն չդացիք . ի Վեներտիկ , կ'նոջ մի հետեւիլ դաշոյնի մի հարուած փնտրել է . բայց ստեղ նոյն եկեղեցին եկաք : Օրիորդն ալ եկաւ հոն : Գուք անոր զարնուեցաք , ան ալ ձեզ : Եւանց անոր անունը զիտնալու , ինչու որ բնաւ չդիտցաք , դեռ չէք զիտեր , ձեզ համար միայն Գարրինա կը կոչուի ան , միջոց դտաք անոր դիր զրեւու , ան ալ ձեզ սրատասխանելու : Չիչիլիա խաթունն անունով կ'նոջ մի տուն անոր հետ շատ անդամ տեսնուեցաք : Չեր ու անոր մէջ այս սէրը շատ սաստիկ եղաւ , բայց ան անարատ մնաց : Եյս օրիորդը աղնուական էր . ահա անոր վրայօք բոլոր զիտցածնիդ : Եղնուական Վե-

նետուհի մի, մէկ ազնուական Վենետ-
 տացիի կամ թագաւորի հետ կրնայ
 կարգուիլ. դուք Վենետացի չէք, ու
 ալ թագաւորութիւն ալ չունիք: Աք-
 սորեալ ըլնելով չէիք կրնար ալ յու-
 սալ անոր: Մէկ օր ժամագիր վայրը
 չեկաւ ան. Չէչիլիա խաթունը իմա-
 ցուց ձեզ որ կարգած էին զան: Սակայն
 ինչպէս անոր հօրը անունը չէիք գի-
 տեր, էրկանը անունն ալ չըկրցիք
 գիտնալ: Այն ատեն դուք Վենետի-
 կէն մեկնեցաք: Այն օրէն 'ի վեր բո-
 լոր Իգալիան ժուր եկաք, բայց սէ-
 րը միշտ ձեր հետն էր: Ինքզինքնիդ
 հաճութեանց, զբօսանաց, խենդու-
 թեանց, մոլութեանց տուիք: Ի զուր
 Ուրիշ կիներ սիրելու ջանացիք, և
 ուրիշներ սիրել իսկ կարծեցիք, ինչ-
 պէս այս դերասանուհին, Վաթիսպի:
 Դարձեալ 'ի զուր: Հին սէրը միշտ
 նորերուն տակէն երևան ելաւ: Ե-
 րեք ամիս կայ Բատուա եկած էք Վա-
 թիսպին հետ որ ձեզ իւր եղբորը
 տեղ կ'անցնէ Բօտէսթան, տէր Ան-
 ճէլօ Մալիբիէրին, Վաթիսպին
 զարնուեցաւ, և ձեզ ահա ինչ որ պա-
 տահեցաւ: Մէկ գիշեր, փետրվարի
 վեցին, Սօլինօ կամուրջին վերայ ձեր
 քովէն կին մի անցաւ, ձեռննուդ բըռ-
 նեց ու Սանբիէրօ փողոցը տարաւ ձեզ:
 Այն փողոցին մէջ Մակարրուֆի հին
 պալատին աւերակները կան, զոր Լ.ժ-
 ձէլինօ Գ. ձեր նախահայրը կործա-
 նած է, այն աւերակներուն մէջ մէկ
 խրճիթ կայ, այն խրճիթին մէջ Վե-
 նետիկի կինը գտաք, զոր կը սիրէք
 և որ կը սիրէ ձեզ եօթն տարիէ ի

վեր: Այն օրէն ի վեր, շարաթր ե-
 րեք անգամ իրարու հանդիպեցաք նոյն
 խրճիթին մէջ: Բայց այն թէ իւր սի-
 րոյն թէ իւր պատուոյն թէ ձեզ և թէ
 իւր էրկան հաւատարիմ մնաց: Ու միշտ
 իւր անունը պահելով: Հիմայ հինգ
 շարաթ է որ զինքը տեսած չէք: Ու
 ասոր սրտաճառն ալ ան է որ էրիկը
 կը կասկածի անորմէ, ու փակած կը
 պահէ զան: — Ատուան մօտ ենք.
 հիմալ արևը կը ծագի: — Դուք զան
 ամեն վայր կը փնտրէք, չէք գտներ ու
 բնաւ պիտի չգտնէք: — Կուզէք տես-
 նել զինքը այս գիշեր:

ՌՕՏՕԼՓՕ. — (Պշտեալ զան քիտէ-
 ւով) Ո՞վ էք դուք:

ՀՕՄՕՏԷՅ. — Ա՛հ հարցումներ, Չեմ
 պատասխաներ: — Բսել է որ այն կի-
 նը չէք ուզեր տեսնել այսօր:

ՌՕՏՕԼՓՕ. — Այո, այո, տեսնել
 զան. կուզեմ տեսնել զան. Աստու-
 ծոյ սիրոյն համար, տեսնել զան մէկ
 վայրկեան և մեռնիլ:

ՀՕՄՕՏԷՅ. — Կը տեսնէք:

ՌՕՏՕԼՓՕ. — Ո՛ւր:

ՀՕՄՕՏԷՅ. — Իւր տունը:

ՌՕՏՕԼՓՕ. — Բայց ըսէք, ան! ո՞վ
 է, անունը ի՞նչ է:

ՀՕՄՕՏԷՅ. — Իւր տունը կը սեմ:

ՌՕՏՕԼՓՕ. — Ա՛հ երկինքէն կիջնէք
 դուք:

ՀՕՄՕՏԷՅ. — Չեմ գիտեր: — Այս
 գիշեր լուսնին ելնելուն, — կէս-գիշ-
 շերին այսինքն, — Սանթօ-Ուռպանօ
 փողոցը, Ալպեր տը Պասօն պալատին
 անկիւնը գտնուեցէք: Ես հոն կը ընիմ:
 Ու կը տանիմ ձեզ, Կէս-գիշերին:

ՌՕՏՕԼՖՕ . — Շնորհակալ եմ :
Չէք ըսեր հիմայ ո՞վ էք դուք :

ՀՕՄՕՏԷՅ . — Ո՞վ եմ : Ապուշ մի :
ի՛նչե՛ս

ՌՕՏՕԼՖՕ . — (Ֆնակ) Ո՞վ է այս
մարդը : Օ ! ինչ հոգս : Ախ-դիշեր !
Ախ-դիշերին ! Որչափ երկար ատեն
կայ դեռ մինչև Ախ-դիշեր : Օ ! Գա-
դարինա խոստացած ժամուն համար
կեանքս կը տայի :

Էս թիւոյ է ճո՛ղ

ՏԵՍԱՐԱՆ Ե

ՌՕՏՕԼՖՕ . ԼԱԹԻՍՊ

ԼԱԹԻՍՊ . — Գարձեալ ես էմ Ռօ-
տօլֆօ : Բարի լոյս : Չկրցի երկար
ատեն առանց քեզ տեսնելու քնալ :
Աը տեսնես որ քեզմէ չեմ կրնար բաժ-
նուիլ . ամեն տեղ ետեէդ եմ . քեզ-
մով կը խորհիմ ու կ'ապրիմ : Աս քու
մարմնոյն ստուերն եմ , դուն իմոյն
հոգին ես :

ՌՕՏՕԼՖՕ . — Օգուշացիք , Թիսպ ,
իմ ընտանիքը դժնդակ ընտանիք մ'է :
Մեր վերայ մարդարէութիւն մի , ճա-
կատադիր մի կայ որ դրեթէ հարկաւ
հայրէ յորդի կը կատարուի : Մենք
մեզ սիրողը կը մեռցունենք :

ԼԱԹԻՍՊ . — Պինդ աղէկ , դուն ալ
իս մեռցուր : Ատքը : Միայն թէ սի-
րէ իս :

ՌՕՏՕԼՖՕ . Թիսպ . . .

ԼԱԹԻՍՊ . — Յետոյ քիչ մի կը լաս
ինձ համար : Ահա ասկէ աւելի բան
չեմ ուզեր :

ՌՕՏՕԼՖՕ . — Օ ! Թիսպ , հրեշտա-
կի մի սիրոյն արժանի էք դուք :

(Անոր յետեւ ինչպիսիե՛ս ու ի՛նչե՛ս շարժուայլ)

ԼԱԹԻՍՊ . — (Ֆնակ) 'Այլեքէք հեղ
մի ինչպէ՛ս կը թողու իս ու կերթայ :
Ռօտօլֆօ : Գնաց : Ի՞նչ ունի արդ-
եօք : (Գեղ ինտարաւոր ձայնով) Ա !
Հօմօտէյը արթնցեր է :

(Հօմօտէյը բարձրիկ խորը ի՛նչե՛ս)

ՏԵՍԱՐԱՆ Զ

ԼԱԹԻՍՊ , ՀՕՄՕՏԷՅ .

ՀՕՄՕՏԷՅ . — Ռօտօլֆօն լծծէլի-
նօ կը կոչուի , թափառականը իշխան
մի է , ապուշը ոգի մի , ի քուն մարդը
ի դարան կատու մի : Ահն դոց , ուն-
կըն բաց :

ԼԱԹԻՍՊ . — Ի՞նչ կըսէ այս մար-
դը :

ՀՕՄՕՏԷՅ . — (Ի-ր կեանքը ցոյցնե-
լով) Այս կիթարը թելեր ունի որ մեր
ուղած ձայնը կը տան : Մարդու մի
սիրտը , կնոջ մի սիրտը նոյնպէս թե-
լեր ունին որ կրնան ջալուիլ :

ԼԱԹԻՍՊ . — Ի՞նչ ըսել կուզեն ա-
սոնք :

ՀՕՄՕՏԷՅ . — Այս ըսել կուզէ ,
տիկին , որ եթէ , ըստ գիպաց , այսօր
աղւոր երիտասարդ մի , որ փեղոյրին
վերայ սև փետուր մի ունի , կը կոր-
սընցունէք , ես դիտեմ այն տեղը ուր
վաղն դիշեր կրնաք գտնել զան :

ԼԱԹԻՍՊ . — Կնոջ մի տունը :

ՀՕՄՕՏԷՅ . — Խարտեաշ :

ԼԱԹԻՍՊ . — Ինչ ! Ինչ ըսել կու-
զես , ո՞վ ես դուն :

ՀՕՄՕՏԷՅ . — Չեմ գիտեր :

ԼԱԹԻՍՊ . — () ! դուն կարծած մարդս չես . վայ գլխուս . Ա ! Բօտէսթան կը կասկածէր, դուն չար մարդ մ'ես . ո՛վ ես դուն . օ ! ո՛վ ես դուն . Բօտուֆօն կնոջ մի տունը ! այս գիշեր . Այս ըսել կուզես , հէ , այս է ըսածդ :

ՀՕՄՕՏԷՅ . — Չեմ գիտեր :

ԼԱԹԻՍՊ . — Ա ! Թշուառական . ա ! կը խաբես . Այեցէք հեղ մի ինտոր կը խաբէ . Ստակ տուած են քեզ այս բանին համար . () , տէր Աստուած ! Աւրեմն Թշնամիներ ալ ունիմ . բայց Բօտուֆօն կը սիրէ իս . Չէ , պիտի չկրնաս վախցնել սիրտս : Չեմ հաւատար քեզ . Պինդ կը կատղիս , ահանկ չէ , որ ըսածներդ աղդում մի չեն ըներ ինձ :

ՀՕՄՕՏԷՅ . — Գիտած էք անշուշտ որ Բօտէսթան , Տէր Անճէլօ Մալիբիէրին , իւր վզին շղթային ծայրը պղտիկ աղւոր բանուած գոհար մի ունի . Այն գոհարը մէկ բանալի է . Յուցէք իրեն որ իբր գոհար զայն ունենալ կը փափագիք . Ազդեցէք զայն առանց ըսելու թէ ի՞նչ պիտ'ընէք .

ԼԱԹԻՍՊ . — Բանալի՞ մի կըսես . Չէ , պիտի չուզեմ . Գարշելի մէկն է ան որ ինձ Բօտուֆօյիս վերայ կասկածներ տալ կուզէ . պիտի չուզեմ այն բանալին . Կորսուէ դնա . Քեզ մտիկ չեմ ըներ :

ՀՕՄՕՏԷՅ . — Ահա ճիշտ , Բօտէսթան ալ հոս կը գայ . Երբ բանալին առնէք , այն ատեն կը մեկնեմ ինչպէս գործածել պէտք էք զայն վաղն գի-

շեր . Քառորդէ մի դարձեալ կը գամ .

ԼԱԹԻՍՊ . — Թշուառական , չեմ ըսեր ուրեմն ի՞նչ կըսեմ . քեզ ըսի որ չեմ ուզեր այն բանալին . Այս Բօտուֆօին վերայ ապահով եմ . Այն բանալին , և ոչ միտքէս կ'անցունեմ . Բօտէսթային ալ բան մի չեմ ըսեր . Դուն ալ մի դար բնաւ , անօգուտ է պալդ , չեմ հաւատար քեզ .

ՀՕՄՕՏԷՅ . — Մէկ քառորդէ :

(Կերեայ)



ԼԱԹԻՍՊ . ԱՆՃԵԼՕ .

ԼԱԹԻՍՊ . — Ա ! տէր իմ , դուք էք Մէկը կը փնտրէք :

ԱՆՃԵԼՕ . — Այո , վերջիլիօ Թասքան որուն խօսք մի ունէի ըսելիք :

ԼԱԹԻՍՊ . — Է՛րսէք նայիմ , միշտ նախանձոտ էք :

ԱՆՃԵԼՕ . — Միշտ , տիկին :

ԼԱԹԻՍՊ . — Խենթ էք դուք . Ի՞նչ բանի կը ծառայէ նախանձոտ ըլնել . Այս թէ որ մէկը սիրէի՞ բնաւ նախանձոտ չէի ըլներ :

ԱՆՃԵԼՕ . — Հիմակ ասանկ կըսէք . ինչու որ մէկը չէք սիրեր :

ԼԱԹԻՍՊ . — Այո , կը սիրեմ մէկը .

ԱՆՃԵԼՕ . — Ո՛վ :

ԼԱԹԻՍՊ . — Չեզ :

ԱՆՃԵԼՕ . — Ի՞նչ կը սիրէք , կարելի՞ բան է այս . () , տէր Աստուած ! կը

1002
5095

Ծաղրէք արդեօք իս: ()! կաղաչեմ,
ըսածնիդ հեղ մ'ալ ըսէք:

ԼԱԹԻՍՊ. — Այլ սիրեմ ձեզ: (Ան-
ճէլց հիացմամբ աւոր ինչ ճօղեանայ, Լ. թիսայ
աւոր զնին շղթայն ինչ բռնէ.) ()! ինչ
պիտի ըլնի այս գոհարը, մինչև հիմա
տեսած չէի զայն: Ի՞նչ ալ աղւոր է:
Ի՞նչ աղւոր բանուած: Բայց այս
Պէնսիլվանիոյ գործն ըլնել պէտք է,
Աքանչելի! բայց, ըսէք, ինչ է այս.
կնոջ մի վայելելու բան կերևի ինձ:

ԱՆՃԵԼՕ. — Ա! թիսայ, մէկ բառով
սիրտս ուրախութեամբ լեցուցիք:

ԼԱԹԻՍՊ. — Աղէկ, աղէկ: Բայց
ըսէք, կաղաչեմ, ինչ պիտի ըլնի այս:

ԱՆՃԵԼՕ. — Բանալի մի է:

ԼԱԹԻՍՊ. — Ա! բանալի մի. իրաւ
որ բնաւ մտքէս չէր անցներ: Ա!
այո, կը տեսնեմ հիմայ, սըւով է ա-
հա որ կը բանան: Բանալի մի:

ԱՆՃԵԼՕ. — Այո, անուշ թիսայս:

ԼԱԹԻՍՊ. — ()! անանկ է նէ չեմ
ուզեր: Անէք:

ԱՆՃԵԼՕ. — Ի՞նչ, միթէ կուզէիք
զայն, թիսայ:

ԼԱԹԻՍՊ. — Գուցէ: Իբր աղւոր
բանուած գոհար մի:

ԱՆՃԵԼՕ. — ()! առէք:

(Բանալին շղթայն ինչ բռնէ)

ԼԱԹԻՍՊ. — Չէ, չեմ ուզեր ալ:
Եթէ բանալի ըլնելը գիտնայի չէի
հարցներ բնաւ: Չեմ ուզեր: Գուցէ
ձեզ հարկաւոր է:

ԱՆՃԵԼՕ. — ()! շատ քիչ: Սակայն
ես ուրիշ մ'ալ ունիմ: Կերգնում որ
կրնաք առնուլ այս:

ԼԱԹԻՍՊ. — Այ, չեմ ուզեր: Ի՞նչ
այս բանալիով դուռ կը բացուի: Այլ
նայիմ որ շատ պղտիկ է:

ԱՆՃԵԼՕ. — Պղտիկութիւնը հոգ
չէ. ասանկ բանալիները թագուն փա-
կաններու համար շինուած են: Այս
շատ դուռեր կը բանայ, ասկէ զատ
պառկելու սենեակ մ'ալ:

ԼԱԹԻՍՊ. — Իրաւ կըսէք: Ես
ըստ որում կը կամիք, կ'առնում:

(Բանալին շղթայն)

ԱՆՃԵԼՕ. — ()! շնորհակալ եմ,
ձեռնէս բան մի առիք դոնէ, շնորհա-
կալ եմ:

ԼԱԹԻՍՊ. — Այո, հիմայ կը յիշեմ
որ Պ. Մօնթլիւք Ֆրանսայի դեսպա-
նը ի վերջնեան, ճիշտ ասոր նման մի
ուներ: Այլ ճանչէք միթէ Պ. տը
Մօնթլիւք մարեշալը: Գիտնական
մարդ մի, անանկ չէ: Ա! դուք, աղ-
նուականքդ դեսպաններու հետ չէք
կրնար տեսնուիլ: Մտքէս ելած էր
այս բանը. հոգ չէ. կալուիներանե-
րուն բանին չէր գայր այն Պ. տը
Մօնթլիւքը: Անոնցմէ թէ որ ձեռք
անցնէ. . . . — Այայտէք, տէր իմ,
կարծեմ հոն վարը, ճեմագաւիթին
մէջ, վերջիլիս թասքան ձեզ կը
փնարէ:

ԱՆՃԵԼՕ. — Այլ կարծէք:

ԼԱԹԻՍՊ. — Անոր ըսելիք մը չու-
նէիք:

ԱՆՃԵԼՕ. — Անիծեալ ըլնի ան որ
իս ձեզմէ կը բաժնէ:

ԼԱԹԻՍՊ. (ճեմագաւիթը ցոյցնելով
աւոր.) Ահա հոն:

ԱՆՃԻԼՕ. — (Անոր յեանը պափնելով)
Ա! թիսպ, իս կը սիրէք ուրեմն:

ԼԱԹԻՍՊ. — Հոն, հոն: Բնասքան
ձեզ կը սպասէ:

Անձեւս ի՛նչեմայ: Հո՞ճուէ՞ք Բարսեղին ի՞նչը
Ի՛նչեմի: Թիսպ դեպ ի՞նչոր ի՛նչ լուէ:

ՏԵՍԱՐԱՆ Ը.

ԼԱԹԻՍՊ. ՀՕՄՕՏԷՅ.

ԼԱԹԻՍՊ. — Բանալին առի:

ՀՕՄՕՏԷՅ. — Տեսնեմ: (Բանալին + Էն-
նելով) Այո, այն է: — Բօտէսթաին
պալատին մէջ ճեմագաւիթ մի կայ,
որ Մօլինօ կամուրջին վերայ կը նա-
յի: Այս գիշեր հոն պահուեցէք:
Պարանի մի ետեւ, ծակի մի մէջ, վեր-
ջապէս ուր որ կուզէք: Այս կէս-գի-
շերէն երկու ժամ ետքը կը գամ
կ'առնեմ ձեզ:

ԼԱԹԻՍՊ. — (Քսակը աւոր Կալով.)
Ան այժմ առ սա. յետոյ աւելի աղէկ
կը վարձատրեմ քեզ:

ՀՕՄՕՏԷՅ. — Ինչպէս որ կ'ուզէք:
Բայց թող տուէք լմնցունեմ խօսքս.
Կէս-գիշերէն երկու ժամ ետքը կը
գամ կը գտնեմ ձեզ: Այս բանալիով
առաջին բանալու դուռն կը ցուցնեմ.
ու ես կերթամ: Մնացածը առանց ինձ
կրնաք ընել:

ԼԱԹԻՍՊ. — Առաջին դուռէն ետեւ
ի՛նչ պիտի գտնեմ:

ՀՕՄՕՏԷՅ. — Երկրորդ դուռ մի,
զոր նոյնպէս այս բանալին կը բանայ:

ԼԱԹԻՍՊ. — Երկրորդ դուռէն ե-
տեւ:

ՀՕՄՕՏԷՅ. — Երրորդ մի: Այս
բանալին ամենն ալ կը բանայ:

ԼԱԹԻՍՊ. — Երրորդէն ետեւ:

ՀՕՄՕՏԷՅ. — Կը աեսնէք ալ:



ՆՐԿՐՈՐԳ ՕՐ

ԽԱՉՆԼՈՒԹԻՒՆԸ

Ոսկեհուն ծիրանիոց դատեալ մեկ սենեակ : Ի մեկ անկիւն , ձախ գին , բաշտոցի մի վերայ ու սիւներոց ցեցունի մի տակ փառաւոր մեկ մահիճ : Յեցունին չորս անկիւնը շառագոյն վարագոյրեր կախուած են , որ կրնան գոցուիչ ու մահիճը բոշորոցին դահեղ : Աջ գին , անկիւնը , մեկ բաց դատուհան : Նոյն գին , սրահակին մեջ ծղտեալ մեկ դուռն : Քոյը , մեկ ծնկագիր , որուն վերայօք կախուած է դատեն փայջուն դցնձէ իաջեղութիւն մի : Խորը , երկու փեցկոց մեկ մեծ դուռ : Այս դրան ու մահիճին մեջ ուրիշ մեկ դջտիկ ու ջարդարուն դուռ : Սեցան , աթոռներ , ճրագներ , մեկ մեծ գարան : Գուրաց , դարտեղներ , ջանգաղատուներ , շուսի շոյս : Սեցանին վերայ անծեղիք մի :

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՅԱՔՆ , ՌԷՃԻՆԷԼԼԱ ,
Էրդը ՀՕՄՕՏԷՅ .

ՌԷՃԻՆԷԼԼԱ . — Այո , Տափն , իրաւ է : Այս բանը թարօթիւն , դիշերային պահապանը պատմեց ինձ : Դեռ նոր տիկնոջ վերջին անգամ վենետիկ երթալուն պատահեր է : Նուիրակ մի , մէկ անամօթ նուիրակ համարձակեր է մեր տիկինը սիրել , անոր դիր գրել ու հետը տեսնուիլ ուղել : Միտք առնուելու բան է այս : Տիկինն ալ զան վահտել տուեր ու շատ աղէկ ըրեր է :

ՅԱՔՆ . — (Օճիւղորէն Կոնստանտնուպոլիս .) Աղէկ , ՌԷՃԻՆԷԼԼԱ :

Բայց տիկինը իւր գիրքը կ'սպասէ , գիտե՞ս :

ՌԷՃԻՆԷԼԼԱ . — (Սեղանին վերայ Կոնստանտնուպոլիս կարէկէլ .) Իսկ մէկալ գէտքը , ան աւելի սոսկալի է , ու անոր վերայ ալ ստոյգ եմ : Այն խեղճ Բալինուրօն տան մէջ ըրտես մի տեսնելը տիրոջը իմացունելուն համար մի և նոյն դիշերը յանկարծակի մեռեր է : Թոյնով , կիմանաս : () ! Խրատ կը տամ որ խոհեմութեամբ վարուիս : Նախ և առաջ բերաննուս ելած խօսքէն զզուշանալ պէտք ենք այս պալատին մէջ . պատին մէջ միշտ մէկը կայ որ մեզ մտիկ կընէ :

ՅԱՔՆ . — Եւ նայինք , շուտ ըրէ

քիչ մի, ուրիշ ատեն կրնանք դտնել խօսելու: Տիկինը կըստասէ:

ՌԷՃԻՆԵԼԼԱՍ. — (Մեշտ կարգելով ունեւրը «եղանին վերայ ուղղած») (Թե որ այդչափ կ'աճապարես, գնա դուն առաջ: Աս ալ կը գամ: (Աստուծոյ Ուրիշ Երեւոյն Գրքի վերայ ուղղած) (Բայց կը լսե՞ս, Տափն, այս անիծեալ պալատին մէջ խրատ կը տամ քեզ որ բերանդ չբանաս: Միայն այս սենեակն է ուր մէկը կրնայ աստուծոյ ըլնել: Ա՛հ հոս հանդիստ է մարդ գունէ: Հոս կրնանք ուղղածնիս ըսել, այս է մինակ տեղը ուր երբ կը խօսի մէկը ստոյգ է որ իրեն մտիկ ընող չկայ:

(Մինչ այս վերջին բառերն արտասանել, ոչ քիչ պարտիս իրենած դարան թիւնիք վերայ ինքստանայ, ոնց թիւն բարոտի, որիկէ շօժօտէյ ինքնե ատանոյ Ռեճիւեւեւնի պետեւեւոյ ուղղածնը իրին ինքնոտի:)

ՀՕՄՕՏԷՅ. — Այս է մինակ տեղը ուր երբ կը խօսի մէկը ստոյգ է որ իրեն մտիկ ընող չկայ:

ՌԷՃԻՆԵԼԼԱՍ. — (Պարտաւարով) Տէր Աստուած:

ՀՕՄՕՏԷՅ. — Առէ, (վերջինն ինքնայ ու իւր սեւ խաւիչէ բաճկոնը ինքնոտի, «բոն վերայ արձաթէ բանուած էն ստեբե+ քերերը C. D. X. (S. ժ.) Ուրիշեւեւ քերերը ուղղածնը «ստուծոյ ինքնոտի:») Երբ մէկը մեզմէ մին կը տեսնէ, ու որուն կ'ուզէ ըլնի, նշանով մի իսկ մեզ տեսնելը կ'իմացնէ, գիշեր չեղած կը մեռնի այն մարդը: — Մեր վերայաք ժողովրդեան մէջ կը խօսուի,

գիտնալ պէտք ես դուն ալ որ այս ասանկ է:

ՌԷՃԻՆԵԼԼԱՍ. — Տէր Աստուած, բայց որ դուն էն մտաւ:

ՀՕՄՕՏԷՅ. — Ոչ մէկ դուռէ:

ՌԷՃԻՆԵԼԼԱՍ. — Տէր Աստուած:

ՀՕՄՕՏԷՅ. — Ամեն հարցումներուս պատասխան տուր, ու չըլնի որ խաբես: Գիտցած ըլնի որ կը մեռնիս: Բայց հիմակ: Ո՛ր կը հանէ այս դուռը: (Աստուծոյ վերջին քերքն ինքնոտի:)

ՌԷՃԻՆԵԼԼԱՍ. — Տիրոջս գիշերուան սենեակը:

ՀՕՄՕՏԷՅ. — (Մեծ դրոշմով + ինքնոտի) Ու այս:

ՌԷՃԻՆԵԼԼԱՍ. — Գաղտնի սանդուխտ մի, որ պալատին ճեմաղաւթին հետ կը հաղորդակցի: Բանալին տիրոջս քով կը գտնուի միայն:

ՀՕՄՕՏԷՅ. — (Ստուծոյ վերջին քերքն ինքնոտի) Ու այս:

ՌԷՃԻՆԵԼԼԱՍ. — Տիկնոջս աղօթարանը:

ՀՕՄՕՏԷՅ. — Այս աղօթարանը ուրիշ դուռ ալ ունի:

ՌԷՃԻՆԵԼԼԱՍ. — Ոչ: Աղօթարանը չորս պատի մէջ է: Ու մինակ մէկ վանդակապատ պատուհան ունի:

ՀՕՄՕՏԷՅ. — (Պարտաւարով) Որ ասոր շտկութեան մէջ է: Շատ աղէկ: Ալթսուն օտք պատ մի շիպ-շիտակ, Պրէնթան ալ ստորոտը: Վանդակը հոյակապ է: — Բայց այս աղօթարանին մէջ պղտիկ սանդուխտ մի կայ: Ո՛ր կը հանէ:

ՌԷՃԻՆԵԼԼԱՍ. — Իմ ու Տափնի սենեակը, տէր իմ:

ՀՕՄՕՏԷՅ . — Այդ սենեակը ուրիշ գուռ ունի :

ՌԵՃԻՆԵԼԼԱ . — Ոչ, տէր իմ : Վանդակապատ մի, ու մինակ այն գուռը որ աղօթարանը կ'իջնէ :

ՀՕՄՕՏԷՅ . — Տիկինդ գալուն պէս գուն սենեակդ պիտ'ելնես ու հոն պիտի կենաս առանց բան մի մտիկ ընելու ու առանց բան մի ըսելու :

ՌԵՃԻՆԵԼԼԱ . — Այր հնազանդիմ, տէր իմ :

ՀՕՄՕՏԷՅ . — Ո՛ւր է հիմայ տիկինդ :

ՌԵՃԻՆԵԼԼԱ . — Աղօթարանն, աղօթք կընէ :

ՀՕՄՕՏԷՅ . — Ետքը հոս պիտի գայ :

ՌԵՃԻՆԵԼԼԱ . — Այո, տէր իմ :

ՀՕՄՕՏԷՅ . — Հատ աղէկ : Գնա՛ւ Քայց լուծիւն : Ինչ որ պիտի պատահի հոս քեզ վերաբերեալ բաներ չեն : Թող աուր ամեն բան ըլնի առանց բերանդ բանալու : Ատուն մը կան հետ կը խաղայ, քու ինչ հոգը : Դուն իս տեսած չունիս, կայ ըլնելու քալ չես գիտեր : Ահա այսպէս : Ահմանամ : Թէ որ բերանէդ բառ մի կը հանես, պիտի լսեմ, ակնարկութի մի, պիտի տեսնեմ, շարժում մի, նըշան մի, ձեռք սխմել մի պիտի զգամ : Հիմայ գնա ալ :

ՌԵՃԻՆԵԼԼԱ . — ()! տէր Աստուած . ո՛վ պիտի մեռնի արդեօք հոս :

ՀՕՄՕՏԷՅ . — Դուն թէ որ խօսիս : (Հօժօքէյ նշան ընելով ՌԵՃԻՆԵԼԼԱ ծընկաւրի նշանով պղտի տանէն կը թելնի : Արեան կերևայ Հօժօքէյ Դարանին կը ծօղեանայ որ Դարձեալ ինչնիր վերայ կը Դարանայ աս

Տո՛ւ ճաճբայ մի երևան կը հանէ :) — Պարոն Ռօտօլֆօ, հիմայ կընաք գալ : Սանդուխը ինն ոտք է :

(Մոտի սանդուխին մէջտարի խոյնէր է շոտի : Ռօտօլֆօ իերէ :)

ՏԵՍԱՐԱՆ Բ .

ՀՕՄՕՏԷՅ . ՌՕՏՕԼՓՕ . (Վերադառնալ մի քաղաք .)

ՀՕՄՕՏԷՅ . — Մտէք :

ՌՕՏՕԼՓՕ . — Ո՛ւր եմ :

ՀՕՄՕՏԷՅ . — Ո՛ւր էք : — Գուցէ մահաբերմին յատակին վերայ :

ՌՕՏՕԼՓՕ . — Ի՞նչ ըսել կուզէք :

ՀՕՄՕՏԷՅ . — Եսա՛ծ էք միթէ, որ Քատուաի մէջ սենեակ մի կայ, սենեակ ահռելի, թէպէտ լեցուն ծաղիկներով, անուշ-հոտերով ու գուցէ սիրով ալ . ուր չկրնար մտնել մէկը . ու կուզէ ըլնի, զի մտնել հոն, անոր գուռը միայն կէս-բանալ, մահուամբ պատժելի ոճիր մի է :

ՌՕՏՕԼՓՕ . — Այո, Քատուաի կնոջ սենեակը :

ՀՕՄՕՏԷՅ . — Ճիշտ :

ՌՕՏՕԼՓՕ . — Բարի, այն սենեակը . . .

ՀՕՄՕՏԷՅ . Ահա հոն էք :

ՌՕՏՕԼՓՕ . — Քատուաի կնոջ տունը :

ՀՕՄՕՏԷՅ . — Այո :

ՌՕՏՕԼՓՕ . — Բայց սիրած կ'ընս :

ՀՕՄՕՏԷՅ . — Գաղարինա Պրակա-

տինի կը կոչուի, որ Անճէլօ Մալի-
քիէրի, Յատուաի Յօտէսթաին կինն է.
ՌՕՏՕԼՔՕ. — Կարելի՞ բան է. Գա-
դարինա Պրակատինի Յօտէսթաին
կինը :

ՀՕՄՕՏԷՅ. — Թէ որ կը վախէք,
դեռ ատեն կայ, ահա դուռը ետ դար-
ձէք :

ՌՕՏՕԼՔՕ. — Վախեմ ինձ համար,
ոչ, ալ իրեն համար : Չեր վերայ
ո՞վ պատասխանատու է ինձ :

ՀՕՄՕՏԷՅ. — Ո՞վ պատասխանատու
է ինձ համար, հիմայ կըսեմ, ըստ
որում կուզէք ալ : — Եթէ որ կայ,
կէս-գիշերն մէկ ժամ անցած դուք
Սան-Բրոսո չիմօ հրապարակէն կանց-
նէիք մինակ : «Երբ միջոցին եկեղե-
ցւոյն ետին սուրերու ձայներ ու դո-
չումներ լսելով հոն վազեցիք :

ՌՕՏՕԼՔՕ. Այո, ու երեք մարդաս-
պաններու ձեռքէն դիմակաւոր մարդ
մի ազատեցի զոր պիտի սպաննէին...

ՀՕՄՕՏԷՅ. — Եւ որ առանց իւր ա-
նունը ըսելու ձեզ ու առանց շնորհա-
կալ ըլնելու գնաց : Այն դիմակաւոր
մարդը ես էի : Այն գիշերէն ի վեր
բարութիւն մ'ընել կ'ուզէի ձեզ,
Պարոն Եծծէլինօ : Գուք իս չէք
ճանչեր, բայց ես ձեզ կը ճանչեմ :
Ուստի ուզեցի ձեր սիրած կնոջ մօ-
տեցնել ձեզ : Այս երախտադիտու-
թեան նշան մ'է : Հիմակ ալ վստահ
էք վրաս :

ՌՕՏՕԼՔՕ. — Այո, Օ ! շնորհա-
կալ եմ. կը վախէի որ այն կնոջ վե-
րայ մատնութիւն մի կըլնի : Սրտիս
վերայ բեռ մի կար զոր դուն վերու-

ցիր : Ա ! իմ բարեկամն ես դուն,
յաւիտեան բարեկամս : Օ ! ալ աւելի
պիտի չկրնայի ապրել առանց Գա-
դարինան տեսնելու : Ինքզինքս պիտի
սպաննէի, կը տեսնե՞ս, ինքզինքս պի-
տի դատապարտէի : Ես քու կեանքը
միայն ազատեցի, դուն իմ սիրտը իմ
հոգին կ'ազատես :

ՀՕՄՕՏԷՅ. — Ուրեմն կը կենաք :

ՌՕՏՕԼՔՕ. — Այո, այո, քեզ կը
վստահիմ կըսեմ : Օ ! տեսնեմ զինքը.
մէկ ժամ, մէկ վայրկեան տեսնեմ
զինքը. — բայց չէք հասկնար ինչբան
է զինքը տեսնելը : — Ուր է հիմայ :

ՀՕՄՕՏԷՅ. — Հոն, իւր աղօթա-
րանը :

ՌՕՏՕԼՔՕ. — Ուր պիտի տեսնուինք :

ՀՕՄՕՏԷՅ. — Հոս :

ՌՕՏՕԼՔՕ. — Ե՞րբ :

ՀՕՄՕՏԷՅ. — Քառորդէ մի :

ՌՕՏՕԼՔՕ. — Օ ! տէր Աստուած :

ՀՕՄՕՏԷՅ. — (Ան զո՞ւրեք ձե-
զի ցոյնէլով առնէր .) Ուշ գրէք : Հոն,
այն ծայրը Յօտէսթաի սենեակն է :
Հիմակ ի քուն կայ ան. ու այս միջո-
ցիս պալատիս մէջ Գադարինա տիկի-
նէն ու մեզմէ զատ արթուն մէկը չկայ :
Եւ անանկ կը կարծեմ որ այս գիշեր
վտանդ մի չունիք : Իսկ մեզ ծառայող
մուտին գաղտնիքը, զոր ես միայն գի-
տեմ, չեմ կրնար հաղորդել ձեզ.
սակայն առաւօտուն դիւրաւ կրնաք
փախչիլ : (Դեռ է երբ երեւել .) Ու-
րեմն, ահա, այս էրկանը դուռն է :
Իսկ ձեզ Պարոն Ռօտօլֆօ, որ սի-
րահարն էք, չեմ խրատեր փախչելու
համար այս պատուհանէն փորձ փոր-

ձեզ : Վերջն-վայր ութսուն ասք է ,
ու գետն ալ ստորոտը : Հիմակ ալ
կ'երթամ ես :

ՌՕՏՕԼՓՕ . — Գաղարինան քառոր
դէ մի պիտի դայ ըսիք :

ՀՕՄՕՑԷՅ . — Այո :

ՌՕՏՕԼՓՕ . — Մինակ պիտի դայ :

ՀՕՄՕՑԷՅ . — Գուցէ ոչ : Քանի մը
վայրկեան մէկ դի պահուեցէք :

ՌՕՏՕԼՓՕ . — Ո՛ւր պահուիմ :

ՀՕՄՕՑԷՅ . — Մահճին ետին : Ա!
չէ , աւելի աղէկ է սլատշղամին վերայ :
Ու ետքը երբ յարմար կը դատէք ,
կերեիք : Կարծեմ աղօթարանին մէջ
աթոռներ կը շարժին : Գաղարինա
տիկինը հիմակ ուր է նէ կը դայ :
Քաճնուերու ատեն է ալ : Մնաք բա-
րով :

ՌՕՏՕԼՓՕ . — ((Գաղարինա + Գլխ .)
Գուն ուլ որ ես , ասանկ ծառայութե-
նէ մի ետե , ամեն սենեցածս , մինչև
անդամ կեանքս չեմ խնայեր քեզմ :

(Գաղարինա վերայ կերեալ է և պահուի :)

ՀՕՄՕՑԷՅ . — (Թաղարինա աւել-
իւն գալով , ինչիւրէն .) Արնը ալ ձերը
չէ , տէր իմ :

(Այլ նայի որ արդեօր ՌՕՏՕԼՓՕ ինչիւն
նէ վիշտ . ասան ծոցն նամայի և
հանէ , սեղանին վերայ ինչիւն , ու
դուրս կենէ թագուն խաբէն որ կիկն
իսկիւ վերայ ինչ գոյսի : Աղօթար-
անի տանէն Գաղարինա ու Տափն ինչ
ճիւղէ : Գաղարինա վերէնիկ Տի-
նանց շփեպիւնէրով :)

ՏԵՍԱԲԱՆ Գ .

ԳԱԴԱՐԻՆԱ . ՏԱՓՆ .

ՌՕՏՕԼՓՕ (Գաղարինա վերայ ի պահ :)

ԳԱԴԱՐԻՆԱ . — Մէկ ամսէ աւելի է
Գիտե՞ս , Տափն , որ մէկ ամսէ աւել-
լի է : Օ ! ուրեմն ալ յոյս չկայ : Բայց
դոնէ թէ որ կարենայի քնանալ , դու-
ցէ երազիս մէջ կը տեսնէի զինքը .
սակայն քունն ալ աչքէս կտրուած է :
Ռէճիսնէլան ո՛ւր է :

ՏԱՓՆ . — Դեռ հիմակ իւր սենեակը
դնաց ու աղօթքի կեցաւ : Կուզէք որ
կանչեմ , տիկին :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Չէ : Թող աղօթէ :
Քարէ , ինձ համար աղօթելն ալ օ-
գուտ մի չըներ :

ՏԱՓՆ . — Սա պատուհանը գոցեմ ,
տիկին :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Ու ասոր պատճառն
ալ ան է , սիրելի Տափն , որ շատ
ցաւերու մէջ եմ : Ա ! հինգ շաբաթ է ,
հինգ անհատնում շաբաթ որ տեսած
չեմ զինքը : — Չէ , մի գոցեր պա-
տուհանը : Գոնէ անկէ քիչ մի օդ
կ'առնում : Գլուխս կրակներու մէջ է :
Քանէ նայէ : — Ու ալ պիտի շտեմ-
նեմ զինքը : Գոցուած , բանտի մէջ
պահուած եմ : Ալ յոյս չկայ : Այս
սենեակին մէջ մտնել , մահու ոճիր
մ'է : Օ ! չէ , տեսնել ալ չեմ ու-
զեր զինքը : Ան հոս ! Այս բանը
մտքէս անցունելու միայն սոսկում կը
բերէ ինձ . վայ ինձ , Տէր Աստուած .
ուրեմն այս սէրը շատ մեղսալից էր ,
Աստուած իմ : Ինչո՞ւ Քասուա եկաւ

ան : Ինչո՞ւ ես ալ բռնուեցայ այն եր-
ջանկութենէն որ ասանկ քիչ պիտի
տեւէր : Արբեմն-երբեմն մէկ ժամ մի-
այն կը տեսնէի զինքը : Այս մէկ ժա-
մը , այսչափ կարճ , այսչափ անցուկ ,
իմ միակ լոյսանցոյցն էր , ուրկէ քիչ
մի օդ ու քիչ մի արև կը տեսնէր
կեանքս : Իսկ հիմակ ամեն բան դոց-
ուած է : Ալ պիտի չտեսնեմ այն ե-
րեսը որ կեանք կը տար ինձ : () !
Ռօտօլֆօ ! Տաֆն , ըսէ ինձ իրաւը ,
դուն ալ անանկ չե՞ս կարծեր որ ալ
պիտի չտեսնեմ զինքը :

ՏԱՓՆ . — Տիկին . . .

ԳԱԴԱՐԻՆԱ . — Ու այս ալ կայ որ
եւ ուրիշ կիներու-պէս չեմ : Հաճու-
թիւններ , հանգէսներ , զբօսաններ ,
աստնք ամենը բան մի չեն ազգեր ինձ :
Աս , Տաֆն , եօթն տարիէ ի վեր
միայն մէկ մամտուք ունիմ սրտիս
մէջ , սէրը . միայն մէկ զգացում ,
սէրը . միայն մէկ անուն , Ռօտօլֆօ :
Արբ աչքս իմ վերայ կը դարձունեմ ,
Ռօտօլֆօն կը տեսնեմ , միշտ Ռօտօլ-
ֆօն , անդադար Ռօտօլֆօն : Հոգիս
անոր նմանութեամբ եղած է . կը
տեսնե՞ս , եթէ ոչ այսպէս չէի ըլնէր :
Ահա եօթն տարի է որ կը սիրեմ
դան : Այն ատեն դեռ շատ պրզտիկ
էի ես : Ի՞նչպէս անդթուութեամբ կը
կարգեն մեզ մեր ծնողքը : Բարէ .
անանկ էրիկ մ'ունիմ , որուն խօսիլ
անգամ չեմ համարձակիր : Ի՞նչ , կար-
ծես որ այս երջանիկ կեանք վարել է :
Այս ինչ վիճակ է իմ վիճակը . բայց
դոնէ թէ որ մայրս կենդանի ըլնէր :

ՏԱՓՆ . — Փարատեցէք , տիկին ,

կաղաչեմ , այս տրտում մամտուքը :

ԳԱԴԱՐԻՆԱ . — () ! ասոր նման գի-
շերներ , Տաֆն , ան ու ես ինչ անուշ
ժամեր անցուցած ենք , դիտե՛ս : Ի՞նչ ,
յանցաւոր եմ միթէ այս բոլոր ըսած-
ներովս : Ոչ , անանկ չէ՞ : Ալ հերիք
է ուրեմն , կը նայիմ որ իմ տրտու-
թիւնը քեզ ալ ցաւ կը տայ : Գնա
ալ պառկէ : Ռէճիսէլլան քեզ կըս-
պասէ :

ՏԱՓՆ . — Կրնա՞ք միթէ , տիկին . . .

ԳԱԴԱՐԻՆԱ . — Այո , մինակ կը կե-
նամ ես : Դուն հանդիստ քնացիր :

ՏԱՓՆ . — Աստուած ձեր հետն ըլնի՞ք
այս գիշեր , տիկին :

(Աշօրարանի ներսէն իջնալ . . .)

ՏԵՍԱԲԱՆ Դ .

ԳԱԴԱՐԻՆԱ , ՌՕՏՕԼՖՕ . (պարզ-
գանձն վերայ)

ԳԱԴԱՐԻՆԱ . — (Միեակ .) Արդ մի
կար զոր լան կ'երդէր : Իմ ոտները
նստած ինչ անուշ ձայնով կ'երդէր :
() ! անանկ վայրկեաններ կըլնին որ
զինքը տեսնել կուզեմ : Ասոր համար
արիւնս կը տայի : Մանաւանդ այն եր-
գին կտորը որ իմ վերայ էր : (Միեակ .
Ֆարադ .) Կարծեմ աս է անոր ե-
ղանակը : (Միեակ . Եղանակ թէ կը շ-
լէ .) Բայց բառերն ալ յիշել կուզէի :
() ! Հոգիս կը տայի որ մէկ անգամ ա-
նոր երգերը լսեմ , մէկ անգամ միայն !
առանց զինքը տեսնելու , անդիէն , ու-
ղածնուն չափ հեռուէն : Բայց իւր ձայն-
քը , իւր ձայնը լսեմ :

ՌՕՏՕԼՖՕ . — (Պատգամին վրայէն
որ պահո՞ւած է .)

(Ա՛նդէ)

Հողիս սրտիդ է նուիրուած ,
Արնամ ապրիլ միայն քու քով .
Օ՛ր միասին է մեզ կապած
Ճակատագիրն անուշ կապով .
Գաշնակութիւնն դուն ես քնար ,
Գուն ես զեփիւռն ու ես եմ ծառ ,
Գուն ես ժպիտն ու ես պրկուն ,
Ես սէր իսկ դու գեղեցկութիւն :

ԳԱԴԱՐԻՆԱ . — (Այլիւր յիշեցնան անկ
նէլ .) Տէր Աստուած :

ՌՕՏՕԼՖՕ . (Արդե՛հ կէլ յիշա պահ
ո՞ւած .)

Մինչ ժամն անդուծ
Աերթայ անյայտ ,
Իմ երդ անդատ
Ելիդէ ի մութ
Քու սուրբ ճակատ :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Ռօտօլֆօ :

ՌՕՏՕԼՖՕ . — (Երեւելով ո՞ւ վերաբ
րն վերայէն նեպելով .) Գաղարինա :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Դո՛ւք հոս . այս ինչ
պէս բան է . դո՛ւք հոս : Օ ! տէր Աս
տուած . ցնծումէս ու սոսկումէս կը
մեռնիմ հիմայ : Ռօտօլֆօ . դիտէք
միթէ ո՛ւր էք : Աը կարծէք որ հոս հա
սարակ սեւեակի մը մէջ էք : Թշուառ ,
կեանքդ վտանգի մէջ է :

ՌՕՏՕԼՖՕ . — Ի՞նչ հողս . ձեզ չը
տեսնելովս պիտի մոռնէի . դո՛նէ աւե
լի անուշ է ինձ ձեզ տեսնելով մեռ
նիլ :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Պինտ աղէկ ըրի՛ր
ուրեմն : Այո իրաւունք ունիս դալուդ :
Իմ կեանքն ալ վտանգի մէջ է :
Բայց քեզ կը տեսնեմ . մնացածն
ինչ հողս է : Դամ մի քեզ հետ , ու
յետոյ , թող թէ որ կուզէ սա ցեղու
նը վերաս փլնի :

ՌՕՏՕԼՖՕ . — Աստուած կը պահէ
մեզ : Պալատիս մէջ ամենը կը քնանայ .
ու անշուշտ մտածիս պէս ալ կրնամ ել
նել :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Ըսէ՛ նայիմ , ի՞նչպէս
կըցար մտնել :

ՌՕՏՕԼՖՕ . — Մարդ մի որուն կեան
քը ազատած էի . . . բայց ուրիշ ան
դամ կը մեկնեմ այս բանը : Բռնած
կերպերուն վերայ ապահով եմ , մի
վախեր :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Իրա՛ւ կըսես : Օ ! ե
թէ ապահով ես , այս բաւական է :
Օ ! Աստուած . բայց ինձ նայէ քիչ մի
որ տեսնեմ երեսդ :

ՌՕՏՕԼՖՕ . — Գաղարինա :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Օ ! ալ մեր վերայ մը
տածենք , դուն իմ վերայ ես ալ քու :
Իս շատ փոխուած կը տեսնես , անանկ
չէ՞ : Պատճառն ան է որ հինգ շաբաթէ
ի վեր լալէն ուրիշ բան ըրած չունիմ :
Իսկ դուն ինչ ըրի՛ր այսքան ատեն :
Տրտում էիր դո՛նէ : Այս բաժանումը
ինչ ազդում ըրաւ քեզ : Ըսէ՛ նայիմ :
Խօսէ : Աուզեմ որ խօսիս :

ՌՕՏՕԼՖՕ . — Ո՛ր Գաղարինա , քեզ
մէ բաժնուած ըլնելը աչերու վերայ
մութ մի , սրտի մէջ դատարկութիւն մի
ունենալ է : Քեզմէ բաժնուիլը ա
մեն որ քիչ — քիչ մեռնիլ է : Անանց

Ճրագի մուտք բանտի մէջ, առանց աստ-
ղի գիշերի մէջ ըլնելէ: Քեզմէ բաժ-
նուիլը ալ չ'ապրիլ, ալ չ'մտմտալ,
ալ բան մի չ'գիտնալ է: Ար հարցը-
նես թէ ինչ ըրի այն ատենները, չեմ
գիտեր: Օգտցածներս ահա ասոնք են:

ԳԱԴԱՐԻՆԱ. — Ահա ես ալ այս-
պէս, ես ալ այսպէս էի: Օ! հիմայ
կիմանամ որ մեր սիրտերը բաժնուած
չեն եղեր: Շատ բաներ ունիմ ըսե-
լու քեզ: Բայց ուսկից սկսիմ: Բան-
տի մի մէջ փակած են իս: Գուրս չեմ
կրնար ելնել: Շատ ցաւեր քաշեցի:
Ուրեմն պէտք չես զարմանալ որ քեզ
տեսած իս պէս վիզդ չցատկեցի, սլառ-
ճառը ան է որ յանկարծ ո՛ւր ըլնելս
չէի գիտեր: Ա Աստուած, երբ քու
ձայնը լսեցի, չեմ կրնար ըսել ինչ ե-
ղայ, ինչ անցաւ ներսէս: Աստէ նայիմ
սա տեղ ուրիշ անդամներուն պէս: Մի-
այն թէ կամաց խօսիմք: Մինչև առ-
տու հոս կը կենաս: Ա վաղը Տափնը
գուրս կը հանէ քեզ: Օ! ինչ անուշ
ժամ էր: Ալ հիմայ բանէ մի վախ չու-
նիմ: Օ! անբաւ ցնծութեան մէջ եմ
քեզ տեսնելուս: Աթէ ըսէին ինձ,
Ռօտօլֆօ, արքայութիւն կուզեմ թէ
Ռօտօլֆօն, այո, Ռօտօլֆօ, քեզ կու-
զէի: Հարցուր հեղ մի Տափնի ո՛րչափ
կը լայի քեզ համար: Բայց ըսէ նա-
յիմ, ո՛վ ըլնելս իմացար, անանկ չէ:
Օ! գիտեմ դուն բանէ մի չես վհա-
տիր: Արբ բան մի կը գնես մաքիդ
մէջ, պէտք է որ ըլնի այն բանը:
Այս ալ կուզեմ ըսես, դարձեալ դա-
լու միջոց պիտի ունենաս, անանկ չէ:

ՌՕՏՕԼՖՕ. — Այո: Աթէ ոչ ինչ

պէս կրնամ ապրիլ: Գաղարինա, ը-
սածներդ ասշուտեամբ մտիկ կընեմ:
Օ! մի վախեր: Այսէ ինչպէս հան-
դարտ է գիշերը: Աերսիգինէս բոլոր
սէր, մեր շուրջն ալ բոլոր հանգիստ:
Մերիններուն պէս երկու հոգի որ ի-
րարու կը խառնուին, այո, Գաղարինա,
սուրբ բան մ'է այս, զոր Աստուած
չպիտոյրեց բնաւ: Աս քեզ կը սիրեմ,
դուն իս կը սիրես, Աստուած մեզ կը
նայի: Մեր երեքէն զատ արթուն մէ-
կը չկայ այս ժամուս: Մի վախեր ամե-
նեին:

ԳԱԴԱՐԻՆԱ. — Ոչ: Ալ անկէ զատ
անանկ վայրկեաններ կըլնին որ ատեն
երկու սիրականներ ամեն բան կը մոռ-
նան: Արջանիկ կըլնին, դրաւուած
կըլնին իրարմէ: Այսէ, Ռօտօլֆօ,
քեզմէ բաժնուած, ուրիշ բան չեմ,
բայց միայն բանտարկեալ կին մի, դուն
ալ ուրիշ բան չես, բայց միայն տա-
րագիր խեղճ երիտասարդ մի, սակայն
երկուքնիս մէկ-տեղ, հրեշտակաց իսկ
նախանձ կը բերենք: Օ! չէ, անոնք
երկինքը մեզ չափ երջանիկ չեն: Ռօ-
տօլֆօ, խնդումէ մեռնող չկայ, եթէ
ոչ հիմայ ես ալ կը մեռնէի: Գլխուս
մէջ ամեն բան տակն-ու-վերայ է:
Գեո. հիմայ հաղար հարցումներ ըրի
քեզ, բայց ըսածներէս մէկն ալ չեմ
յիշեր: Գուն կը յիշե՞ս • Ինչ! երազ
չէ այս: Իրաւ հո՞ս ես դուն:

ՌՕՏՕԼՖՕ. — Վայլեր սիրական!

ԳԱԴԱՐԻՆԱ. — Ոչ, լռէ, մի խօսիր,
թող տուր ինքզինքիս դամ, թող տուր
որ երեսդ նայիմ, հոգիս, թող տուր
մտածեմ որ դուն հոգ ես: Ատքը

կը սրտաստանեմ : Ինչպէս գիտես ,
անանկ վայրկեաններ կան երբ սիրող
մի կուզէ սիրած անձին երեսը նայիլ
ու ըսել անոր . լուէ , քեզ կը դիտեմ .
լուէ , կը սիրեմ քեզ . լուէ , երջանիկ
եմ . (Ռօթօլֆօ անոր յեռնը կը պահէ :
Գաղարինա կը շահանայ ու սեղանին վե-
րայ եղած նամակը կը պահէ :) Այս ի՞նչ
պիտի ըլնի : Տէր Աստուած , Այս
թուղթը կասկածներու մէջ կը ձգէ իս .
« Կամակ մի : Գո՛ւն գրիր այս նամակը
հոս :

ՌՕՏՕԼՓՕ . — Ոչ : Բայց անշուշտ
ինձ հետ եկող մարդը դրած պիտի ըլ-
նի :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Մարդ մի եկաւ քեզ
հետ ! Ո՛վ : Տեսնե՞նք : Ի՞նչ բան է այս
նամակը : (Արարնօս կը Բանայ նամակը
ու կը կարդայ .) « Այնպէս մարդեր
կան որ միայն Արարոսի գինիով կը գի-
նովնան : Այնպէսներ ալ կան որ մի-
այն զուտ վրիժառութեամբ կը զուար-
ճանան : Տիկին , սիրող նուիրակ մի
շատ պղտիկ է , վրիժառու նուիրակ մի
շատ մեծ է » :

ՌՕՏՕԼՓՕ . — Մեծդ Աստուած , ի՞նչ
ըսել կուզէ այս :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Գիրը կը ճանչեմ :
Գրողը անամօթ մէկն է որ ատեն մի
վենետիկ համարձակեցաւ սիրել իս ,
ու որ մի առ իս դալ զոր անդէն վարն-
տել տուի : Այս մարդուն անունը Հօ-
մօտէյ է :

ՌՕՏՕԼՓՕ . — Իրօք :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Տասանց ժողովին
ըսեմներէն մէկն :

ՌՕՏՕԼՓՕ . — Ե՛րկին :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Կորսուած եմք : Հոս
որողայթ մի կայ որուն մէջ բռնուե-
ցանք : (Գեղի պարզագոյն կերպով — կը
դիտէ .) Ա՛ ! տէր Աստուած :

ՌՕՏՕԼՓՕ . — Ի՞նչ կայ :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Սա ճրագը մարէ ,
շուտ :

ՌՕՏՕԼՓՕ . — (Ճրագը ճարելով .)
Բայց ի՞նչ կայ :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Սօլինօ կամուրջին
վերայ հանող ճեմաղաւթը . . .

ՌՕՏՕԼՓՕ . — Ի՞նչ է եղեր :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Հոն լոյսի մի եր-
թալ-դալը տեսայ :

ՌՕՏՕԼՓՕ . — Ա՛հ ! թշուառական ան-
մըտիս . Գաղարինա ! կորստեանդ
պատճառը ես եմ :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Ռօթօլֆօ , ինչպէս
դուն առ իս եկար , ես ալ առ քեզ
պիտի գայի : (Խորը եղած պղտի շրտն
ակնջ տնելով .) Լուէ ! — Միտ դնենք :
Կարծեմ նրբանցին մէջ ձայն լսեցի :
Այո , դուռ մի կը բանան , կը քալեն :
Գուն ուրկէ՞ մտար :

ՌՕՏՕԼՓՕ . — Հսն , ծպտեալ դռնէ
մի , զոր այն սատանան կրկին զոցեց :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Ի՞նչ ընենք :

ՌՕՏՕԼՓՕ . — Սա դուռը :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Երկանս սենեակը
կը հանէ :

ՌՕՏՕԼՓՕ . — Պատուհանը :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Անդունդ մ'է :

ՌՕՏՕԼՓՕ . — Այն դուռը :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Իմ աղօթարանն է ,
ուսկից ելնելու ճամբայ չկայ : Բնաւ
փախչելու միջոց մի : Հոգ չէ , մտիր :
(Աղօթարանին շուրջը կը Բանայ , Ռօ-

ասլֆօնէրս կը նէփոտի : Գաղարիէնս Գո-
 ուր կը գոցե ու մինակ կը ֆնայ :) Արը-
 պեմ գոնէ գուռը : (Գո-ուր կը կը կը
 Բանալին կ'անո- ու կո-րծիէն մէջ կը
 պահէ :) Ո՞վ գիտէ ինչ պիտի պատա-
 ճի հոս : Գուցէ կուզէ օգնութեան
 հասնիլ ինձ : Ու գուրս ելնելով վը-
 տանդ մի կըզայ գլխին : (Գէպի ի-
 ըր ելած պարի Գո-ուր կը կը կը .) Աւ
 բան չեմ լսեր : Այո, կը քալեն : Ար
 կենան : Միտ գնելու համար անշուշտ :
 Ա՛ տէր Աստուած, քնանալ ձեացնեմ
 գոնէ : (Վերայի կաճո-սար կը կանէ ու
 մահճին վերայ կը նէփոտի .) Ո տէր Աստ-
 ուած, սիրտս կը գողայ : Փականին
 մէջ բանալի մի կը գնեն : Օ! չտես-
 նեմ գոնէ ներս մտնողը :

(Մահճին Էրաճոյերը ին գոնէ : Գո-ուր
 ին Բար-ի :)

ՏԵՍԱՐԱՆ Ե՛

ԳԱԴԱՐԻՆԱ . ԱՍ ԹԻՍՊ

(Աս Թիսպ ին մինէ . հոնապ , յետոյ մէ
 ճրագ . ու ե-ր ըն-ը : Գիտելով յ-
 ում ին գոյ յամբարայ : Սեղանին
 ճարակաւ . ճրագը ին ճինէ . ըր նոր
 մարտ էին :)

ԱՍ ԹԻՍՊ . — Ճրագը գեռ կը ծխայ :
 (Ար Գաղարիէնս մահճը կը քեանէ , Գէպ
 ի կոն կը վայէ վարագոյրը մէկ-տի կա-
 նո- :) Մինակ է ու քնանալ կը ձե-
 ապընէ : (Արկիսի սենեակին մէջ ծո-
 գալ Գո-նելը ու պարի ճինելով :) Եր-
 կանը գուռը այս է : (Մահճակին մէջ
 ծայրեալ աղօթարանին Գրան յետնով կը

շարնէ :) Հոս ալ գուռ մի կայ :
 (Գաղարիէնս մահճին մէջ նստած անոր
 ըրածները անով կը Գիտէ .)

ԳԱԴԱՐԻՆԱ . — Ի՞նչ բան է այս :
 ԱՍ ԹԻՍՊ . — Ի՞նչ բան է այս : Հի-
 մայ կըսեմ ինչ բան է այս : Այս
 Բօտէսթաի սիրուհին է որ իւր ճան-
 կերուն տակն է առած Բօտէսթաին
 կինը :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Երկին !

ԱՍ ԹԻՍՊ . — Ի՞նչ բան է այս, տի-
 կին : Այս գերասանուհի մի, թատ-
 ռոնի աղջիկ մի, գուսան մի է, ինչպէս
 որ կը կոչէք մեզ, որ իւր ճանկերուն
 մէջ առած է բամբիշ մի, կարգուած
 կին մի, պատուաւոր կին մի, առաքի-
 նութիւն մի, զոր ճանկերուն, ճիրան-
 ներուն, ախաներուն տակ առած կը
 խաղայ . ու այս գերասանուհին այդ
 բամբիշին, այդ փառաւոր համբալին
 ուզածը կրնայ ըլնել, և զոր սիրտի
 փարատէ, կտոր-կտոր, պատառ-պա-
 տառ պիտի ընէ : Ա՛ մեծուհի տիկին-
 ներս, չեմ գիտեր ինչ պիտի պատա-
 ճի . բայց այս յայտնի է որ ձեզմէ
 մէկը ոտներուս տակն է, զոր պիտի
 չթողում, սրուն լաւադոյն էր շանթը
 գլխին, քանթէ իմ երեսը իւր աղջին :
 Ե, տիկին, ինչ համարձակութեամբ
 աչերնիդ իմ վերայ կը վերցունէք երբ
 սիրահար մ'ունիք սենեակնուդ մէջ :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Տիկին . . .

ԱՍ ԹԻՍՊ . — Պահած !

ԳԱԴԱՐԻՆԱ . — Ար վրիպիք . . .

ԱՍ ԹԻՍՊ . — Ա՛ կաղաչեմ, մ'ու-
 բանաք : Ահա հոս էր ան : Աստած
 սեղերնիդ գեռ յայտնի են աթոռնե-

բէն : Գոնէ զանոնք վերցունէիք ան-
կէ : Բայց ինչ կըսէիք իրարու : Հա-
զար անուշ բաներ , անանկ չէ՞ , հա-
զար հաճոյալի բաներ , անանկ չէ՞ :
Ար սիրեմք քեզ , կը պաշտեմք քեզ ,
բոլորովին քուկդ եմ . . . Ա՛ մի գպիք
ինձ , տիկին :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Չեմ կրնար հաս-
կընալ . . .

ԼԱԹԻՍՊ . — Աւ մեղմէ ալ աւելի չէք
արժեր , իմ տիկիններ , ինչ որ մենք
ցորեկը բարձրաձայն կըսենք մարդու
մի , դուք զայն գիշերը կը թոթովէք
անոր : Մենք ձեր էրիկները կ'առ-
նունք , դուք մեր սիրահարները կ'առ-
նունք : Այս մրցում մի է : Հատ աղէկ ,
մրցի՛նք : Ա՛ պաճուճանք , կեղծաու-
րութիւն , մատնութիւն , առաքինու-
թիւն վիրաւորեալ , սուտ կիներ : Աչ
ամենեւին . մեղմէ ալ աւելի չէք ար-
ժեր : Մենք մէկը չենք խաբեր :
Գուք աշխարհ կը խաբէք , ձեր ըն-
տանիքը կը խաբէք , էրիկնիդ կը խա-
բէք , Աստուած իսկ կը խաբէք թէ որ
կարենաք : Օ ! ինչ առաքինի են այն
կիները որ քողարկեալ կանցնին փո-
ղոցներէն : Այլեղեցի կերթան . մէկ —
դի քաշուեցէք , անցւորներ , կորացէք ,
ծուռեցէք : Աչ , մէկ-դի մի քաշուիք ,
ոչ , մի կորանաք , ոչ մի ծուրիք . այլ
չիտակ անոնց դացէք . քաշեցէք քողը ,
քողին տակ դիմակ մի կայ . քաշեցէք
դիմակը , դիմակին տակ ստող բերան
մի կայ : — Ա՛ հա այսպէս , ես Բօտէս-
թաի սիրուհին եմ , դուք անոր կիներ ,
բայց ես պիտի կորսնցունեմ ձեզ :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Տէր Աստուած :
Տիկին . . .

ԼԱԹԻՍՊ . — Ո՛ր է ան :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Ո՛վ :

ԼԱԹԻՍՊ . — Ան :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Ես հոս մինակ եմ ,
իրաւ որ մինակ : Միս-մինակ : Չեր
հարցումներէն բան մի չեմ հասկնար :
Չեղ չեմ ճանչեր , բայց ըսածներ-
նիդ կը սոսկացնեն իս , տիկին : Չեղ
դէմ ինչ ըրած ունիմ չեմ գիտեր :
Աւ չեմ ալ կարծեր որ ամեն այս բա-
ներուն մէջ շահ մի ունենաք . . .

ԼԱԹԻՍՊ . — Հա՛ մի ունենամ այս
բաներուն մէջ : Անշուշտ որ շահ մի
ունիմ : Բայց դուք չէք հաւատար , ա-
նանկ չէ՞ : Այթ սրտիս մէջ զայրոյթ
մի չունենայի , այսպէս կը խօսէի մի-
թէ : Ի՞նչ հողս է ձեր մեծուհի տի-
կին ու իմ գերասանուհի մի ըլնելն :
Ասոնք ինձ համար հաւասար բաներ
են . ես ալ ձեզ պէս աղւոր եմ : Ատե-
լութիւնը սրտիս մէջ բունած է կը-
սեմ քեզ , ու ձեռքէս եկածին չափ
կը թշնամամանեմ քեզ : Ո՛ր է այն մար-
դը : Անունն ինչ է այն մարդուն :
Տեսնել կուզեմ զինքը : Օ ! երբ կը
մտածեմ որ քնանալ կը ձեացունէր .
ինչ անամօթութիւն :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Աստուած իմ , Աստ-
ուած իմ . ինչ պիտի ըլնիմ արդեօք :
Աստուծոյ սիրոյն համար , տիկին ,
եթէ գիտնայիք . . .

ԼԱԹԻՍՊ . — Հոն դուռ մի կայ դի-
տեմ : Ստոյգ եմ որ ան ալ ներսն է :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Հոն իմ աղօթարա-
նըն է , տիկին : Կերգնում որ մէկը
չկայ հոն : Ա՛ եթէ գիտնայիք , իմ
վերայ սուտ բաներ ըսեր են ձեզ :

Ես հոս մինակ , առանձին , ամեն աչքէ պահուած կ'ապրիմ :

ԼԱԹԻՍՊ . — Ահա քողն :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Այն իմ աղօթարանն է , հաւատացէք : Հոն իմ ծընկադրէն ու մատեաններէն զատ ուրիշ բան չկայ . . .

ԼԱԹԻՍՊ . — Ահա գիմակը :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Կերդնում , տիկին , որ մէկը պահուած չէ ներսը :

ԼԱԹԻՍՊ . — Ահա ստող բերանը :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Տիկին . . .

ԼԱԹԻՍՊ . — Այո անանկ է : Բայց խենդ էք որ այսպէս կը խօսիք ու վախկոտ յանցաւորի մի կերպարանքը կ'առնուք : Բանը հաստատութեամբ չէք ուրանար : Հա նայիմ , տնկուեցէք քիչ մի , բարկացէք քիչ մի եթէ կը համարձակիք , ու անմեղ կնոջ մը տեղ դրէք ինքզինքնիդ : (Յանկարծ պարզութեամբ հոգեբանը եղած վերաբերման իր արեւն , — ինչ վաղէ կ'առնու զայն . Ա! տեսէք , ալ ճարը չկայ : Ահա վերաբերուն ալ :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Տէր Աստուած :

ԼԱԹԻՍՊ . — Այլ վերաբերու մի չէ այս , անանկ չէ : Այս էրիկ մարդու վերաբերու չէ : Բայց ցաւն այն է որ որու ընկեր չգիտցուիր , բոլոր այս անիծեալ վերաբերուները իրարու կը նմանին : Այնպէս , զգուշացէք ալ , ու ըսէք այն մարդուն անունը :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Չեմ գիտեր ինչ ըսել կուզէք :

ԼԱԹԻՍՊ . — Այս ձեր աղօթարանն է , այնպէս չէ : Բարի բացէք նայիմ :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Ինչո՞ւ :

ԼԱԹԻՍՊ . — Ես ալ աղօթելու եմ , բացէք :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Բանալին կորուսած եմ :

ԼԱԹԻՍՊ . — Բացէք կըսեմ :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Չեմ գիտեր բանալին որու քովն է :

ԼԱԹԻՍՊ . — Ա! իմացայ , էրիկնուդ քովն է : — Տէր Անճէլօ , Անճէլօ , Անճէլօ :

(Կողմէ Դեմ Իրոք եղած Դասու Վաղէ , Գործարեան ինչ Բանէ շինուո՞ւ լինուո՞ւ :)

ԳԱԴԱՐԻՆԱ . — Ոչ , չեմ թողուր : Ոչ , պիտի չերթաք հոն : Ես ձեզ բան մի ըրած չունիմ : Չեմ իմանար ինչ ունիք ինձ դէմ : Չէ , տիկին , պիտի չկորսնցունէք իս : Պիտի մեղքընաք ինձ : Այլ այրկեան մի կեցէք : Կը տեսնէք : Կը մեկնեմ բանը : Մէկ վայրկեան միայն : Չեր հոս ըլնեւէն ի վեր բոլորովին ապշած , բոլորովին սոսկման մէջ եմ . իրաւ որ շփոթած եմ ու ըսածներնէդ բան մի չհասկցայ : Ասիք ինձ որ դուք դերասանուհի մ'էք և ես մեծուհի տիկին մի . ահա այսչափ միայն հասկցայ : Կերդնում որ մէկը չկայ ներսը : Այն նուիրակին վերայ բան մի չըսիք , բայց ես ստոյգ եմ որ ան է այս ամենուն պատճառը , տիկին , սոսկալի մարդ մ'է ան որ կը խաբէ ձեզ : Արտես մի , լրտեսի մի ըսածները չեն հաւատացուիր . Օ! մտիկ ըրէք մէկ վայրկեան : Կիները իրարու ասանկ բան մի չեն զլանար : Աթէ էրիկ-մարդու մի այսչափ աղա-

չէի, ի գուժ չէր շարժեր ան: Բայց
 գուք մեղքքէք իս. ձեզ նման աղւոր-
 ները շարասիրտ չեն ըլնիր. Արսէի
 ուրեմն որ ասոնց պատճառը այն թըշ-
 ուառական մտրղը, այն նուիրակն,
 այն լրտեսն է. ալ կրնաք հասկնալ,
 ու աս ալ գիտնաք որ ետքը իմ մահը
 պատճառելնուդ վերայ պիտի ցաւիք:
 Մ'արթնցունէք էրիկս: Արսպաննէ
 իս: Օ! եթէ վիճակս գիտնայիք շատ
 կը մեղքնայիք իս: Յանցաւոր չեմ,
 իրաւ որ յանցաւոր չեմ, կարծածնուդ
 չափ դոնէ: Գուցէ անխոհեմութիւն
 մի ըրած եմ, բայց, տիկին, մայր չու-
 նիմ: Աերդնում ձեզ որ մայր չունիմ
 Օ! մեղքքէք իս, մի բանաք այն գու-
 ոը, կ'աղաչեմ, կը հայցեմ:

ԼԱԹԻՍՊ. — Չէ, ալ լմնցած է ա-
 մեն բան: Ալ մտիկ չեմ ըներ: Տէր
 իմ, տէր իմ:

ԳԱԴԱՐԻՆԱ. — Աեցէք: Ա! տէր
 Աստուած: Ա! կեցէք: Բայց չէք գի-
 տեր որ կը մեռցունէ իս. թող տուէք
 դոնէ մէկ վայրկեան, փոքր վայրկեան
 մի Աստուծոյ աղաչեմ: Աայեցէք,
 ծունկի վերայ պիտի դամ ահա հոն...
 (Անոր թնկադրին վերայ փայլուն պղնձե
 խաչելո-թիւնը ցոյցնելով.) այն խաչե-
 լութեան առջև: (Աս թնկաք աշտ խա-
 չելո-թեան վերայ կը յարէ.) Օ! շնորհք
 ըրէք. գուք ալ իմ քով աղօթեցէք:
 Աւ ետքը թէ որ միշտ իմ մահը կու-
 ղէք, թէ որ Աստուած այս մտածու-
 թիւնը չհաներ ձեր սրտէն, ուղածնիդ
 ըրէք այն ատեն:

ԼԱԹԻՍՊ. — (Խաչելո-թեան վերայ կը
 զարկէ, և պարտէ կը Գայն.) Ի՞նչ

պիտի ըլնի այս խաչելութիւնը: Աւր-
 կէ՞ գտած էք այս խաչը: Աւրկէ՞ ձեր
 քով կը գտնուի: Ա՞վ տուաւ ձեզ զայն,
 ԳԱԴԱՐԻՆԱ. — Ի՞նչ, այս խաչելու-
 թիւնը: Օ! հիմայ կը մեռնիմ: Օ!
 ի՞նչ պէտք ունիք այս խաչելութեան
 վերայ հարցումներ ընել ինձ:

ԼԱԹԻՍՊ. — Ինչպէ՞ս ձեր քով կը
 գտնուի այս ըսէք, շուտ.

(Ճրագը պարզապէս ուր տեղանէ ճշ վերայ
 ինքած է. Լաթիսպ հոն կը յօդեայ
 ու խաչելո-թիւնը կը քննէ:)

ԳԱԴԱՐԻՆԱ. — Շատ աղէկ. կի՞ն
 մի տուաւ զայն ինձ: Տակը եղած ա-
 նունը կը գիտէք, այդ անանկ անուն
 մ'է զոր ես չեմ ճանչեր, կարծեմ,
 թնկաք: Մէկ անգամ ի Արեղչիա խեղճ
 կի՞ն մի պիտի մեռցունէին: Ես անոր
 համար ներումն խնդրեցի: Աւ որով-
 հետեւ հայրս էր մեռցունել տուողը,
 կատարեց ուղածս: Այն ատեն ես
 դեռ պղտիկ էի: Օ! մի կորսնցունէք
 իս. մեղքըքէք ինձ, տիկին: Այո՞ն
 միջոցին այն կի՞նն ալ այս խաչելու-
 թիւնը ինձ տուաւ ըսելով թէ եր-
 ջանկութիւն կը բերէ այս: Ահա այս
 է բանը, կերդնում որ այս է բանը:
 Բայց ձեր ի՞նչ հոգն: Ինչո՞ւ պարապ
 բաներ ըսել կը տաք ինձ: Օ! սիրտս
 կը մաշի:

ԼԱԹԻՍՊ. — Տէր Աստուած, ո՞
 մայր իմ:

(Խորը եշտ դուռը կը բացուի: Անճէս
 գիւղերային պարեգօտով ներս կը յօդէ:)

ԳԱԴԱՐԻՆԱ. — (Թնկադրունէն առջի-
 քին քալով.) Երիկս! Ալ կորսուած եմ:

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ԳԱՒԱՐԻՆԱ. ԼԱԹԻՍՊ. ԱՆՃԵԼՕ.

ԱՆՃԵԼՕ. — (Առաջ 1. — Թիսուր
պիտանելու որ պարզեցին Կեցած.)
Ի՞նչ կը նշանակէ այս, տիկին. կ'եր-
բեի ինձ թէ ձեր սենեակին մէջ ձայն
լսեցի:

ԳԱՒԱՐԻՆԱ. — Պարոն. . .

ԱՆՃԵԼՕ. — Ի՞նչպէս կը լինի որ դեռ
պիտակած չէք այս ժամուս:

ԳԱՒԱՐԻՆԱ. — Պատճառը ան է. . .

ԱՆՃԵԼՕ. — Տէր Աստուած! բոլոր-
րովին դողի մէջ էք: Սենեակնուդ
մէջ մէկը կայ, տիկին:

ԼԱԹԻՍՊ. (Յառաջ Կալ.) Այո,
տէր իմ, իս:

ԱՆՃԵԼՕ. — Գուք, թիսուր!

ԼԱԹԻՍՊ. — Այո, ես:

ԱՆՃԵԼՕ. — Գուք հոս! Գիշեր ա-
տեն! Ինչպէս կը լինի որ հոս գտնուիք
այս ժամուս, ու տիկինն ալ. . .

ԼԱԹԻՍՊ. — Բոլորովին դողի մէջ
ըլնի: Հիմայ կը սեմ, տէր իմ: Մտիկ
ըրէք ինձ: Բանը աղէկ ուշ դնել
կ'արժէ:

ԳԱՒԱՐԻՆԱ. (Ինքնիքէն.) Օ! ալ
լինցայ:

ԼԱԹԻՍՊ. — Ահա երկու բառով
ըսեմ: Վաղն առտու պիտի սպաննը-
ւէիք:

ԱՆՃԵԼՕ. — Ի՞նչ:

ԼԱԹԻՍՊ. — Ձեր պալատէն իմ
տունը դալու ատեն: Արդէն գիտէք
որ առտուները սովորաբար մինակ
դուրս կ'ընէք. Բանին լուրը այս գի-

շեր առի ես. ու շուտ հոս եկայ իմաց
տալու համար տիկնոջ որ վաղը թող
չտայ ձեզ դուրս ելնել: Ահա գիշեր
ատեն հոս ըլնելու ու տիկնոջ ալ
բոլորովին դողի մէջ ըլնելուն պատ-
ճառը:

ԳԱՒԱՐԻՆԱ. — (Ինքնիքէն.) Մեծք
Աստուած! այս ինչպէս կ'ին է:

ԱՆՃԵԼՕ. — Կարելի բան է այս:
Բայց չեմ զարմանար: Կը տեսնէք
հիմայ որչափ իրաւունք ունէի երբ
իս շրջապատող վտանգներուն վերայ
կը խօսէի ձեզ: Ո՞վ իմաց տուաւ ձեզ
այս բանը:

ԼԱԹԻՍՊ. — Անծանօթ մարդ մի,
որ առաջ խօսք առաւ բերնէս որ թող
կը տամ փախչի: Իս ալ թող տուի:

ԱՆՃԵԼՕ. — Պարապ դտնուեր էք:
Ձեք գիտեր որ կը խոստանան ու ետքը
բռնել կը տան մարդը: Պալատիս
մէջ ինչպէս կը ըլնի մտնել:

ԼԱԹԻՍՊ. — Նոյն մարդը մտցուց,
Մօլինօ կամուրջին վերայ նայող պըզ-
տի դուռը բանալու կերպ մի գըտնե-
լով:

ԱՆՃԵԼՕ. — Կը նայիք հեղ մի:
Ու մինչև հոս մտնելու համար:

ԼԱԹԻՍՊ. — Բարի, բայց այն բա-
նալին դոր դուք տուած էիք ինձ:

ԱՆՃԵԼՕ. — Կերելի ինձ որ անոր
այս սենեակը բանալը ըսած չէի ձեզ:

ԼԱԹԻՍՊ. — Այո, բայց չէք յի-
շեր:

ԱՆՃԵԼՕ. — (Գիտիչը վերադառնալով
նեղ.) Այս վերաբերուն ինչ է:

ԼԱԹԻՍՊ. — Նոյն մարդը տուաւ
ինձ պալատիս մէջ մտնելու համար:

Փեղոյրն ալ ունէի, բայց ուր դնելու
չեմ գիտեր:

ԱՆՃԻԼՕ. — Երբ կը մտնտամ որ
ասոր նման մարդեր ուզածնուն պէս
տունս կը մտնեն: Այս ինչ կեանք է
իմ կեանքը: Միշտ հանդերձիս մէկ
ծայրը դարանի մի մէջ բռնուած է:
Ե, ըսէք նայիմ, թիսպ. . .

ԼԱԹԻՍՊ. — Ա! տէր, կաղաչեմ
ուրիշ հարցումները վաղուան թողէք:
Այս դիշեր ձեր կեանքը աղատեցինք,
գոհ ըլնել պէտք էք: Բայց նայէ մէկ
անգամ ոչ տիկնոջ և ոչ ինձ շնորհ
հակալ կըլնիք:

ԱՆՃԻԼՕ. — Կերեցէք, թիսպ:

ԼԱԹԻՍՊ. — Դեսպակս վարը կըսու
պատէ: Կը հաճիք մինչև հոն ընկե
րանալ ինձ: Ալ թողունք տիկինը
որ քնանայ:

ԱՆՃԻԼՕ. — Ձեր հրամանին կըսու

պատեմ, տօնա թիսպ: Թէ որ կը հա
ճիք իմ խուցէն անցնինք որ սուրս
առնում: (Խորը եղած թիսպ ելնա
լով.) Ե! ճրագներ հանեցէք:

ԼԱԹԻՍՊ. — (Թատրոնին առջի-դէն
Գաղտնիքն թիսպ առնելով.) Եկած
ճամբէս շուտ թող փախչի ներսի
մարդը: Ահա բանալին: (Դէպ է ա
ղջարանը դառնալով.) Ա! սա դուռը!
Օ! ինչպէս կը տանջուիմք: Չկրնամ
գոնէ գիտնալ որ իրաւ մնէ:

ԱՆՃԻԼՕ. — (Գալով.) Ձեզ կըսու
պատեմ, տիկին:

ԼԱԹԻՍՊ. — (Ինչնէրէն.) Օ! գոնէ
եթէ կարենայի անցնելը տեսնել. ճար
չկայ ալ! պէտք եմ երթալ: Օ! . . .
(Անհետնէն.) Երթանք, տէր իմ:

ԳԱԴԱՐՆԱ. — (Ելնելէն դիտելով.)
Արդեօք երա՞ղ մ'է այս:



ԵՐՐՈՐԴ ՕՐ

ՍԵՒԻՆ ՏԵՂ ՃԵՐՄԱԿԸ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆ

(Գաղտնիքի սենեակը : Մահճին շարագոյրերը գոց են :)

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ԱՆՃԵԼՕ. ԵՐԿՈՒ ՔԱՀԱՆԱՆԵՐ :

ԱՆՃԵԼՕ. — (Երկու Կահանաներէն աւանդին.) Տէր դահեղեց, խսկոյն Սէնդ — Ընթուան եկեղեցւոյն դահլիճը, դասը և աւագ խորանը սեով պատել տուէք : Երկու ժամէն — բայց երկու ժամէն, — փառաւոր ժամերգութիւն մի պիտի ընէք հոն մէկ երեւելի անձի հոգւոյն համար որ այս վայրկեանիս պիտի մեռնի : Դուք ալ բոլոր ուխտով այս ժամերգութեան ներկայ գրտնուիք : Պաշտպան սուրբին մասունքը բանալ տաք : Թապուհներու համար եղածին պէս երեք հարիւր ճերմակ մոմէ ջահ վարէք : Վեց հարիւր չքաւորներու մէկ-մէկ արծաթ տիւքաթ և մէկ-մէկ վենետեան ոսկի բաժնէք :

Սե սրահակին վերայ Մալիբիէրի ու Պրակատինի զինանշաններէն ուրիշ զարդ չըլնի : Մալիբիէրի զինանշանը ոսկիէ է արծուի ճիրաններու մէջ. Պրակատինի զինանշանը, կապուտակ ու արծաթագոյն է վրան կարմիր խաչով :

ԳԱՀԵՐԷՅ. — Պերճափայլ Բօտէսթա...

ԱՆՃԵԼՕ. — Ա! — Խսկոյն այս ժամուս բոլոր ձեր ուխտով, խաչով ու դրօշը առջևնուդ այս տիւքական պալատին գերեզմանոցը իջնէք, ուր Խօմանաներուն շիրիմները կան : Հոն քար մի վերցուած ու փոս մ'ալ փորուած է : Ու այն փոսը օրհնէք : Ինձ համար ալ աղօթել չմոռնաք :

ԳԱՀԵՐԷՅ. — Չեր աղգականներէն մէկն է միթէ մեռնողը, տէր իմ :

ԱՆՃԵԼՕ. — Գացէք : (Գահէրէցը

յարգանքի ինչ ծով ու մեծ Գրեգորիան ինչ
 նե: Մի-ս Կանանան ալ անոր կեանքի
 կոչել: Անճելը ինչ կեց-նե շինքը:)
 Տէր աւագերէց, կեցէք դուք: — Հոս
 քովը, սա աղօթարանին մէջ անձ մի
 կայ զոր շուտ խոստովանցներու էք:

ԱՒԵԳԵՐԷՑ . — Գատապարտեալ
 մարդ մի, տէր իմ:

ԱՆՃԻԼՕ . — Ոչ, կին մի:

ԱՒԵԳԵՐԷՑ . — Մահո՛ւ պատրաստել
 պէտք է այս կինը:

ԱՆՃԻԼՕ . — Հիմայ կը տեսնէք:

ՆՈՒՒՐԱԿ ՄԻ . — (Մտնելով.) Չեր
 յարգութիւնը տօնա թիսպը ուզած
 էր: Եղած է:

ԱՆՃԻԼՕ . — Թող ներս դայ ու ըս-
 պասէ ինձ մէկ վայրկեան: (Վտնելու
 ինչ կերպ: Բարե-նան աղօթարանը ինչ Բա-
 նայ ու ապերեցին շշան ինչէ որ մտնէ .
 Սեփեմ վերայ ինչ կեց-նե շինքը:) Տէր ա-
 ղագերէց, ձեր կեանքին վերայ, երբ
 ասկէ դուրս ելնէք, զղուշացիք, որու
 կուզէ ըլնի, տեսներու կնիկնուդ ա-
 նունը ըսելու:

(Գատապարտեալն Տէր աղօթարանը ինչ մտնէ:
 Խորը եղած Գրեգորիան ինչ Բարե-նան
 ինչ Եղած թիսպը ինչ մտնէ:)

ԱՒԵԳԵՐԷՑ . — (Ոտնիկանին.) Գիտէք
 ինչո՞ւ կանչել տուաւ իս:

ՈՍԵՒԿԱՆԸ . — Ոչ, տիկին:
 (Կերպ)

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԱՒԵԳԵՐԷՑ . (Մտնելով.)

ՔՏ! սա սենեակը . ահա դարձեալ

նոյն սենեակին մէջն եմ . Բառէսթան
 ինչ պիտի ընէ արդեօք իս: Այս
 առտու պաշտոս տրտում կերպարան
 մի առած է: Բայց իմ ինչ հոգը:
 Այս այո կամ ոչի մի համար հողիս
 կը տայի: Օհ! սա դուռը, սա դու-
 ուր ցորեկով տեսներու տարօրինակ
 ազդում մի կընէ ինձ! Այս դրան
 ետեւն էր ան! Ո՛վ: Ո՛վ կար երեկ
 դիշեր այս դրան ետե: Բայց ես ալ
 ստոյգ եմ միթէ որ ան էր: Գոնէ
 այն լրտեսն ալ մէկ մ'ալ չտեսայ:
 Օ! վարան! սոսկալի ուրուական որ
 կը պաշարէ մեզ, ու առանց ժպտելու
 ոչ ալ լալու շիլ աչով մի մեզ կը
 դիտէ: Եթէ ստոյգ ըլնէի որ Ռօ-
 տօլֆօն էր ան, ստոյգ ու ապացոյց-
 ներ ունենայի: Օ! այն ատեն կը
 կորսնցունէի զինքը. Բառէսթան ի-
 մաց կըտայի ամեն բան: Ոչ: Այլ
 այն կինէն կ'առնէի վրէժս: Ոչ:
 Ինքզինքս կըստաննէի: Օ! այո,
 ստոյգ ըլնիմ որ ալ Ռօտօլֆօ չսիրեր
 իս, ստոյգ ըլնիմ որ կը խաբէ իս,
 ստոյգ ըլնիմ որ ուրիշ մէկը կը սի-
 րէ, ալ կեանքը ինչ պիտի ընեմ ես,
 մահը լաւագոյն չէ: Օ! բայց գոնէ
 առանց վրէժ առնելու: Ինչո՞ւ չէ:
 Սակայն հիմակ ասանկ կըսեմ, ու կըր-
 նայ ըլնել որ վրէժ ալ առնեմ, կըր-
 նամ ըսել ինչեր պիտի անցնէր ներ-
 սէս եթէ մէկը հաստատէր ինձ որ այս
 դիշերուան մարդը Ռօտօլֆօն էր: Ա
 Աստուած իմ! Պահէ իս մոլեղնութե-
 նէ մի: Ա Ռօտօլֆօ! Գաղարինա!
 Եթէ այս բանը իրաւ է, ինչ պիտի
 ընեմ: Իրօք! ինչ պիտի ընեմ: Ո՛վ

պիտի մեոցունել տամ, զանոնք թէ
իս: Անճ է գիտեր:

(ԱՆՃԷԼՕ 1:25)

ՏԵՍԱՐԱՆ Ք.

ԼԱ ԹԻՍՊ. ԱՆՃԷԼՕ.

ԼԱ ԹԻՍՊ. — Ի՞նչ ուզեր էք, տէր
իմ:

ԱՆՃԷԼՕ. — Այո, թիսպ: Ասելու
բաներ ունիմ ձեզ, Հատ բաներ:
Նանրակշիռ բաներ: Ինչպէս ըսած
եմ արդէն, կեանքիս մէջ ամեն օր ու
րողայթ մի, ամեն օր մասնութիւն մի,
ամեն օր ընդունելիք դանակի հարուած
մի, կամ տալիք կայիւնի հարուած մի
կայ: Արկու բառով ահա այս է բա
նը: Կինս սիրահար մի ունի:

ԼԱ ԹԻՍՊ. — Որուն անունն է...

ԱՆՃԷԼՕ. — Որ այս գիշեր անոր
սենեակին մէջ է եղեր մեր հոն եղած
ատեն:

ԼԱ ԹԻՍՊ. — Որուն անունն է...

ԱՆՃԷԼՕ. — Ահա ինչպէս երևան
ելաւ բանը: Աուիրակ մի, Տասանց
ժողովին լրտեսներէն մէկը... — Բայց
պէտք եմ այս ալ ըսել որ Տասանց
ժողովին լրտեսները մեզ դէմ — յան
դիման ուրիշ հաստատուն երկրի ու
եզական վիճակով Ռօտէսթաներ են:
Ժողովը կարգիլէ անոնց մեզ դիր գը
րել, մեզ հետ խօսիլ, ու մեզ հետ,
ինչպէս կը ընի ընի, յարաբերութիւն
մ'ունենալ մինչև մեզ բռնելու օրը
գալը: — Ուստի այս լրտեսներէն մէ
կը այս առտու Ալթինա կամուրջին

քով զարնուած դանուեր է: Գիշերա
յին ոստիկանները տեսնելով վերու
ցեր են զան: Մենամարտութիւն մ'է
եղեր այս թէ գարան մի, չգիտցուիր:
Չարնուած մարդը մոնելու վերայ
ըլնելով, երկու բառ միայն կրցեր է
արտասանել. ցուն ան է որ մեռած է
հիմայ: Չարնուած ասեւնը վերան մէկ
նամակ ունի եղեր, զոր ինձ համար
ոստիկաններուն յանձներ է: Այլ իրօք
ալ այս նամակը այն երկու մարդերը
բերին: Ու սիրահար է մի իմ կնոջ
դրուած նամակ մ'է:

ԼԱ ԹԻՍՊ. — Սիրահարին անունն
է...

ԱՆՃԷԼՕ. — Ամա կը ստորագրեալ
է: Սիրահարին անունը կը հարցնէք,
ահա ճիշտ իս ալ շփոթողը այս է:
Սպաննուած մարդը թէպէտ ըսեր է
այս անունը ոստիկաններուն, բայց
մոռցեր են անասունները, ու չեն կըր
նար յիշել: Մէկը Ռօտերիկօ, միւ
սը Ռանտօլֆօ:

ԼԱ ԹԻՍՊ. — Ամա կը վերանիդ է:

ԱՆՃԷԼՕ. — (Նոյն ինքնաբերական
Այո, վերաս է: Ասալ զայն ձեզ
ցուցնել կուզէի, որպէս զի եթէ,
ըստ դիպաց գիրը կը ճանչէք, ըսէք
ինձ:

ԼԱ ԹԻՍՊ. — Տուէք նայիմ:

ԱՆՃԷԼՕ. — (Ամա կը յեռնի ձեզ
հարցնելով.) Բայց սոսկալի անձկութեան
մի մէջ եմ, թիսպ! Այնպէս մարդ մի
կայ որ յանդգներ է — որ յանդգներ է
աչերը Սալիբիէրի մի կնոջ վերայ
վերցնել! Այնպէս մարդ մի կայ, որ
յանդգներ է բիծ մի ընել Ա. Ենետ.

կոյ ոսկիէ մատեանին մէջ, շղեղադոյն էջին վերայ, ուր, Մալիբրիէրի! իմ անունն է! Այնպէս մարդ մի կայ որ այս գիշեր այս սենեակին մէջ է եղեր, որ հոս իմ եղած տեղը քալեր է գուցէ: Այնպէս թշուառական մարդ մի կայ, որ այս նամակը գրեր է, ու պիտի չբռնեմ միթէ ես այս մարդը! ու վրէժս թշնամանացը վերայ պիտի չբեկեմ միթէ! ու ես այս մարդէն այս միւնոյն յատակին վերայ արեան մօր մի պիտի չթափեմ միթէ! ()! տիկին, դիտնալու համար միայն թէ ո՞վ է այս նամակը գրողը, հօրս սուրը, կեանքէս տասն տարի ու աջ ձեռնս կը տայի:

Լ.Ա.Թ.Ի.Ս.Պ. — Բայց ցուցէք նայիմ ինձ սա նամակը:

ԱՆՃԻԼՕ. — ('Սամակը անոր փաշի.) Տեսէք:

Լ.Ա.Թ.Ի.Ս.Պ. — ('Սամակը կը բանայ ու աչէ կ'անցէ: Ինչպիսիքն.) Ո՞ւստօլֆօէն է:

ԱՆՃԻԼՕ. — Ար ճանչէ՞ք միթէ գիւրը:

Լ.Ա.Թ.Ի.Ս.Պ. — Արցէք կարգամ մէկ անգամ: (Ալիբրայ.) " Գաղարին " նա, իմ սրտին սիրականը, կը տես " նե՞ս հիմայ որ Աստուած կը սրահէ " մեզ: Այս գիշեր էրկանդ ու այն կնոջ " ձեռքէն մեր աղատիլն հրաշք մի չէ: (Ինչպիսիքն.) Այն կնոջ! (Կարտուլի շարունակէ.) " Ար սիրեմ քեզ, Գաղարինա, կեանքիս մէջ մի՛նակ սիրած կինս գուն ես: Ինձ համար " անհանգիստ մ'ըլնիր. շատ լաւ վիճակի մէջ եմ: "

ԱՆՃԻԼՕ. — Ե նայինք! Ճանչցա՞ք գիւրը:

Լ.Ա.Թ.Ի.Ս.Պ. — Ոչ, տէր իմ: ('Սամակը անոր կը փայ:)

ԱՆՃԻԼՕ. — Չճանչցաք, անանկ չէ: Իսկ նամակին համար ի՞նչ կըսէք: Այս քիչ ատենէ ի վեր Բաստուա եղող մարդու շնամանիք: Այո, հին սիրոյ մի լեղու է այս: ()! բոլոր քաղաքը տակն-ու-վերայ պիտի ընեմ! ու պէտք է որ դանեմ այս մարդը: Դուք ի՞նչ կըսէք, Թիսպ:

Լ.Ա.Թ.Ի.Ս.Պ. — Փնտրեցէք:

ԱՆՃԻԼՕ. — Պատուիրեցի որ այսօր ձեզմէ ու ձեր եղբորէն զատ մէկը չըկրնայ մտնել աղատ պալատիս մէջ: Որ ուրիշ ամենն ալ բռնուին ու իմ առջին բերուին, զոր ես ինքս պիտի քննեմ: Սակայն վրէժիս կէսն ալ արդէն ձեռնիս մէջն է:

Լ.Ա.Թ.Ի.Ս.Պ. — Ինչպէս:

ԱՆՃԻԼՕ. — Արնս պիտի մեռցունեմ:

Լ.Ա.Թ.Ի.Ս.Պ. — Չեր կինը!

ԱՆՃԻԼՕ. — Ամեն բան պատրաստ է: Մէկ ժամէ առաջ Գաղարինա Պրակատինի պիտի գլխատուի:

Լ.Ա.Թ.Ի.Ս.Պ. — Պիտի գլխատուի!

ԱՆՃԻԼՕ. — Այս սենեակին մէջ:

Լ.Ա.Թ.Ի.Ս.Պ. — Այս սենեակին մէջ!

ԱՆՃԻԼՕ. — Մտիկ ըրէք: Իմ պըղծեալ մահիճը գերեզմանի կը փոխուի: Ուստի պէտք է մեռնիլ այս կինը: Վճռեցի ալ այս բանը: Ու անանկ անաչարաբար որոշեցի որ բան մի չըկրնար գէմը առնուլ: Աղաչանքը բընաւ օգուտ պիտի չընէ, ինչու որ

բարկութիւնն չունիմ սիրտս : Իմ մը-
տերիմ բարեկամը , թէ որ ունենայի
մէկ հատ , եթէ այս կնոջ համար բա-
րեխօս ըլնէր , այո , այս բարեկամին
վերայ կասկած պիտի մտնէր սրտիս
մէջ : Ահա ամեն բան : Թէ որ կուղէք
խօսինք անոր վերայ : Սակայն , Թիսպ ,
կատեմ ես այս կինը ! Անանկ կին մի
որուն հետ միայն ընտանեաց գործե-
րու ու իմ քեռւոյն , Գասթէլլօի ե-
պիսկոպոսին , հաճոյանալու համար
կարգուեցայ ! անանկ կին մի որ միշտ
տրտում է իմ առջին ! ու զաւակ մի
տուած չէ ինձ ! Ասկէ զատ այն ալ
կայ որ ատելութիւնը մեր արեան մէջ ,
մեր ընտանեաց մէջ , մեր աւանդու-
թեանց մէջն է : Պէտք է որ Սալի-
բիէրի մի միշտ մէկը ասէ : Այն օրը
որ Մէն-Վարքի կոթողին աւիւծը
թռնի , ատելութիւնն ալ իւր արոյրէ-
թեւերը կը բանայ ու Սալիբիէրիներ-
ունն արտէն կը թռնի : Իմ հաւը
ծծօ մարքիզը կատեր , ու մէկ գի-
շոր Անետիկի ջրհորներուն մէջ
խեղդել տուաւ զան : Հայրս Անե-
տիկի ընկերհաշտութեան Պատուէր
հոգաբարձուն կատեր , ու Գօռնաո
թաղուհոյն մէկ կոչունքին մէջ թու-
նաւորեց զան : Այս ալ այս կինը կա-
տեմ : Իրեն չարութիւն մի ընելու
միտք չունէի : Բայց յանցաւոր է : Աս
ինչ ընեմ : Կարելի է որ ես իրմէ
լաւ մէկը չեմ , բայց պէտք է որ ան
մեռնի : Հարկ մի , որոշեալ գիտաւո-
րութիւն մի է այս : Պատի կըսեմ որ
այս կինը պիտի մեռնի : Վորս ոսկոր-
ները իսկ ներումն խնդրէին այս կնոջ

համար պիտի չկրնային ընդունիլ :
ԼԱԹԻՍՊ . — Սիթէ Վենետիկի
պերճափայլ տէրութիւնը կը նե-
րէ :
ԱՆՃԵԼՕ . — Կերեղու համար ո-
չինչ : Պատժելու համար ամեն բան :
ԼԱԹԻՍՊ . — Բայց Պրակատինի ,
իւր ընտանիքը :
ԱՆՃԵԼՕ . — Շնորհակալ պիտ'ըլ-
նի ինձ :
ԼԱԹԻՍՊ . — Որոշումնիդ եղած է
կըսէք : Եւ , թող մեռնի : Ար հաւ-
նիմ ըրածնիդ : Բայց ըստ որում դեռ
ամեն բան զաղտնի է , ըստորում դեռ
մէկուն անունը տրուած չէ , չէիք
կրնար միթէ զինքը տանջանէ , պալա-
տըս արեան բիծէ մի ու ձեզ ալ հա-
սարակութեան բերանը անկնելէն պա-
հել : Այս գործոյս մէջ դահիճը վե-
կայ մ'է : Բայց ան ալ չըլնի լաւա-
գոյն չէ միթէ :
ԱՆՃԵԼՕ . — Այո , թոյնը աւելի
աղէկ կըլնէր : Բայց արագ ընթաց թոյն
մի պէտք է , ու հիմայ պիտի չհաւատաք ,
այն տեսակ թոյն չունիմ քովս :
ԼԱԹԻՍՊ . — Ի՞նչ ունիմ :
ԱՆՃԵԼՕ . — Ո՛ր է :
ԼԱԹԻՍՊ . — Տունը :
ԱՆՃԵԼՕ . — Ի՞նչ թոյն է այդ :
ԼԱԹԻՍՊ . — Սալասբինա թոյնը :
Չէք յիշեր այն տուփը որ Մէն-
Վարքի զահերէցը խրկած էր ինձ :
ԱՆՃԵԼՕ . — Այո , հիմայ կը յիշեմ :
Գիտեմ այն ապահով ու արագ թոյն
մ'է : Իրաւունք ունիք , թող ամեն
բան մեր մէջ մնայ : Եւ աւագոյն է :
Ստիկ ըրէ , Թիսպ , բոլոր վստահու-

Թիւնս քու վերայ է : Աւ դուն ալ կը
 հասկնաս ընելու բանիս օրինաւոր ըլ-
 նելը : Իմ պատւոյն համար է որ վիճժ
 կ'առնում, ու ամեն մարդ ալ իմ ըրա-
 ծը պիտի ընէր : Բայց տրտում ու
 դժուար բան մ'է այս . ու քեզմէ զատ
 բարեկամ մի չունիմ, քեզմէ զտոռ մէ-
 կուն չեմ կրնար վստահել : Այս կնոջ
 շուտ մեռնիլը իրեն ալ ինձ ալ պիտա-
 նի է : (Օգնէ ինձ ուրեմն : Ար խընդ-
 րեմ : Ա'օդնե՛ս :

ԼԱԹԻՍՊ . — Այո :

ԱՆՃԵԼՕ . — Թող այս կինը անյա-
 տակուի առանց մէկը գիտնալու թէ
 ինչ կերպով, առանց մէկը գիտնալու
 թէ ինչո՞ւ : Փոս մի կը փորուի, հան-
 գիստ մի կերդուի, բայց մէկը չգի-
 տեր թէ որո՞ւ համար է այս : Մարմի-
 նը նոյն երկու մարդերուն, գիշերային
 պահասաններուն վերջուննիլ կը տամ,
 ու զանոնք ալ բանալիի տակ պահած
 եմ հիմայ : Իրաւունք ունիք, բոլոր
 այս բաները մութով պատենք : Աւ
 ուրեմն, բերել տուէք այն թոյնը :

ԼԱԹԻՍՊ . — Աւր ըլնելը ես միայն
 գիտեմ : Այս ինքս կերթամ :

ԱՆՃԵԼՕ . — Աւրեմն գացէք : Հոս
 ձեզ կըսպասեմ : (Աւ Թիւսի կերեայ .)
 Այո, այս լաւագոյն է, ինչպէս որ
 յանցանքը մութի մէջ եղաւ, թող
 պատիժն ալ մութի մէջ ըլնի : (Աւ-
 թարանին տո՞ւր կը բացուի . աւագերէ-
 յը տո՞ւր կը լինի ակնոր ու յեռերը խա-
 շայն իրարմէն վերայ : Յամբարայն սենեա-
 կէն կանցնի ու խորը եղած տանէն տո՞ւր
 էլնելու ապեն, Անճէլօ անոր կը քառնայ .)
 Պատրաստ է :

ԱԻԱԳԵՐԷՅ . — Այո, տէր իմ :

(Աւագերէյը կերեայ . գարտիկն Աւր-
 թարանին սենեակ վերայ կերեի .)

ՏԵՍԱՐԱՆ Դ .

ԱՆՃԵԼՕ , ԳԱԴԱՐԻՆԱ .

ԳԱԴԱՐԻՆԱ . — Պատրաստ ի՞նչ բա-
 նի համար :

ԱՆՃԵԼՕ . — Մեռնելու :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Մեռնելու ! ուրեմն
 իրաւ է ! ուրեմն կարելի է ! (Օ ! չեմ
 կրնար այս բանը միտք առնուլ ! Մեռ-
 նիլ ! ոչ, պատրաստ չեմ, պատրաստ
 չեմ, պատրաստ չեմ, պարոն :

ԱՆՃԵԼՕ . — Ո՞րքան ատեն պէտք
 է որ պատրաստուիք :

ԳԱԴԱՐԻՆԱ . — (Օ ! չեմ գիտեր,
 շատ ատեն :

ԱՆՃԵԼՕ . — Այսչափ անսիրտ էք,
 տիկին :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Ասանկ շուտ մի մեռ-
 նիլ ! բայց պինտ աղէկ գիտեմ ես որ
 մահու արժանի բան մի ըրած չունիմ .
 Պարոն, պարոն ! օր մ'ալ ! չէ, օր մի
 չէ ! կըզամ որ վաղն ալ սիրտ պիտի
 չունենամ : Բայց ապրիմ ! թող տուէք
 ապրիմ ! Վա՛նք մի ! Ա ! ըսէք, իրաւ
 անհնա՞ր է որ թող տաք որ ապրիմ :

ԱՆՃԵԼՕ . — Այո : կրնամ թողուլ,
 արդէն ըսած եմ, բայց միայն մէկ
 պայմանաւ :

ԳԱԴԱՐԻՆԱ . — Ի՞նչ պայմանաւ :
 Չեմ յիշեր ըսածնիդ :

ԱՆՃԵԼՕ . — Ըսէք, ո՞վ գրեց այս
 նամակը : Տուէք այն մարդուն անունը,
 մատնեցէք այն մարդը :

ԳԵԴԱՐԻՆԱ. — (Չեռնեբը Բալաբեւի.)
Տէր Աստուած!

ԱՆՃԷԼՕ. — Քէ որ այն մարդուն
որ ըլնելը կըսէք, դուք ալ չէք մեռ-
նիր: Մահաբեմը անոր, վանքն ալ
ձեզ, այս բառական է: Արողեցէք ալ
դուք:

ԳԵԴԱՐԻՆԱ. — Տէր Աստուած!

ԱՆՃԷԼՕ. — Ե՛կ չէք սլատասխաներ:

ԳԵԴԱՐԻՆԱ. — Այո, կը սլատաս-
խանեմ: Տէր Աստուած:

ԱՆՃԷԼՕ. — Օ! որողեցէք, օրիկին:

ԳԵԴԱՐԻՆԱ. — Աղօթարանին մէջ
ցուրտ աներ եմ: Մարմինս կը դողայ:

ԱՆՃԷԼՕ. — Մտիկ ըրէք: Չեզ
համար բարեօրոտ կուզեմ ըլնել:
Առջեկե՛ք գեռ ծամ մի ունիք, մէկ
ծամ որ գեռ ձերնէ, որ ատեն մինակ
կը թողում ձեզ: Մէկը չպիտի մանէ
հոս: Այս մէկ ծամը մտմտացէք:
Նամակն ալ սեղանին վերայ կը
դնեմ: Գրեցէք անոր տակ այն մար-
դուն անունը ու կազատիք: Գազա-
րինա Պրակատինի! մարմարէ բերան
մ'է այս խօսողը, սէտք էք մատնել
այն մարդը կամ մեռնիլ: Բնորեցէք
ալ դուք: Գեռ ծամ մի ունիք:

ԳԵԴԱՐԻՆԱ. — Օ! . . . մէկ օր!

ԱՆՃԷԼՕ. — Մէկ ծամ:

Կ'եռնայ:

ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԳԵԴԱՐԻՆԱ. (Քնալ.)

Արդեօք սա դուռը . . . (Գրաւոր էր
բայ.) Օ! զայն ալ կը կղպէ: (Պարտա-

հանը կ'երևայ.) Մա սլատասխանէն . . .
(Գրաւոր էր Կնալ.) Օ! այս ալ ինչ
բարձր է եղեր: (Արտաքինի վերայ կ'առնի-
նի.) Մեռնիլ! Ա Աստուած իմ! ինչ
սոսկալի մտմտութե այս, երբ չստա-
սած ատենդ յանկարծ կը դայ կը բռնէ
քեզ: Ալ միայն մէկ ծամ ունենայ
ապրելու ու ըսել ինքնիրեն. Մէկ
ծամ միայն ունիմ ալ: Օ! սէտք
է այս բաները ձեզ սլատասխան որ Բ-
մանաք ինչ աստիճան սոսկալի են.
բոլոր անդամներս կտոր-կտոր կը լնին:
Այս աթոռին մէջ չեմ կրնար կենալ:
(Կ'եռնէ.) Օ! դուցէ մահճիս մէջ
աւելի հանգիստ կը լնիմ: Գոնէ վայր-
կեան մի դադարում ունենայի! (Գեռ
է մահիճը կ'երևայ.) վայրկեան մի հան-
գիստ! (Արտաքինի կը Բանայ ու անու-
կտ կը Կնալի: Մահիճին արեւ սեղ ծած-
կած կ'ոճղի ու կայինի կայ:) Երկին! . . .
Ինչ են ասոնք հոն: Օ! ասաւոր
բան! (Չընդհան շարժումով մի վար-
ժողը կ'ընէ կը Բողէ.) Օ! չտեսնեմ դու-
նէ: Օ! Աստուած! ինչ համար են
ասոնք: Ա Աստուած իմ! հոս այս
բաներուն հետ մինակ եմ ես: (Միջ-
նոր էր Կնալի.) Ետեւ են! ետեւ!
Օ! չեմ համարձակիր ալ երեսս դար-
ձունել: Հնորհ! շնորհ! Օ! չէ, ե-
րազ չէ այս, բոլորն ալ իրաւ են, զի
ահա հոն, վարադոյրին ետեւ ինչ սլա-
տի ըլնին անոնք:

(Կնալ էր ծածկոյնի Կնալը կը Բողի: Կ-
րօլֆօ կ'երևէ.)

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՔԱՒԱՐԻՆԱՆ, ՌՕՏՕԼՓՕ.

ՔԱՒԱՐԻՆԱՆ. — (Ինչպէ՞ք.) Տէր
Աստուած! Ռօտօլֆօն!

ՌՕՏՕԼՓՕ. — (Այլապէ՞ք.) Այո,
Վաղարինա, ես եմ մէկ վայրկեանի
համար միայն: Մինակէ ես: Ինչ եր-
ջանկութիւն! . . . — բայց բոլորովին
դունաս կերելիս. կերպարանդ շփոթած
է:

ՔԱՒԱՐԻՆԱՆ. — Անշուշտ շփոթած է
ըրբած անխոհեմութիւններուդ համար:
Յորեկ ատեն ասանկ հոս դալ:

ՌՕՏՕԼՓՕ. — Ա! Վաղարինա,
սրտաճառը ան է որ անհանդիստ էի:
Չկրցայ համբերել:

ՔԱՒԱՐԻՆԱՆ. — Ի՞նչ քանի համար:

ՌՕՏՕԼՓՕ. — Հիմայ կըսեմ, անու-
շիկ Վաղարինաս. . . — Ա! Ինչպէս
երջանիկ եմ քեզ հոս այսպէս հան-
դիստ դանելուս:

ՔԱՒԱՐԻՆԱՆ. — Ինտո՞ր կըցիր մըտ-
նել:

ՌՕՏՕԼՓՕ. — Քոս տուած բանա-
լիով:

ՔԱՒԱՐԻՆԱՆ. — Բարի. սալատիս
մէջ ինչպէ՞ս կըցիր մտնել:

ՌՕՏՕԼՓՕ. — Ա! Ճիշտ իս ալ ան-
հանդիստ ընող բաներէն մէկն այդ
է: Վիւրութեամբ մտայ, բայց նոյն-
պէս պիտի չկրնամ ելնել:

ՔԱՒԱՐԻՆԱՆ. — Ինչո՞ւ:

ՌՕՏՕԼՓՕ. — Պաշտօնատեւրը մտած
ատենս իմայ տուաւ որ դիշերէն առաջ
մէկը դուրս պիտի չելնէ:

ՔԱՒԱՐԻՆԱՆ. — Մէկը դիշերէն ա-

ռաջ! (Ինչպէ՞ք.) Փախչելու կերպ մի
ալ չկայ, տէր Աստուած:

ՌՕՏՕԼՓՕ. — Ամեն ճամբաներուն
բերանը նուիրակներ կան: Պալատը
բանտի մի պէս կը պահուի: Բայց ես
կրցայ մեծ ճեմադաւթին մէջ սպրդիլ
ու հոս ճկայ: Իրաւ, կերպնուս որ
հոս բան մի չանցնիր:

ՔԱՒԱՐԻՆԱՆ. — Չէ, բան մի: Հան-
դարտ եղիք, իմ Ռօտօլֆօս: Հոս ա-
մեն բան սովորականին պէս է: Այսէ-
սենեակիս մէջ անկարգ բան մի կայ:
Բայց դուն շուտ դնա: Ար վախեմ որ
հիմայ Բօտէսթան ներս կը մտնէ:

ՌՕՏՕԼՓՕ. — Այո, Վաղարինա,
այն-դիէն մի վախեր: Բօտէսթան
հիմայ վարը Սօլինօ կամուրջին վե-
րայ է: Բանուած մարդիկը կը քննէ:
Օ! անհանդիստ էի, Վաղարինա:
Ամեն բան այսօր, թէ քաղաքը և թէ
սալատս տարօրինակ կերպարան մ'ու-
նի: Աղեղնաւորաց ու զինուորաց զուն-
դեր փողօցները կը ստըտին: Մէնդ-
Անգուան եկեղեցին սեով սրտառած է,
ու մեռելոց հանդիսար կ'երդեն հոն:
Որո՞ւ համար, չգիտցուիր: Վուն դի-
տե՞ս:

ՔԱՒԱՐԻՆԱՆ. — Այո:

ՌՕՏՕԼՓՕ. — Եկեղեցւոյն մէջ չե-
կըցիր մտնել: Ամեն մարդ ցած կը խօ-
սի: Անպատճառ բան մի կ'անցնի մէկ
տեղ: Բայց ո՞ւր: Չեմ գիտեր: Միայն
թէ հոս չէ, ինձ սկստք եղածն ալ այս
է: Վայլեր սիրական! դուրսը ինչ
կըլնի ինչ չըլնի, դուն հոս բանէ
մի լուր չունիս:

ՔԱՒԱՐԻՆԱՆ. — Այո:

ՌՕՏՕԼՔՕ. — Մեր ինչ հոյն է ուրիշ բաներ: Բո՛ւ է նայիմ, այս դիշերուան քաշած վախոգ անցան: ()! Ինչ գէտ! Շիտակը դեռ բան մի չեմ հասկընար անկից: Գաղարինա, քեզ հօմօտէյ անունով նուիրակէն տղատեցի: Ա՛լ վիշտ չկընար տալ քեզ տն:

ԳԵԳԵՐԻՆԱ. — Իրան:

ՌՕՏՕԼՔՕ. — Այո, մեռաւ: Գաղարինա! իրաւ որ բան մի ունիս գուն, կերպարանդ տրտում է: Գաղարինա! Ինչմէ բան մի չեմ պահեր: Բան մի սրտահամ է արդեօք: ()! Ըսէ, դիքեղմէ առաջ իմ հողին ուէտք են առնուլ:

ԳԵԳԵՐԻՆԱ. — Ոչ, բան մի չկայ: Կերպարում որ բան չկայ: Միայն թէ կուզէի որ երթայիր: Քեզ համար սիրաս կը դողայ:

ՌՕՏՕԼՔՕ. — Մտած տեսնո ինչ կընէիր:

ԳԵԳԵՐԻՆԱ. — Ա! տէր Աստուած! հանգարտ եղիր, Ռօտօլֆօ, իրաւ որ տրտում չէի: Կը ջանայի յիշել այն եղանակը զոր այնքան լաւ կերպես: Սայէ, կը տեսնես որ դեռ կիրթաուն ալ քովս է:

ՌՕՏՕԼՔՕ. — Այս առտու նամակ մի գրեցի քեզ, ու Ռէճինէլլաի հանդիպելով, անոր տուի: Անիր:

ԳԵԳԵՐԻՆԱ. — Սամակը այնպէս լաւ հասաւ որ ահա է:

(Նամակը քոչնէ անոր.)

ՌՕՏՕԼՔՕ. — Ա! քովդ է! շատ աղէկ: Այս անհանգիստ էի ասոր համար:

ԳԵԳԵՐԻՆԱ. — Օ! պալատին ամեն

ճամբաները պահուած: Գիշերէն առաջ մէկը դուրս պիտի չեւնէ:

ՌՕՏՕԼՔՕ. — Մէկը, ինչպէս ըսի: Հրաման այս է:

ԳԵԳԵՐԻՆԱ. — Հիմակ ալ ինչ հետ խօսեցար, իս տեսար, ապահով ես: ու կը տեսնես որ եթէ բոլոր քաղաքը շարժման մէջ կը գտնուի, հասամն բան հանգարտ է: Գնա ալ, իմ Ռօտօլֆօս, Աստուծոյ սիրոյն համար! Հիմայ Բօտէսթան ուր է նէ կը դայ: Շուտ գնա, բայց ըստ որում մինչև իրի՛նուն այս պալատին մէջ կենալու տախտակ ես, կեցիր, վերարկուդ ես պիտի վաժմտեմ վերադ: Այսօրէս: Փեղոյրդ ալ ասանկ: Ասիէ զատ նուիրակներուն առջև բնական կերպարանդ պահէ, հանդարտարար, անոնցմէ պահուելու պշրանք մ'ըներ, զգուշութի մի ցուցներ: Չգուշութիւնը կը մասնէ: Ու թէ որ ուզեն, ըստ գիպաց, բան մի գրել տալ քեզ, լրտես մի կամ ուրիշ մէկը որոգայթ մի լարէքեղ, մէկ պատճառ գտիր, ու մի գըրեր:

ՌՕՏՕԼՔՕ. — Ինչո՞ւ այս պատուէրները, Գաղարինա:

ԳԵԳԵՐԻՆԱ. — Ինչո՞ւ: Այս չեմ ուզեր որ քու գիրը տեսնէ մէկը: Չես գիտեր որ կիները երբեմն ասանկ պղտի բաներ կուզեն: Շնորհակալ եմ գալուդ, ու քու տեսութիւնը ցնծութի տուաւ սրտիս: Կը տեսնես ալ որ հանգարտ, զուարթ ու գոհ եմ, կիրթաու ու նամակդ ալ քովս են: Հիմակ ալ շուտ գնա: Կուզեմ որ երթաս: Բա՛ն մ'ալ միայն ըսեմ:

ՔՕՏՕԼՖՕ. — Ի՞նչ:
 ՔԱԴԱՐԻՆԱ. — Որոտօլֆօ, գիտես
 որ մինչև հիմայ բնաւ շնորհ մի չըրի
 քեզ, անանկ չէ:

ՔՕՏՕԼՖՕ. — Ի, բարի:
 ՔԱԴԱՐԻՆԱ. — Այսօր ես պիտի
 ուղեւ քեզմէ: Որոտօլֆօ! համբոյր
 մի!

ՔՕՏՕԼՖՕ. — (Բաշխոյր զՋառնի-
 ւէւնէ.) Օ! երկիրքն է այս:

ՔԱԴԱՐԻՆԱ. — Ինձ համար կը բա-
 ցուի:

ՔՕՏՕԼՖՕ. — Ա երջանիկ թիւն:

ՔԱԴԱՐԻՆԱ. — Երջանիկ ես:

ՔՕՏՕԼՖՕ. — Այո:

ՔԱԴԱՐԻՆԱ. — Հիմակ ալ գնա,
 իմ Որոտօլֆօս:

ՔՕՏՕԼՖՕ. — Շնորհակալ եմ:

ՔԱԴԱՐԻՆԱ. — Երթաս բարով: —
 Որոտօլֆօ: (Որոտօլֆօ որ ինչև զառ-
 քացի է, ինչից.) Կը սիրեմ քեզ:

(ՔՕՏՕԼՖՕ իերևայ.)

ՏԵՍԱՐԱՆ Ե

ՔԱԴԱՐԻՆԱ. (Մինակ.)

Հեռոյ փախչիլ! Օ! մտքէս անցաւ
 այս բանը: Օ! տէր Աստուած. հեռոյ
 փախչիլ! անկարելի: Պարապ տեղ
 վաանողի մէջ պիտի գնեի զինքը: Օ!
 միայն թէ իրեն բան մի չսլատահէր,
 միայն թէ նուիրակները չսունեին զինքը,
 միայն թէ թող տան այս գիշեր պա-
 շտէս գուրս ելնէ: Օ! այո, ասու-
 ցոյց մի չկայ որ անոր վերայ կասկա-

ծիծ: Ազատէ զինքը, Աստուած իմ:
 (Ներքինի զառք իերևայ զի զառք.)
 Գեա՛ր առքին ձայնը կը լսեմ: Իմ ա-
 մենասիրելին կը հեռանայ ալ: Ալ բան
 չլսուիր: Գնա աստուած թեամբ, իմ
 Որոտօլֆօս: (Մէջ զառք ինչից.)
 Երկիր!

(Անճէլօ. Ա. թ. Բ. ինչ յիշէ.)

ՏԵՍԱՐԱՆ Ը

ՔԱԴԱՐԻՆԱ. ԱՆՃԷԼՕ. ԼԱԹԻՍՊ.

ՔԱԴԱՐԻՆԱ. — (Ինչից.) Այո
 կիրք ս'վ է: Ա! գիշերուան կի՛նք:
 ԱՆՃԷԼՕ. — Արշունիկ ըրիք,
 տիկին:

ՔԱԴԱՐԻՆԱ. — Այո, Պարան:
 ԱՆՃԷԼՕ. — Պէտք է մեռնիլ կամ
 այն նամակը գրող մարդը մտանել:
 Այս մարդուն անունը ըսել որոշե-
 ցիք, տիկին:

ՔԱԴԱՐԻՆԱ. — Այս բանին վերայ
 վայրկեան մի անգամ չմտմտացի, սլա-
 րոն:

ԼԱԹԻՍՊ. — (Ինչից.) Բարե-
 սիրտ ու արի կին մ'ես, Գազարինա:

(Անճէլօ նաև ինչև Ա. թ. Բ. ինչ որ անոր առ-
 ձընէ սրտէն ինչից. Անճէլօ անկեւ-
 ցից սեղանին վրայ ինչից.)

ԱՆՃԷԼՕ. — Աւրեմն պիտի խմէք
 այս:

ՔԱԴԱՐԻՆԱ. — Ի՞նչ, թոյն:

ԱՆՃԷԼՕ. — Այո, տիկին:

ՔԱԴԱՐԻՆԱ. — Ա Աստուած իմ! օր
 մի այս մարդը պիտի գտնեմ: Իրեն
 համար ներումն կը խնդրեմ:

ԵՆՃԻԼՕ. — Տիկին, Աւրսէօլօ հազարապետը, Պրակատինիներէն, ձեր հաւերէն մէկը, իւր Մարչէլա կալպախ կինը սպաննել տուաւ սոյն այս կերպով ու միւս նոյն յանցանքի համար:

ԳԵԳԵՐԻՆԱ. — Պարոն, հիմակուանին վերայ խօսինք: Հիմայ մեր խօսքը Պրակատինիներուն վերայ չէ, Գուք վատանուն մէկն էք: Անոր համար, ասանկ թոյնով կը դաք քովս: Յանցաւոր: Այ, չեմ, չէ գոնէ կարծածնուդ չափ: Բայց ինքզինքս արդարացրնելու արժանի չեմ սեպեր ձեզ: Եւ որովհետեւ միշտ կը ստէք դուք, իմ խօսքին ալ պիտի չհաւատաք: Տեսէք, շիտակը, կ'արհամարհեմ ձեզ: Գուք ինձ հետ ստակիս համար կարգուեցաք, ինչու որ հարուստ էի, ինչու որ իմ ընտանիքը մենեաիկի ջրամբարներուն վերայ իրաւունք մ'ունի: Ասոնք գիտելով, ըսիք ինքնիրեն, Սա աղջիկը տարին հարիւր հազար տիւքաթ ունի, կարգուիմ սըւոր հետ: Աւ ըսէք, հինգ տարիէ ի վեր ինչ կեանք ունեցայ ձեզ հետ: Իս չէք սիրեր, բայց կը նախանձիք: Իս բանտի մէջ կը պահէք: Գուք սիրուհիներ ունիք. հրաման կայ ձեզ այս բանը ընելու: Երիկ-մարդեր ինչ որ ընեն սիրելի է: Ինձ հետ միշտ պընդասիրտ, միշտ դաժան: Բնաւ մէկ անուշ խօսք: Միշտ ձեր հայրերուն, ձեր ընտանիքէն եղող տօժերուն վերայ խօսելով, ու իմիններուն մէջ իս վար դարձելով: Ի՞նչ, կը կարծէք որ ասոնք են կին մի երջանիկ ընող բա-

ները: ()! պէտք է մէկը իմ քաշածները քաշէ, որ հասկնայ այն ատեն կնոջ մի վիճակը ինչ ըլնելը: Հատ աղէկ, այո, պարոն, ձեզ ճանչելէս առաջ մարդ մի սիրեցի զոր դեռ կը սիրեմ: Այս բանիս համար դուք իս կը սպաննէք, թէ որ այս իրաւունքը ունիք, պէտք եմք հաւանիլ որ այս մեր ատենը պինտ սոսկալի ատեն մ'է: Ա՛. շատ երջանիկ էք, անանկ չէ, ձեռնիդ նամակ մի, թուղթի կտոր մի, ապացոյց մի ունենալնուդ! բարի: Իս կը դատէք, կը դատապարտէք, ու կը սպաննէք: Մութին մէջ: Գաղտուկ: Թոյնով: Օջորութիւն ունիք: — Բայց այս վատութիւն մ'է! դիտէք: (Այս թիւքալին դառնալով.) Ի՞նչ կը կարծէք այս մարդուն վերայ, տիկին:

ԵՆՃԻԼՕ. — Օյուշացիք...

ԳԵԳԵՐԻՆԱ. — (Այս թիւքալին.) Իսկ դուք, դուք ո՛վ էք. ինձմէ ինչ կուղէք: Աղէկ բան կը կարծէք այս ըրածնիդ: Ամենուն գիացած էրկանս սիրուհին էք, իս կորսնցուցնելու շահ ունիք, լրաեսել տուիք իս, յանցանքի մէջ բռնեցիք ու ոտնիդ վզիս վերայ կը դնէք հիմայ: Սա մարդուն ըրած սոսկալի բանին մէջ կ'օգնէք իրեն: Ո՞վ դիտէ, գուցէ թոյնն ալ հողացողը դուք էք: (Անհեւոյն.) Ի՞նչ կը կարծէք այս կնոջ վերայ, պարոն:

ԼԱԹԻՍՊ. — Տիկին!

ԳԵԳԵՐԻՆԱ. — Հիտակը, երեքնիս ալ պինտ դարձելի երկրէ մի ենք: Սոսկալի ընկերհաշտութիւն մի է այն ուր մէկը անպատիժ թշուառ կնոջ մի վերայ կը քալէ, ինչպէս դուք կընէք,

պարոն, և միսերը կըսեն անոր. Շատ
 աղէկ ըրիր: Պօսքարի իւր աղջիկը
 մեռցնել առաւ, Վօրէտանօ իւր
 կինը, Պրակատինի. . . — Չեղ կը
 հարցունեմ, վաս թաներ չեն ասոնք:
 Այո, բոլոր Վենետիկ այս ժամուս
 այս սենեակին մէջն! բոլոր Վենետիկ
 ձեր երկու անձերուն մէջն է! Յան մի
 շոգակսիր: (Անճեւեճ ցոցնելով.) Վե-
 նետիկ բռնաւոր, ահա: (Անճեւեճ
 ցոցնելով.) Վենետիկ աներես, ահա:
 Աթէ ըսածներուն մէջ շատ ասաջ
 կերթամ, աիկին, յանցանքը ձերն է.
 Ինչո՞ւ հոս կը դտնուիք:

ԱՆՃԻԼՈ. — (Անոր լեւէն բռնելով.)
 Ե, տիկին, լմընայ ալ դործը!

ԳԵՂԱՐԻՆԱ. — (Սեղանին կը ծոթենայ
 որոն վերայ որոնիւ գրոնա՞ է.) Եարի,
 հիմակ ուղածնիդ կը կատարեմ:
 (Չեւեճ կերկնցնէ.) Բոս որում ալ
 պէտք է. . . (Եր կը բռնէ.) Ո՛հ! սոս-
 կալի բան է այս! չէ, չեմ ուզեր,
 բնաւ չեմ կրնար: Եայց մամտացէք
 քիչ մի, երբ դեռ ատեն կայ: Գուք
 որ ամենակոր էք, մամտացէք: Աին
 մի, մինակ, երեսէ ընկած, ախար,
 անպաշտպան կին մի, որ հոս աղղա-
 կան մի, բարեկամ մի, մէկը չունի!
 սպաննել, թունաւորել, անդ թաբար
 իւր տան մէկ անկիւնը: — Մայր իմ,
 մայր իմ, մայր իմ:

ԼԱԹԻՍՊ. — Վայլեր կին:

ԳԵՂԱՐԻՆԱ. — Վայլեր կին ըսիք,
 տիկին, վայլեր կին ըսիք: Օ! այո,
 ըսեցի ես: Օ! մ'ըսէք սր չէ: Ու-
 բեմն կը մեղքընաք իս, տիկին: Օ!
 այո, թող շարժի սիրտդ: Ահա, դուն

ալ կը տեսնես որ իս սպաննել կու-
 ղեն: Գուն ալ հեան ես արդեօք:
 Օհ! չէ, անկարելի բան է այս, ա-
 նանկ չէ: Այո, կուզեմ քեզ մեկ-
 նել բանը: Յետոյ դուն ըսէ Բօ-
 տէսթաին: Ըսէ իրեն որ ըրածը սոս-
 կալի բան մ'է: Իմ ըսելն անտար-
 բեր է իրեն. բայց դուն աւելի աղ-
 դումն կընես: Արբեմն մէկը ճամբու
 բերելու համար օտար անձի մի ըսած
 մէկ բառը բաւական կը ընի: Աթէ
 քիչ մ'առաջ Թշամանեցի քեզ, ներէ:
 Տիկին, յիրաւի դէշ բան մի ըրած
 չունիմ: Միշտ համեստ կեցած եմ:
 Գուն կը նայիմ որ կը հասկնաս ըսա-
 ծըս: Եայց այս բանը չեմ կրնար ը-
 սել էրկանս: Այլիկ — մարդերը չեն
 ուզեր բնաւ հաւատալ մեզ, անանկ
 չէ: Եայց երբեմն շատ իրաւ բաներ
 կըսենք մենք անոնց: Տիկին! մի յոր-
 դորեր իս որ սիրտ ունենամ, կաղա-
 չեմ: Օ! միթէ ստիպեալ եմ այս
 բանին: Տղար ու մեղքնալու կին մի
 ըլնելու ամօթ չեմ սեպեր ինձ: Աս
 ինչ յանցանք ունիմ:

ԱՆՃԻԼՈ. — Տիկին, ալ աւելի չեմ
 կրնար սպասել:

ԳԵՂԱՐԻՆԱ. — Ա! կընդմիջէք
 իօսքս: (Ան թիպէն.) Այոցէք ինչ-
 պէս կընդմիջէ խօսքս: Անիրաւ մարդ!
 Այոցեցաւ որ անանկ բաներ կըսէի որ
 ձեր սիրտն ալ պիտի շարժէր: Ու ա-
 սոր համար կ'արդիլէ որ ըմբոսնեմ
 ըսելիքս: Խօսքս կը կարէ: (Անճեւեճ.)
 Հրէշ մ'էք դուք:

ԱՆՃԻԼՈ. — Ալ հերիք է: Գաղա-
 չինս: Պրակատինի, յանցանքը պատիժ

մի կուզէ, բայուած փոսը դողաղ մի
կուզէ, թշնամանուած էրիկը սօրան-
նուած կիւն մի: Մտածներդ բոլորն ալ
ոչինչ են, կերպնում յանուն Աստու-
ծոյ! (Թոյնը ցոյցնել.) Պիտի առ-
նուք, աիկին:

ԳԵԴԵՐԻՆԵ. — Աճ!

ԱՆՃԵԼՕ. — Աճ: — Հատ աղէկ է
ես ալ իմ առջի զիտաւորութեան կը
դառնամ: Սուրերը! սուրերը! Թոբօր-
ը! Կանչեցէք... Ես կերթամ:

(Ստորի-նկատք մէջ դուռէն դուրս կենէ,
ու դուրսէն ին փոքի զայն:)

ՏԵՍԱՐԱՆ Թ.

ԳԵԴԵՐԻՆԵ. ԼԱԹԻՍՊ.

ԼԱԹԻՍՊ. — Միտ դրէք, աիկին!
Հուտ! վայրկեան մի ունիք միայն:
Քստ որում անոր սիրածը դուք էք,
ուրեմն ալ ձեր վերայ մտմտալ պէտք
է: Բօտէսթան ինչ որ կուզէ ըրէք,
եթէ ոչ կորսուած կը սեպուիք: Ասկէ
աւելի բաց չեմ կրնար մեկնել բանը:
Քիչ մ'առաջ բերնէս վայժեր կիւն!
բառը փախաւ: Բայց դուք զայն խեն-
թի պէս Բօտէսթանն առջև բարձրա-
ձայն կրկնեցիք, որուն կրնար կասկած
տալ այս բանը! Թէ որ մտքինս ը-
սեմ, շատ բուռն վիճակի մէջ էք,
կը վախեմ որ անխոհեմութիւն մի կը-
նէք, ու ամեն բան կը կորսուի: Քրէ
Բօտէսթանն ուղածը: Խամ! Սուրե-
րէն չէք կրնար ազատիլ, կիմանա՞ք:
Ալ զէմ մի կենար: Ասկէ աւելի ինչ

կուզէք ըսեմ: Սիրուած անձը դուք
էք, ու ես կուզեմ որ մէկը շնորհա-
պարտ ըլնի ինձ: Չես իմանար ինչ
ըսել կուզեմ. բարի! բայց այսքան
ալ ըսելով սիրաս կտոր-կտոր կըլնի!
ԳԵԴԵՐԻՆԵ. Տիկին...

ԼԱԹԻՍՊ. — Ինչ որ կըսեն ը-
րէք: Գիմադրութիւն մի, խօսք մի մի
ընէք: Մանաւանդ էրիկնուդ իմ վե-
րայ ունեցած վստահութիւնը մի սա-
սանէք: Կը հասկնա՞ք: Հիմակու-հի-
մայ աւելի չեմ համարձակիր ըսել:
Այո, այս սեռեակիւն մէջ խեղճ կիւն
մի կայ որ պիտի մոռնի, բայց դուն
չես: Գիտա խօսիմ:

ԳԵԴԵՐԻՆԵ. — Ինչ որ կուզէք կը-
նեմ, աիկին:

ԼԱԹԻՍՊ. — Հատ աղէկ: Կը լսեմ
որ կը դայ ինքը: (Մէջ դուռը բա-
ցուելու պէն Լ. Թ. թոյնը դուրս է հան ին
վազէ.) Մինակ! մինակ! մինակ մտէք օ-
տէր իմ:

(Բռնի սեռեակիւն մէջ մեր ստեղծուած նորոգի-
նէր ինքեմ: Անձեւս ներս ին փոքի:
Դուրս ին փոքի.)

ՏԵՍԱՐԱՆ Ժ.

ԳԵԴԵՐԻՆԵ. ԼԱԹԻՍՊ. ԱՆՃԵԼՕ.

ԼԱԹԻՍՊ. — Թոյնը խմելու կը հա-
ւանի, տէր իմ:

ԱՆՃԵԼՕ. — (Գ. դուրսէն.) Ուրեմն
չուտ, աիկին:

ԳԵԴԵՐԻՆԵ. — (Սրտուիլը արեւել-
լ. Թ. թոյնը.) Գիտեմ որ դուն էր-
կանս սիրուհին ես: Եթէ միտքդ մաս-

նու թեամբ իս կորսնցունելով, իմ տեղն անցնիլ է, շատ անիրաւ ու դարձելի գործ մ'է, տիկին, ըրածդ և թէպէտ քսան երկու տարու մեռնիլ գտնէ, բայց ես լաւադոյն կը սկսեմ իմ ըրածը քան թէ քու :

(Այլ էրնէ :)

ԼԱԹԻՍՊ. — (Ինքնիքն.) Որչափ անսխտան թօսք, տէր Աստուած :

ԱՆՃԵԼՈ. — (Պէտք է յիշուի զորոշ երեւոյթ — կէս — քանակով շոյն.) Ա՛յ գայէք գուք :

ԳԱԴԱՐԻՆԱ. — Ա՛յ այս խմելիքը արիւնս կը սառեցնէ : (Անպիտակ լինելու հետ զրոյշ.) Ա՛յ տիկին : (Անճեւոյն.) Հիմայ գոհ էք, պարոն : Ա՛հա կղզամ որ մահս մօտ է : Հիմակ ալ չեմ վախեր քեզմէ : Ու կըսեմ քեզ, որ իմ սատանան ես, ինչպէս քիչ միէն Աստուծոյս ալ սխտի ըսեմ, այո, մարդ մի սիրեցի, բայց ամբիժ եմ :

ԱՆՃԵԼՈ. — Չեմ հաւատար, տիկին :

ԼԱԹԻՍՊ. — (Ինքնիքն.) Ե՛ս կը հաւատամ :

ԳԱԴԱՐԻՆԱ. — Օ՛հ սիրտս կը մարի... Չէ, Չեմ ուզեր այդ աթոռը : Մի դպիք ինձ : Արդէն ըսի, գուն վատանուն մարդ մ'ես : (Տարանելով քեզ ինչպէս ինչպէս.) Ա՛հա, հոն, ծունկի վերայ, հոն, այն սեղանին առջև կուզեմ մեռնիլ : Մեռնիլ մի՛նակ, հանգիստ, առանց քու երկու աչերը իմ վերայ ունենալու : (Պէտք է հասնել ինչպէս ինչպէս.) Կուզեմ մեռ-

նիլ Աստուծոյ աղօթելով : (Անճեւոյն.) Քեզ համար, պարոն :

(Անճեւոյն ինչ յիշէ :)

ԱՆՃԵԼՈ. — Թորո ի լօ ! (Ոստիկան ինչ յիշէ.) Գրպանիս մէջէն գաղտնի սըրահիս բանալին առ : Այն սրահին մէջ երկու մարդեր կան : Օ՛հնոնք հոս բեր առանց բան մի ըսելու իրենց : (Ոստիկանը կերպար : Լինելու հետ.) Պէտք է հիմակ երթամ բռնուած մարդերը քննեմ : Երկու պահապաններուն հետ խօսելէս ետեւ, իմիսպ, մնացած բաները ընելու հոգը քեզ կը յանձնեմ : Բայց գաղտնիք :

(Ոստիկանը երկու պահապաններու ինչ բերէ ու բռնէ կերպար :)

ՏԵՍԱՐԱՆ ԺԱ :

ԱՆՃԵԼՈ, ԼԱԹԻՍՊ, ԵՐԿՈՒ ՊԱ, ՀԱՊԱՆՆԵՐ :

ԱՆՃԵԼՈ. — (Երկու պահապաններուն.) Գուք շատ անգամ այս պալատին մէջ սպաննու թիւններու ծառայած էք : Գիտէք ուր է այն դետնափորը ուր դերեղ կանները կան :

ԵՐԿՈՒ ՊԱՀԱՊԱՆՆԵՐԻՆ ՄԵԿԸ. — Այո, տէր :

ԱՆՃԵԼՈ. — Կոյ անանկ գաղտնի ճամբայ մի, որ այսօր, սր պալատ զօրահաններով լեցուն է, կարենաք իջնել հոն ու յետոյ ելնել առանց մէկէ տեսնուելու :

ՊԱՀԱՊԱՆ ՄԻ. — Կը մտնենք կեղնենք առանց մէկէ տեսնուելու :

ԱՆՃԷԼՕ. — Հատ աղէկ : (Աղբա-
 բանին դուրսը ինչ կէս-բանայ .) Հոն մե-
 աած կիին մի կայ : Այն կիինը գաղ-
 աուկ զետնափորը պիտի իջեցնէք :
 Հոն վերուցած քար մի ու փորուած
 փոս մի կը գտնէք : Աինը այն փոսին
 մէջ կը գնէք , քարն ալ վերան : Հաս-
 կըցա՛ք :

ՊԱՀԱՊԱՆ ՄԻ. — Այո , տէր :

ԱՆՃԷԼՕ. — Հիմակ իմ սենեակէն
 ահայնելու ստիպեալ էք : Արթամ հոն
 եղողները գուրս հանեմ :

(կէտնայ)

ԼԱԹԻՍՊ. — (Գրգռանէն քանի ճի հա-
 նելով , երկու պահապաններուն .) Այս քը-
 սակին մէջ երկու հարիւր ոսկի կայ
 ձեզ համար , ու վաղը առտու ասոր
 կրկինը թէ որ ըսածս լաւ կերպով
 կատարէք :

ՊԱՀԱՊԱՆ ՄԻ. — (Քուլը առնելով .)
 Հատ աղէկ , տիկին : Ուր պէտք է
 երթալ :

ԼԱԹԻՍՊ. — Առաջ զետնափորը :

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆ

Մեկ գիշերային սենեակ : Խորը , ջարագոյրներոջ մեկ մահիճ : Մահճին ամեն-
 մեկ գիշեր մեկ-մեկ դուռ , աջ-ճիի դուռը սրահակին մեջ կեցծեալ : Սեջաններ ,
 կարասիներ , աթոռներ , որոնց վերայ տակն-ու-ջերայ կան , դիմակներ ,
 ջոջահարներ , կես-բաց գոհարատուփեր ու թատրոնի ջգեստներ :

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ԼԱԹԻՍՊ. Երկու Պահապաններ ,
 Տէր սե Սանկլա-իկ . ՊԱՂԱՐԻՆԱ սա-ա-
 նով մի պարեալ և մահճին վերայ , Երո-ած-
 ի-ր կո-րծիկ վերայ պղնձեայ խաչելո-
 թի-նը կերեի :

(Լա Թիսպ հայտէ ճը կտուտու ու Գարգռանէի
 գոնապ երեւը ինչբանայ :)

ԼԱԹԻՍՊ. — (Սե Սանկլա-իկին .)
 Ճրագը հոս մտնեցուր քիչ մի : (Հայ-

լին Գարգռանէի պահ-աններուն առջե-
 կը Ենէ .) Հանդարտ եմ : (Սահճին
 վարագոյրերը կը գոյէ : — Արկու-պահա-
 պաններուն .) Այահո՛վ էք որ պալատէն
 մինչև հոս եղած ճամբուն մէջ մէկը
 չտեսաւ ձեզ :

ՄԵԿ ՊԱՀՊ. — Գիշերը շատ մութ
 է , տիկին : Այս ժամուս փողոցները
 մարդ չգտնուիր : Դուք ալ զիտէք
 որ մէկուն չհանդիպեցա՛ք : Գաղաղը
 փոսին մէջ գնելնիս ու նոյնը քարով

դոցելնիս տեսաք: Բանէ մի մի վախէք: Այն կնոջ մեռած ըլնելը մենք չենք գիտեր, բայց այն որ իրաւ է, ամենուն համար գերեզմանին մէջ կնքեալ է ան: Աւղածնիդ կրնաք ընել:

ԼԱԹԻՍՊ. — Հատ աղէկ: (Մանկլա-իկն.) Ո՛ր են այն էրիկ-մարդու լաթերը զոր սպարաստ ունենաս ըսած էի:

ՄԱՆԿԼԱԻԿ. — (Մենեակն Տէի անկի-նը ծրար Տէր-յնէլը.) Ահա, հոն են, տիկին:

ԼԱԹԻՍՊ. — Աւղած երկու ձիերս ալ վաճրն են:

ՄԱՆԿԼԱԻԿ. — Այո. թամբուած ու երասանակուած:

ԼԱԹԻՍՊ. — Աղէկ ձիեր:

ՄԱՆԿԼԱԻԿ. — Այո, տիկին:

ԼԱԹԻՍՊ. — Բարի: (Պահապանէր-ն.) Բէք հիմայ դուք ինձ, որքան ստեն սկտք է լաւ ձիերով Վննետիկի տէրութենէն ելնելու համար:

ՄԷԿ ՊԱՀԱ. — Կարճագոյն ճամբան, տիկին, Սոնթէ Պազդօ երթալ է, որ Պասլին կը վերաբերի: Ասոր համար արագընթացքով երեք ժամ սկտք է:

ԼԱԹԻՍՊ. — Այս բաւական է: Գացէք ալ: Այս ամեն եղածներուն վերայ լռութիւն, ու վաղն առտու եկէք վարձերնիդ ընդունելու: (Արի-պահապանները կ'երթան: — Մանկլա-իկն.) Դուն ալ գնա տան դուռը դոցէ, ու մէկը, ինչ սպարաստաւ կուզէ ըլնի, ներս մ'առնէր:

ՄԱՆԿԼԱԻԿ. — Պարոն Ռօստըֆօն,

տիկին, զան ալ սկտք չէ՞ առնուլ ներս:

ԼԱԹԻՍՊ. — Չէ: Ան թող դայ: Բայց միայն այն, ու բնաւ ուրիշ մէկը: Հողդ այն ըլնի որ մէկը չ'կըրնայ մտնել հոս մանաւանդ Ռօստըֆօնին հոս եղած ատեն: Դուն անգամ զգուշացիր որ միայն կանչած ատենս ներս մտնես: Հիմակ ալ գնա:

(Մանկլա-իկ կ'երթայ:)

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԼԱԹԻՍՊ. ԳԱԲԱՐԻՆԱ (Սահման Տէ.)

ԼԱԹԻՍՊ. — Կարծեմ ալ սպասելու երկար ատեն չմնայ: — Չէր ուզեր մեռնիլ: Ասոր սպարաստը յայտնի է. երբ մէկը գիտէ որ սիրող մի ունի, անշուշտ չուզեր մեռնիլ! — Բայց ինձ համար մեռնիլ քանթէ առանց անոր սիրոյն ասլորի: (Բեռ է մահիճը դարձուլ.) (O! ուրախ սրտով պիտի մեռնէիր, անանկ չէ, թէ որ սէրը չըլնէր: — Գլխուս մէջ բան մի կը հընչէ: Արեք դիշեր է որ աչքս քուն մը տած չունի: Արեկ չէ միւս օր այն հանգէսը կար, երէկ այն ժամագիր տեղը, ուր դանոնք բռնեցի. այսօր... (O! վաղը դիշեր կը քնանամ! (Իբր շարժը եղած Բարոնի զգեստներուն վերայ կը նայի հեղձի.) (O! այո, շատ երջանիկ ենք մենք! Թատրոնին մէջ կը ծափահարեն մեզ: Ինչ լաւ խաղացիր Ռօստօնտան, տիկին, կըսեն ամեն գիէ: Անմիտներ! Այո, կը զարմանան մեր

վերայ, աղորկը դանկն մեղ, ծաղիկ-
 ներով կը պատեն մեղ, բայց մեր սրբ-
 ան արիւն կերթայ, այն շէն գիտեր:
 Օ! Ռօտօլֆօ, Ռօտօլֆօ: Իւր սիրոյն
 հաւատալ, իմ կեանքին պիտանի բան
 մ'էր այս: Այն ատեն որ իւր սիրոյն
 կը հաւատայի, ստէպ կը մտմտայի որ
 մեռնելու ատենս իւր քով մեռնիմ,
 մեռնիմ անանկ մէկ կերպով, որ անկա-
 բելի ըլնէր իրեն իմ յիշատակը սրբ-
 ան հանել, որ իմ ստուերը միշտ
 իւր քով կենար միւս կիներուն մէջ:
 Օ! մահը բան մի ըսել չէ: Մտա-
 ցումը, ահա ամեն բան, Աս չեմ
 ուզեր որ ան իս մտնայ: Վայ ինձ!
 նայէ մէկ հեղ մինչև ս'ը հասայ! նայէ
 մէկ հեղ ս'ը անկայ, նայէ մէկ հեղ
 մինչ ըրաւ աշխարհ ինձ համար, նայէ
 մէկ հեղ սէրը ինչ ըրաւ ինձ: (Գեղ-
 ի ճանիճը կ'ըլլայ. վարդոյրը թի-
 կ'անո. ինչ թի արեւն Գարդիանն կը
 գիտէ ու յետոյ իսկը-թի-նը կ'անո-
 յիմ: Օ! եթէ այս խաչն լուծիւնը երջան-
 կու թիւն բերաւ մէկուն այս աշխարհիս
 մէջ, այն քու աղջկանդ չէ, մայր իմ:

(Կառ եւրօպայի սեղանին վերայ իւր քնն: կե-
 ծեւը Գարդիանն իւր քնն: Ռօտօլֆօ իւր քնն:)

ՏԵՍԱՐԱՆ Գ.

Ա.Ե.Թ.Ի.Ս.Պ. Ռ.ՇՏՕԼ.ՖՕ. Գ.Ե.Բ.Ե.
 Բ.Ի.Ն.Ե. (Միշտ քոյ ճանճին մէջ.)
 Ա.Ե.Թ.Ի.Ս.Պ. — Ա! դուն ես, Ռօտօլ-
 ֆօ: Շատ աղէկ. ըսելու քաներ ու-
 նիմ քեզ: Մտիկ ըրէ:

ՌՕՏՕԼ.ՖՕ. — Աս ալ ըսելու քաներ
 ունիմ, և դուն մտիկ պիտի ընես ինձ,
 տիկին:
 Ա.Ե.Թ.Ի.Ս.Պ. — Ռօտօլֆօ...
 ՌՕՏՕԼ.ՖՕ. — Մինակ ես հաս, տի-
 կին:
 Ա.Ե.Թ.Ի.Ս.Պ. — Մինակ եմ:
 ՌՕՏՕԼ.ՖՕ. — Պատուէր տուր որ
 մէկը ներս չմտնէ:
 Ա.Ե.Թ.Ի.Ս.Պ. — Տրուած է արդէն:
 ՌՕՏՕԼ.ՖՕ. — Կերէ սա երկու դու-
 րերն ալ գոցեմ:
 (Երեւոյն իւր իւր:)
 Ա.Ե.Թ.Ի.Ս.Պ. — Ըսելու քանիդ ինչ
 ըլնելը կիմանամ, Ռօտօլֆօ:
 ՌՕՏՕԼ.ՖՕ. — Ուրկէ կը դաս: Ին-
 չն. դունաս ես: Ասէ, ինչ ըրիք այս
 օր: Ինչ ըրին այդ ձեռները: Ո՞ր
 անցուցիք այսօրվան դարչելի ժամերը:
 Չէ, մ'ըսեր: Աս կըսեմ: Պատաս-
 խան մի տար, մ'ուրանար, մի հնարեր,
 մի ստեր: Ամեն բան գիտեմ! Ամեն
 բան գիտեմ. կըսեմ քեզ տիկին:
 Տափնը հոնէր, ձեզմէ երկու քայլ
 անդին: Գաւառով մի միայն բաժնուած
 ձեզմէ: Աղօթարանին մէջ Տափնը
 կար, որ ամեն բան տեսաւ, որ ամեն
 բան լսեց, որ հոն էր, քովը, մտիկ,
 որ կը ըսէր, կը տեսնէր: — Ու ահա
 ասոնք են ձեր ըսած խօսքերը: Բօ-
 ւէսթան կըսէր. թոյն չունիմ. դուն
 ալ ըսիր. Աս ունիմ: — Աս ունիմ!
 տիկին, ես ունիմ: Ըսիր մի, ըսէ,
 այո կամ ոչ: Ստէ քիչ մի նայիմ: Ա!
 դուն թոյն ունիս: Շատ աղէկ. ես
 ալ դանակ մ'ունիմ:
 (Ծոզելն քանի մի իւր քնն:)

ԼԱԹԻՍՊ. — Ռօտօլֆօ . . .

ՌՕՏՕԼՖՕ. — Մեռնելու սրտորաստուելու համար, քառորդ մ'ունիս միայն, տիկին :

ԼԱԹԻՍՊ. — Ա! կըսպաննես իս : Ա! առջի մտքէդ անցած բանը այս է : Ասանկ շուտ առանց մտիկ ընելու, առանց լաւ մի ստոյգ ընելու կուզես սպաննել իս : Այսպէս որոշում մի ասանկ գիւրուծեամբ կընաս ըծել ! Ասկէ աւելի չեմ արժեք քովդ : Իս մէկ ուրիշի սիրոյն համար կըսպաննես : Ո Ռօտօլֆօ ! իրաւ է ուրեմն այս, ըսէինք քու բերնով, ուրեմն բնաւ չսիրեցիր իս :

ՌՕՏՕԼՖՕ. — Բնաւ :

ԼԱԹԻՍՊ. — Բարի ուրեմն, ահա այդ բանն է որ կըսպաննէ իս, անդուծ ! դանակդ լըմնցած դործ մի պիտի կատարէ :

ՌՕՏՕԼՖՕ. — Քեզ համար սէր մի ! Ես : Այլ, չունիմ, բնաւ չունեցայ : Գոնէ այս բանին վերայ կընամ պարծիլ : Այլ միայն դուծ մի :

ԼԱԹԻՍՊ. — Անսիրտ : Ա! բառ մի ալ ըսէ, զան շատ կը սիրէիր :

ՌՕՏՕԼՖՕ. — Օհան ! կը սիրէի մի ! զան ! Օ ! մտիկ ըրէ, ըստորում այս քու տանջանն է, թշուառական : Այո, կը սիրէի զան, իբրև անարատ, սուրբ, նուիրական բան մի, կին մի, որ խորան մի է, իմ կեանքը, իմ գանձը, իմ սիրտու թիւնը, իմ մտածութիւնը, իմ աչերուն լոյսը, ահա այսպէս կը սիրէի զան :

ԼԱԹԻՍՊ. — Եւրեմն աղէկ եմ ըրէր :

ՌՕՏՕԼՖՕ. — Աղէկ մի ըրերես :

ԼԱԹԻՍՊ. — Այո : Աղէկ եմ ըրեր : Բայց ինչ ըսել կուզեմ կը հասկնաս, Ռօտօլֆօ :

ՌՕՏՕԼՖՕ. — Կը հասկնամ մի կըսես : Բայց հաճոյ հոն էր, հաճոյ հոն էր կըսեմ քեզ, ու ըսածները դեռ ահանջիս մէջն են : — Պարոն, սարոն, սենեակին մէջ միայն երեք հողի էին. ան, Բօտէսթան և ուրիշ կին մի, սոսկալի կին մի զոր Բօտէսթան թիսպ կը կոչէր : Պարոն, ճիշտ երկու ժամ ոգեվարքով, անդ թուծեամբ հոն կեցուցին զինքը : Այլ վեր կինը կը լար, կաղաչէր, կը պաղատէր, շնորհ կը հայցէր, կեանքը կը հայցէր : — Ահա քեզ կը հայցէիր, անուշիկ Գադարինաս . — ծունկի վերայ, ձեռները կցած, անոնց ոտքը անկնելով, և անոնք չէ, կըսէին : Թոյնն ալ բերողը թիսպ կինն էր, ու ինքն էր տիկինս ստիպողը որ իմ : ու խեղճ մեռած մարմինն ալ, պարոն, այն կինը, այն հրէշը, Աս թիսպն էր որ տարաւ : — Ո՛ր դրիք զայն, տիկին : — Հիմակ ալ կընաս ըսել որ չեմ հասկնար : (Օոցէն Բաշկէն) Ռո՛ւ է այս թաշկինակը զոր Գադարինասի սենեակէն դտայ : Քու : (Բաշկէն-Բիշկէն ցոցէն) Այս խաչելութիւնը զոր հոս կը գանեմ, որու է : Անոր . — Այո, ստոյգ եմ, է նայիմ, աղաչէ, լաց, սրտա, շնորհ հայցէ, շուտ ըրէ ընելիքդ ու լմնայ գործը :

ԼԱԹԻՍՊ. — Ռօտօլֆօ . . .

ՌՕՏՕԼՖՕ. — Ինչպիսիքդ արգարա-

ցընելու համար ի՞նչ ունիս ըսելու :
Շուտ , խօսէ . ատեն չանցնի :

ԼԱԹԻՍՊ . — Աչինչ , Ռօտօլֆօ : Ամեն ըսածնին իրաւ է : Հաւատա ամենուն . Ռօտօլֆօ , ճիշտ ատենին հասար . ես ալ մեռնիլ կուզէի : Քուքով , քու ոտներուն տակ մեռնելու կերպ մի կը փնտրէի : Քու ձեռքէն մեռնիլ : Օ ! ուզածէս աւելի է այս : Քու ձեռքէն մեռնիլ : Օ ! դուցէ թելերուդ մէջ կ'անկնիմ : Շնորհակալ եմ : Ապահով եմ գոնէ հիմակ որ իմ վերջին խօսքը պիտի ըսես : Իմ վերջին շունչը , որչափ չես ուզեր , պիտի տեսնես : Այո , Ռօտօլֆօ , ալ ես ապրելու պէտք չունիմ : Գուն չես սիրեր իս , սպաննէ ուրեմն : Հիմակ ալ այս բանը կրնաս ընել ինձ համար : Աւրեմն իմ հոգն վերագ կառնուս , իմ Ռօտօլֆօս , անանկ չէ : Շնորհակալ եմ :

ՌՕՏՕԼՖՕ . — Տիկին . . .

ԼԱԹԻՍՊ . — Բան մի պիտի ըսեմ : Մէկ վայրկեան միայն մտիկ ըրէ ինձ : Այո , ես միշտ ցաւալի եղած եմ : Մի կարծեր որ պարզ բառեր են ըսածներս , ոչ , ուռած հէգ սիրտ մ'է այս որ կը յորդի : Մեզ նմանները մէկը չմեղքնար , ու այս անիրաւ բան մ'է : Չեն գիտեր որ մեր մէջ շատ անգամ ինչ առաքինութիւններ և ինչ արիութիւններ կը դանուին : Ի՞նչ , կը կարծես որ ապրելու շատ փափաք ունիմ : Բայց մտամտա հեղ մի որ ես պզտիկութեանս կը մուրայի , ու յետոյ տասն վեց տարու եղած ատենս առանց հացի իսկ մնացի : Մեծ մարդեր փողոց-

ներէն վերուցին իս : Մէկ դայուէն միւս դայուին մէջ գլորեցայ . անօթութեան ու շուայտութեան : Աւրիշները , սովամահ եղիք , կըսեն մեզ : Մեզ համար բնաւ դուր չկայ : Օ ! այո , ամեն դուր մեծ տիկիններու համար է : Աթէ լան անոնք , կը սիտփութին : Աթէ շար բան մի ընեն , կը ներուին : Բայց և այնպէս դարձեալ դանդաղ բերանուն պակաս չէ : Իսկ մենք , մենք ամեն բանի արժանի ենք : Ամենէն կը թշնամանուինք : Հէգ կին ! բանդ նայէ . յառաջ քալէ միշտ . ինչ բանի համար կը դանդաղտիս : Ամեն բան քեզ դէմ է : Ալ միթէ վիշտ քաշելու համար ծնած չե՞ս դուն , աղջիկ հաճութեան : — Ռօտօլֆօ , դուն ըսէ , իմ վիճակին մէջ սիրտս հասկըցող սրտի մը պէտք չունէի : Արք չունիմ մէկը որ իս սիրէ , ըսէ նա . յիմ , ինչ կուզես ըլնիմ : Այս բաները սիրտդ շարժելու համար չեմ ըսեր , ինչ օգուտ ալ : Ալ ամեն բան լնցած է : Բայց ես կը սիրեմ քեզ : Ահա վեց ամիս է որ իրար կը ճանչենք , անանկ չէ : Վեց ամիս է որ քու հայուածքը իմ կեանքը ըրած եմ , քու ժպիտը իմ ուրախութիւնը , քու շունչը իմ հոգին : Բայց դարձեալ վեց ամիսէ ի վեր չունեցայ այն մտածութիւնը , այն կեանքին պիտանի մտածութիւնը , որ դուն ալ կը սիրես իս : Գիտես որ իմ նսխաններովն միշտ անհանգիստ կընէի քեզ , հազար պատճառներ ունէի որ կը շփոթէին իս . հիմայ ամեն բան մեկնուեցաւ : Գիտեմ որ

եթն տարիէ ի վեր մտածութիւնդ
այն կնոջ վերայ էր : Իսկ ես քեզ
համար մէկ զքօսանք մէկ դեղե-
րուն էի միայն : Այս յայտնի բան
է : Ասոր համար ալ գէշ չեմ ան-
ցուներ մտքէս : Բայց ինչ կուզես
որ ընծիմ : Իմ հետ ասանկ վարուիլ,
առանց քու սիրոյն ապրիլ ալ չեմ
ուզեր : Իրաւ ապրիլը անուշ է,
բայց ես ալ քեզմով կրնայի ապրիլ :
Սակայն կը նայիմ որ մտիկ ալ չես
ըներ : Ինչ, միթէ ըսածներս ձանձ-
րութիւն կը տան քեզ : ()! Երբաւի
անանկ թշուառ եմ որ եթէ մէկը
տեսնէր իս այսպէս կը մեղքնար :

ՌՕՏՕԼՓՕ . — Այո ստոյգ եմ :
Բօտէսթան նուիրակները կանչելու
դնաց , այն ատեն դուն անոր ցած
ձայնով սոսկալի բաներ ըսիր , որ
թոյնը խմել տուին անոր : Տիկին , դընիս
մէջ ամեն բան տակն—ու—վերայ կը լ-
նի : Տիկին , ուր է Գաղարինա : Պա-
տաթան տուր : Իրաւ ճշմարիտ է ,
տիկին , որ թունաւորեցիր , որ սպան-
նեցիր զայն : Ա՛ւր է , ըսէ , ո՛ւր է :
Գիտե՞ս միթէ որ աշխարհիս մէջ սի-
րած մինակ կինս էր այն , տիկին ,
մինակ , մինակ , կը լսե՞ս : Մինակ :

Լ.Ա.Թ.Ի.Ս.Պ. — Մինակ , մինակ : ()!
չարութիւն մ'է այսքան դանակի հար-
ուածներ տալ : Կաղաչեմ (յե—սի Գա-
նակը կը յո—ջնէ) շուտ վերջինն ալ ա-
սով աուր :

ՌՕՏՕԼՓՕ . — Ա՛ւր է Գաղարինան ,
բիրած մինակ կինս : Այո , մինակ :

Լ.Ա.Թ.Ի.Ս.Պ. — Ա՛յն դուրս ես , սիր-
ւորս կառք—կտոր կը նես : Բարի ու-

րեմն , այո , կատեմ ես այն կինը , կը
լսե՞ս , կատեմ ես զան : Այո , իրաւ
ըսեր են քեզ , վրէժս առի , թունաւո-
րեցի մեռցուցի զան :

ՌՕՏՕԼՓՕ . — Ա՛յ բերնովդ կը սես :
Ա՛յ կը խոստովանիս : Ա՛յ կը սարծիս
ալ , թշուառական :

Լ.Ա.Թ.Ի.Ս.Պ. — Այո , ինչ որ ըրի
դարձեալ կը նեմ : Օ՛արկ :

ՌՕՏՕԼՓՕ . — (Ա՛յ—նէ .) Տիկին !

Լ.Ա.Թ.Ի.Ս.Պ. — Մեռցուցի զան , կը
սեմ քեզ : Օ՛արկ !

ՌՕՏՕԼՓՕ . — Թշուառական !

(Կը սարնէ) :

Լ.Ա.Թ.Ի.Ս.Պ. — (Կ՛նչնէ .) Ա՛յ սըր ,
տիս ! Սրտիս զարկիր : Բարի : — Իմ
Ռօտօլֆօս ! ձեռնդ : (Ա՛յր յե—նը կը
բռնէ ու պահէ :) Ե՛նոր հակալ եմ :
Ազատեցիր իս : Թող տուր ձեռնդ
ինձ : Մի վախեր : Իմ Ռօտօլֆօս ,
հողւոյս սիրականը , ներս մտած ատե-
նըդ չէիր տեսներ ինքզինքդ , բայց
անանկ կերպով մի ըսիր : Մէկ քա-
ռորդ ունիս , դանակդ վերցունելով ,
որ ալ անկէ ետե չէի կրնար ապրիլ
ես : Հիմակ որ ալ պիտի մեռնիմ ,
մեղքցիր , դժոյ բառ մի ըսէ ու աղէկ
կը նես :

ՌՕՏՕԼՓՕ . — Տիկին . . .

Լ.Ա.Թ.Ի.Ս.Պ. — Ա՛նուշ խօսք մի չե՞ս
ըսեր :


(Մահճին մէջ շարագրերուն ետեւն յայն
ժ իւր տի :)

ԳԱՅԱՐԻՆԱ . — Ա՛յր եմ : Ռօտօլֆօ :

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page. The text is arranged in several paragraphs, with some lines appearing to be headings or section markers. The ink is very light and difficult to discern against the aged paper.

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page. The text is arranged in several paragraphs, with some lines appearing to be headings or section markers. The ink is very light and difficult to discern against the aged paper.

4572



2137

2013

